Հայկական գիտահետազոտական հանգույց

Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

ՍԻՆԿԼԵՐ

ՋՈՒՆԳԼԻ



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

«ՄՈՒՐՃ և ՄԱՆԳԱՂ»

ՄՈՍԿ. ՀԱՅ ՊՐՈԼԵՏ.-ԳՐՈՂ.Ա.

82
Ս-51

82 | 5635
Ս-51 | Սիրավեպերի
Զոհրագլի

ՈՒ. ՍԻՆԿԼԵՐ

ՋՈՒՆԳԼԻ

Ռուս. թարգմ.
Կ. Ղ.

Խմբագրութիւն
Վ. ՎԱՆԴԻԿ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
"ՄՈՒՐՃ ԵՒ ՄԱՆԳԱՂ"

ՄՈՍԿՎԱ 1923

ՍՏՈՒԳՎԱԾ Է
1952 Թ.

8609

5635

5

ՁՈՒՆԳԼԻ

Համառօտագրւած թարգմանութեան իրաւունքը եւ նկարների կլիշէները վերցւած են Главполитпросвет-ի „Красная Новь“ հրատարակչութիւնից.

I

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Իւրգիսը լիտվին էր։ Նրա հայրը, պապը և բոլոր նախահայրերը վաղուց ի վեր ապրում էին Բելովեժեան ծմակում։ Այնտեղ, հսկա անտառի խորքում գիւղերը միմիանցից հեռու-հեռու ցրուած էին։ Բելովեժեան գիւղացի էր նաև Իւրգիսի հայրը՝ Անտոն Ռուդկուսը։ Նրանք չորս դեսեատին հող ունէին։

Մի ինչ-որ անգամ Իւրգեսին մի բան պատահեց։ Ձիերի տօնավաճառանոցում նա ծանօթացաւ մի ջահել, համարիա նորահաս աղջկա հետ, որի անունն էր Օնա Լուկոշայտէ։ Մինչև այս դէպքը Իւրգիսը բոլորովին միտք չունէր ամուսնանալու և մինչև անգամ ծաղրում էր նման յիմարութիւններ։ Այն ինչ նա այժմ միանգամից սիրահարուեց։ Բայց աղջկան նրան չտուին։ Նրա ընտանիքը ունևոր էր, և Իւրգիսը համարուեց ոչ բաւականին ձեռնտու փեսացու։ Սակայն համարեա մի տարի չէր անցել և բոլորը փոխուեց։ Օնայի հայրը մեռաւ, նրանց խրճիթը պարտքի փոխարէն ծախեցին, այսպիսով հարստութիւնը՝ ամուսնութեան գլխաւոր արգելքը, մէջ տեղից

վերացաւ։ Օնան երբ էլ որ ցանկանար կարող էր տնից հեռանալ։ Բայց նրան ցաւ էր պատճառում, որ իր հեռանալով ընտանիքը բախտի բերմունքին պիտի մնար։ Նրա ընտանիքը, բաղկացած էր Էլզբետ Լուկոշայտից՝ Օնայի խորթ մայրը, որին բոլորը մորաքոյր Էլզբետ էին կանչում և զանազան տարիքի վեց հատ երեխաներից։ Օնայի մեծ եղբայրը՝ Իոնասը, այն ժամանակ առաջարկեց, որ բոլորն էլ միասին տեղափոխուեն Ամերիկա։ Նա համոզուած էր, որ նրանց կյաջողուի տեղափոխուել և նրանք այնտեղ աւելի լաւ կապրեն, քան թէ հայրենիքում։ Իւրգիսին նոյնպէս յայտնի էր, որ Ամերիկայում լաւ բանւորը կարող է օրական երեք ռուբլի և դեռ աւելի շատ աշխատել և այս վճարը համեմատում էին Լիտվայի կեանքի և աշխատանքի պայմանների հետ։ Իւրգիսը մտածում էր, որ Ամերիկա տեղափոխուելը նրան հնարաւորութիւն կտա հարստանալու և ամուսնանալու Օնայի հետ։ Ամերիկայի մասին նրան պատմել էին, որ այնտեղ բոլորն էլ ազատ են և բոլորն էլ հարուստ՝ թէ հարուստ, թէ աղքատ։ Սալդատութիւն չկա, չինովնիկներին կաշառք տալու կարիք չկա, ամեն մէկն իրաւունք ունի ապրելու այնպէս, ինչպէս ինքը կցանկանա, առանց որևէ մէկի մօտ ստորանալու։

Հետևեալ ամառը նրանք ճանապարհ ընկան։ Իոնասը մի բարեկամ ունէր, որն արդէն տե-

ղափոխել էր Ամերիկա և կարողացել էր փող հաւաքել։ Որովհետև նա ապրում էր Չիկագոյում, մեր գաղթականներն էլ նոյնպէս վճռեցին իրենց ճանապարհորդութեան վերջին կէտը այդ քաղաքն ընտրել։ Նրանք անգլերէն միմիայն մի բառ գիտէին՝ Չիկագօ, և այս բառը նրանց հասցրեց մինչև նշանակուած տեղը։ Բայց օտար քաղաքում նրանք բոլորովին իրենց կորցրին։ Ամբողջ օրը թափառում էին անծանօթ փողոցներով և գիշերելու համար ընկան ոստիկանատուն։ Առաւօտեան մի թարգման գտան. նա նրանց տրամվայի վագոնը նստեցրեց և նոր բառ սովորեցրեց՝ «Անասունների Բակեր»։

Վագոնում տեղ գրաւելով, նրանք սկսեցին պատուհանից դուրս նայել։ Նրանց առաջ տարածւում էր մի երկար, անվերջ փողոց, աւելի երկար, քան թէ նրանք կարող էին պատկերացնել, որովհետև նրա ամբողջ երկարութիւնը հաւասար էր յիսուն վերստի։ Նրա երկու կողմը բարձրանում էին երկյարկանի տգեղ տներ. այդպէս էր շինուած նաև իրար հատող միւս բոլոր փողոցները. ոչ մի տեղ ոչ բարձրութիւն կար և ոչ էլ կանաչ։ Այստեղ և այնտեղ դէպի երկինք էին բարձրանում հսկա գործարանների, մռայլ շէնքերը անհաշիվ պատուհաններով և խոշով ծխնելոյզներով և օդում տարածում մուր ու հեռ։

Դեռ մի ժամ էր անցել, որ Չիկագօ հաս-

նչէին, երբ նրանք նկատեցին, որ օդում ինչ որ տարօրինակ փոփոխութիւն տեղի ունեցաւ, շուրջն աւելի մթնեց, առարկաների գոյնե-րը մի տեսակ կեղտոտ գոյնի փոխուեցին, իսկ շրջապատող բնութիւնը կարծես թէ մեռած էր և խղճուկ։ Եւ ամեն ինչ մի տեսակ տարօ-րինակ առանձին հոտ էր արձակում։ Աւելի քն-քոյշ հոտառութիւն ունեցող մարդկանց համար այս հոտը բոլորովին անտանելի էր, բայց նրանք միայն տարօրինակ համարեցին։ Իսկ այժմ, նստած գնացող տրամվայի վագոնում՝ նրանք յանկարծ հասկացան, որ ամեն մի րոպէ նրանց մօտեցնում է այս հոտի աղբիւրին։ Հոտն աւելի սուր ու խիստ դարձաւ։ Ինչ որ մի հում բանի, դառնութեան և ճարպային համ ունէր։ Սովոր չլինելով՝ նրանք դրանից հարբեցին և քթերն էին բռնել։ Մեր գաղթականները դեռ չէին կա-րողացել գլխի ընկնել, թէ ինչ է նշանակում այս հոտը, երբ արդէն վագոնը կանգնեց և մի բարձր ձայն լսուեց.

— Անասունների Բակեր։

Նրանք դուրս եկան և սկսեցին չորս կող-մերը դիտել։ Փողոցը կազմող աղիւսէ տների մէջ տեղում փռուած էր մի ընդարձակ տարա-ծութիւն։ Տների վրայից վեց հատ հսկա ծխնելոյզներից վեր էին բարձրանում թանձր սև ծխի սիւները։ Թւում էր թէ, ծուխը դուրս է գալիս անմիջապէս երկրի տակից, որտեղ

սկզբից ի վեր կրակ է վառում։ Ծխի անվերջ ամպերը դէպի երկինքն էին բարձրանում և սև քողով ծածկում ամբողջ երկնակամարը։

Յանկարծ Իոնասը ուրախ բացականչեց և վազեց դէպի խանութի դուռը, որի վերևում գրած էր. «Եա Շեզվիլլա։ Գաստրոնոմիա»։ Շեզվիլլան Իոնասի հենց այն ընկերն էր, որը վաղուց իվեր ապրում էր Ամերիկայում։ Այսպէս վերջացաւ այդ երջանիկ ճանապարհորդութիւնը։ Երկու ընտանիքներն միմիանց գիրկն ընկան։ Արդէն շատ տարիներ էր անցել, որ Եակոբ Շեզվիլլան բախտ չէր ունեցել հայրենակիցներ տեսնելու։ Նա անմիջապէս սկսեց սովորեցնել և ծանօթացնել նրանց կեանքի նոր պայմանների հետ. օգնեց բնակարան գտնելու և բացատրում էր, թէ ինչպէս անեն, որ կեանքն աւելի էժան նստի։ Առաջին կարգի անհրաժեշտ մթերքների ամերիկական գները տեղափոխողներին սարսափի մէջ ձգեցին։ Միայն մի քանի օր անցկացնելով բարձր աշխատավարձ ունեցող երկրում՝ նրանք արդէն շատ դէպքերի էին հանդիպել, որոնք համոզեցին նրանց, որ սրա հետ միասին Ամերիկան անհաւատալի թանկութեան երկիր է, և հասկացան, որ աղքատներն այստեղ աւելի մեծ կարիքների մէջ են, քան թէ որևէ ուրիշ տեղ։

Իւրգիսի երազները հարստանալու մասին անմիջապէս ցրիւ եկան։ Բայց նա հաստատ վճռեց չկորցնել իր կորովը։ Նա յոյսը դրել էր միայն իր և իր ուժի վրա։

II

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Իուրգիսը չսխալուեց։ Հէնց միևնոյն օրը նա գնաց մսէ կոնսերվների գործարանը և այնտեղ կէս ժամից ոչ աւելի սպասեց։ Նրա դիցազնական կերպարանքը վերահսկիչներից մէկի ուշադրութիւնը գրաւեց։ Նրանց մէջ տեղի ունեցաւ հետևեալ կարճ խօսակցութիւնը։

— Անգլերէն խօսո՞ւմ էք։

— Ոչ, լիտուէրէն (Իուրգիսը խնամքով պնդեց այս բառը)։

— Աշխատանքի՞։

— Այո (գլխի նշան)։

— Աշխատե՞լ էք դուք առաջ մի որևէ տեղ։

— Չեմ հասկանում։

Վերահսկիչն սկսում է շարժումներով բացատրել։ Իուրգիսը մեծ եռանդով գլխի նշաններ է անում)

— Աղիքնե՞ր հաւաքել։

— Չեմ հասկանում։

(Վերահսկողը ցոյց տուեց, թէ ինչպէս են թիակով աշխատում)։

— Այո։

— Տեսնո՞ւմ էք այս դուռը (դուռը ցոյց տուող ձեռքի շարժում)։

— Այո։

— Վաղը ժամը եօթին։ Հասկանալի՞ է։

— Շնորհակալ եմ, պանէ (լիտուերէն)։

Սրանով էլ ամէն ինչ վերջացաւ։ Իւրգիսը հրճւում էր։ Նա ուրախութիւնից ճչաց, վեր ցատկեց և սկսեց դէպի տուն վազել։ «Նա աշխատանք ունի։ Նա աշխատանք ունի»։ Կարծես թևերի վրայ թռաւ նա և փոթորկալի ներս խուժեց տուն վախեցնելով բոլոր կենողներին։

Հետևեալ առաւօտ ժամը եօթին Իւրգիսն աշխատանքի գնաց։ Վերահսկիչի նշանի համաձայն նա հագաւ բանւորական շորերը, որ նախորդ օրը գնել էր հին շորեր ծախողից և մի փոքրիկ կապոցով բերել էր իր հետ. մտաւ այն բաժանմունքը, որտեղ կոնսէրվների համար նշանակւած եզներն էին մորթում։ Նրա առանձնած աշխատանքը շատ հասարակ էր. մի քանի րոպէի ընթացքում արդէն վարժւեց։ Նրա ձեռքը աւել տւին և նա պարտաւոր էր գնալ եզան փորոտիքները դուրս քաշող մարդու հետքով՝ աւլէր այդ փորոտիքները և թափէր յատակի վրայ շինւած յատուկ անցքերի մէջ։ Յետոյ պէտք է որքան կարելի է արագ իջեցնել խուփը, որպէս զի որևէ մէկը սայթաքելիս այնտեղ չընկնէր։ Իւրգիսը հէնց այն ժամանակ եկաւ, երբ սկսեցին անասուններին բերել ու անմիջապէս

անցած աշխատանքի։ Յուլիսեան տօթ օր էր. ամբողջ յատակը ծածկուած էր տաք գոլորշեացող արիւնով։ Նրա հոտը սարսափելի էր, բայց Իւրգիսը ոչինչ չէր նկատում։ Նրա ուրախութիւնը սահման չունէր։ Նա արդէն աշխատանք է գտել և փող է վաստակում։ Ամբողջ օրուա ընթացքում նա հաշւում էր իւր աշխատավարձը։ Նրան սովորականից շատ վճարեցին. Նրա հաշւողութեամբ ամբողջ տասնեօթ ու կէս ցենտ մի ժամում։ Իսկ որովհետև այդ օրը կարծես թէ դիտմամբ շատ աշխատանք կար նելու՝ նա շարունակեց աշխատել մինչև երեկոյեան ժամը եօթը. ուրեմն նրան հասաւ մէկ ու կէս դոլլարից աւել։

Վերադառնալով տուն՝ նա լաւ լուրեր իմացաւ. Իօնասին և մինչև անգամ ծեր Անտոնին խոստացել էին տեղ տալ։ Այս յաջողութիւնը նրան նոր յոյս ներշնչեց։ Նախատեսնելով, որ իր պսակը կարող է աւելի շուտ տեղի ունենալ՝ նա տուն վարձեց և սկսեց տան կարիքների համար զանազան իրեր գնել, սա աւելի հեշտ կարելի էր անել, որովհետև վճռապէս ամեն ինչ կարելի էր մաս-մաս վճարելով գնել։ Սրա վրա ծախսեց ընտանեկան խնայողական գումարի բաւականին մեծ մասը։ Բնակարանը մեծ էր, ընտանիքի բոլոր անդամների համար մահճակալները չէին բաւականացնում, հարկաւոր էր երկար ժամանակ մտածել, թէ ով որտեղ պիտի

Ուրգեխն անմիջապէս աշխատանքի անցաւ:

քնի։ Ճաշի սեղանը խոհանոցում դրին, մի սենեակը գրաւեց մօրաքոյր Էլսբեթը փոքր երեխաներով, միւսում՝ տեղաւորուեց Օնան, երրորդում՝ քնեցին տղամարդիկ, անկողինները անմիջապէս յատակի վրա փռելով։ Սա չէր կարող խանգարել տղամարդկանց պինդ քնելու և մօրաքոյր Էլսբեթը ստիպուած էր լինում դռները ուժգին ծեծելու առաւօտները զարթեցնելու համար։

Հիմա Իւրգիսն առաջին անգամ փորձով իմացաւ, որ մարդու ամբողջ ուժը կլանող աշխատանքներ կան։ Եթէ սպանդանոցի վերին կամարներից դիտենք աշխատանքը, այն ժամանակ զարմանալի կթւա շարժումների արագութիւնը և ճշտութիւնը, մարդիկ կթւան ինչպէս մի ինչ որ նոր տեսակի անսովոր ճարպիկ մեքենաներ։ Բայց երբ անհրաժեշտ է լինում բլուզը հագնել և ինքդ ներքևում այդ աշխատանքը կատարել, այն ժամանակ միայն կարելի կլինի հասկանալ այս աշխատանքի իսկական սատառը։ Աշխատանքի արագութիւնը պահանջում է բոլոր ընդունակութիւնների և ուժերի սարսափելի լարուածութիւն։ Սկսած այն րոպէից, երբ մուրճի հարուածից շշմած վայր է ընկնում առաջին եզը և մինչև ճաշւա ընդմիջումը յայտարարող սուլիչի ճչոցը և յետո ժամը տասներկուս ու կէսից սկսած մինչև երեկո ոչ մի բան հանգստութիւն չունի՝ ոչ ձեռքերը, ոչ ոտքերը և ոչ էլ գլուխը։ Շարժման

այս արագութիւնն առաջանում է շատ պարզ ձևով. աշխատանքի այն տեսակի համար, որով որոշւում է ամբողջ աշխատանքի պրոցեսի արագութիւնը՝ աւելի ուժեղ մարդկանց էին վարձում, նրանց աւելի շատ էին վճարում և յաճախ փոխում։ Սա նշանակում է «աշխատանքի քշել», իսկ եթէ մի որևէ մէկը համապատասխան ույժ չունենար հասնելու առաջին ճարպիկ աշխատողին՝ նրան անմիջապէս դուրս էին շպրտում, որովհետև առաւօտները դռան առաջ միշտ կանգնած ամբոխի միջից շատերն էին ցանկանում նրա տեղը բռնել։

Սա Իւրգիսին չէր շփոթեցնում. նա շատ ուժեղ էր և առանց դժւարութիւնների հասնում էր ընկերներին. նա կարող էր դեռ աւելի արագ աշխատել, եթէ սա պահանջէին։ Իհարկէ, աշխատանքն առանձին հաճոյք չէր պատճառում, բայց չէ որ հարկաւոր է, որ մէկն ու մէկը այս աշխատանքը կատարի, իսկ սրա համար լաւ էին վճարում, այնպէս որ գանգատւելու հարկ չկար։ Այդպէս էր կարծում Իւրգիսը։ Բայց երբ նա ջանում էր այս ոգով խօսելու ընկերների հետ՝ նրան համարեա թշնամաբար էին նայում։ Շուտով նա գլխի ընկաւ, որ այստեղ բոլորն էլ ատում են իրանց աշխատանքը, ատում էին նաև այն բոլորը, որոնք այսպէս թէ այնպէս կապւած էին նրա հետ՝ գործարանատէրերին, վերակացուներին, գործարանային ամբողջ շրջանը ամբողջ

Չիկագոն։ Մինչև անգամ, կանայք ու երեխաները հաստատում էին, որ գործարաններում տեղի են ունենում աներևակայելի զզվելի բաներ։

Քիչ ժամանակից յետո Յուրգիսին առաջարկեցին բանւորական միութեան մէջ մտնել։ Բայց նա չէր կարողանում հասկանալ, թէ ինչու համար է այդ արւում։ Նրան բացատրեցին, որ մարդկանց հարկաւոր է միմեանց հետ համախմբւել՝ իրենց իրաւունքները պաշտպանելու համար։ Բայց Յուրգիսը պարզամտութեամբ հարցրեց. «իսկ ինչ բան է իրաւունքը»։ Այս հարցը բարկացրեց Յուրգիսի ընկերներին և նրան յիմար անւանեցին։ Վերջի վերջո Յուրգիսը միայն մի բան հասկացաւ, որ նա ինչ որ գումարներ է վճարելու, իբրև անդամավճար։ Այն ժամանակ նա կտրուկ կերպով հրաժարւեց։ Մի քիչ ուշ կամաց կամաց պարզւեց նրա համար և այն, որ կռիվը տարւում է մեծ մասամբ «աշխատանքի քշելու» սովորութեան դէմ, սա այն պատճառի էր հասել, որ շատերը այդտեղ էլ անկարողութիւնից ընկնում էին։ Բայց Յուրգիսը նման արարքները չէր սիրում։ Այդ աշխատանքը թւում էր, թէ նրա խաղական բանն է, իսկ թոյլերը թող իրանց համար ուրիշ հեշտ գործ գտնեն։

Սակայն Յուրգիսը իր դատողութիւնների մէջ բոլորովին հետևողական չէր։ Ընդհանրապէս, նա համաձայն էր, որ բոլոր թոյլերը և աշխա-

տանքի անընդհատականները ոչնչանային, բայց ինքը միևնույն ժամանակ հոգով տանջվում էր ծեր հոր համար, որը ոչ մի կերպ չկարողացավ տեղավորվել: Ծեր Անտոնն իր ամբողջ կյանքում հրաշալի աշխատող էր եղել, աչքի էր ընկնում անսովոր ազնվությամբ և ջանասիրությամբ: Այժմ իր կյանքի վերջին տարիներում չկարողացավ կյանքում տեղ գտնել, նման մի ծեր հիվանդոտ շան: Անտոն Ռուդկուսը շրջեց բոլոր գործարանները, արհեստանոցները, խանութները, մեծ քանակությամբ ապրանքներ ծախող պահեստները, մինչև անգամ օղետները, խնդրելով մի որևէ աշխատանք: Բայց նրան որոշակի մերժում էին, իսկ երբեմն էլ հայհոյում և դուրս քշում: Բայց լավ է, որ ընտանիք ունի, որը կարող է թեկուզ դժվարությամբ, բայց մի կերպ իրեն կերակրել:

Իուրգիսի հավատը, ամերիկական կյանքի արդարացի լինելու մասին մի քիչ տատանվեց: Բայց այդ հավատը բոլորովին խորտակվեց, երբ հայրը վերջապես տեղ գտավ: Մի երեկո Անտոն Ռուդկուսը տուն վերադարձավ սաստիկ վրդոված և սկսեց պատմել, որ Դուրգմենի գործարանում նրան մի մարդ մոտեցավ և առաջարկեց աշխատել, եթե ծերունին համաձայնվի իր աշխատավարձի մի երրորդ մասը նրան զիջելու: Այս մարդը գործարանի վերահսկիչ էր և իսկապես կարող էր իր խոստումը կատարել:

Յուրգիսը հօրը խորհուրդ տվեց չընդունել այդ առաջարկը, բայց հայրը չլսեց իր որդուն։ Եվ հենց միևնույն օրը նա գործարանի նկուղում գտնվող բաժանմունքներից մեկում տեղ ստացավ։ Այնտեղ սարսափելի խոնավ էր և ամբողջ բնակարանում չոր անկյուն չկար։ Առաջին շաբաթվա ամբողջ աշխատավարձը ծախսեցին հաստ պադոշներով երկարավիզ կոշիկներ ձեռք բերելու համար։

Ծեր Անտանը շատ խաղաղ մարդ էր, բայց նա էլ երկու օրվա աշխատանքից հետո գոյություն ունեցող բոլոր ձևերով, սկսեց անիծել գործարանը և նրա տիրոջը։ Նրան հանձնարարեցին սանդուխները մաքրել, որոնց միջոցով վերին հարկից անպետք մնացորդները ցած էին թափում։ Ամբողջ ընտանիքը սարսափեց, երբ նա նկարագրեց իր վրա դրած պարտականությունները։ Նա աշխատում էր այն շենքում, որտեղ կոնսերվների համար միս էին պատրաստում։ Միսը գտնվում էր քիմիական բաղադրություններով լի տակառներում, որտեղից մեծ պատառաքաղների օգնությամբ հանում էին ու դարսում սայլակների վրա, որպեսզի հետո տանեն այն բաժանմունքը, որտեղ եփում էին։ Տակառների միջից բոլորը հանելուց հետո, ինչքան որ կարելի էր որսալ պատառաքաղների միջոցով՝ բանվորները շուռ էին տալիս տակառները և հավաքում հատակի վրա թափված մնացորդները, որը հետո նույն-

պես սայլակի վրա էին գցում։ Այս բանից յատակը ծածկվում էր կեղտի հաստ շերտով, և Անտոնը սպունգով պիտի սրբեր այս կեղտի միջից ճագարդները և գցեր մի անցքի միջոցով խողովակը, որը միանում էր առանձին ավազանի հետ. այնտեղ էլ այն նորից քամում էին։ Ծերունին այս խողովակը միշտ մաքուր պիտի պահեր, այնտեղ հավաքվող ճագարդները հավաքեր և գցեր մով լի սայլակի վրա, որ յետո պահում էին կոնսերվների համար։

Սա զզվելի բան էր, բայց այն, որի հետ շուտով Իւրգիսը պիտի ծանօթանար իր սեփական փորձով՝ աւելի զզվելի դուրս եկաւ։ Իրբև կենդանիների փորոտիքները դուրս թափող բաժանմունքի աշխատող, նա հէնց առաջին օրը նկատեց տեղի ունեցող սրիկայութիւններից մէկը, որ գործարանում սովորական երևոյթ էր։ Յայտնի է, որ յղի կովի միսը ուտելու համար անպէտք է։ Մինչդեռ ամեն օր սպանդանոց բերվող անասունների մէջ քիչ չէին պատահում այդպիսի կովեր։ Իհարկէ կարելի էր նրանց անասունների բակերում թողնել, մինչև որ կըծնէին։ Բայց այդ դէպքում գործարանատէրերը ստիպված էին նոր հոգսեր և ծախսեր անելու։ Դրա համար էլ յղի կովերին սպանում էին միւսների հետ միաժամանակ։ Իւրգիսի պարտականութիւնների մէջ էր մտնում փորոտիքները հորթի հետ միասին ցածի յարկը թափելու, այստեղ էլ

միսը, և մորթին մշակման էին ենթարկում։

Մի անգամ բանւորներից մէկը սայթաքեց և ոտքը դուրս ընկաւ։ Իւրգիսին հրամայեցին նրա տեղը բռնել։ Արդէն ուշ էր, համարեա մթնել էր։ Պետական սանիտարական տեսուչը, որ պարտաւոր էր սպանւող կենդանիների միսը քննել, գնաց իսկ բանւորներից մնացին քսան հոգուց ոչ աւել։ Այդ օր գործարան էին քշել մի ամբողջ նախիր, որտեղ հաշմանդամ կենդանիներ շատ կային։ Մի քանիսի ոտներն էին ջարդուած, միւսների կողքերն էին վէրքերով ծածկուած, իսկ մի քանիսն էլ, յայտնի չէր թէ ինչու, արդէն ընկնում էին։ Այս վերջին տեսակի անասուններին բանւորները «լէշ» էին անւանում և այս «լէշը» լռութեան ու մթութեան ծածկոցի տակ հարկաւոր էր օգտագործել։ Վերև բարձրացնող մեքենաների միջոցով նրանց բարձրացրին սպանդանոց և սովորական արագութեամբ այնտեղ մորթոտեցին ու փորոտիները հանեցին։ Երևում էր, որ սա ամենասովորական մի երևոյթ էր։ Երկու ժամից յետո տակառներն արդէն դրուած էին սառուցարանում։ Իւրգիսը բոլորովին ընկճուած տուն վերադարձաւ. նա համոզուեց, որ իր ունեցած հաւատը Ամերիկայի վերաբերմամբ իսկապէս ծիծաղելի է դառնում։

III

ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԸ

Իւրգիսը և Օնան արդէն երկու տարի էր, որ համարւում էին փեսացու և հարսնացու։ Նրանք վաղուց պատրաստ էին հարսանիքը տօնելու։ Բայց ծերունիները պնդում էին, որ հանդեսաւոր տօնը կատարւի լիտւական հին սովորութիւնների համաձայն. շատ հիւրեր հրաւիրեն և առատ հիւրասիրեն։ Սա, իհարկէ, էժան չէր նստի նրանց վրա։ Որպէս զի հնարաւոր ծախսերը ծածկւէին՝ Օնան ստիպւած եղաւ Բրօունի գործարանը մտնելու. նա տեղ գտաւ այն բաժանմունքում, որտեղ ապխտած մսի համար տոպրակներ էին կարում։ Նրա եղբօրը՝ Ստանիսլաւին, նոյնպէս աշխատանքի դրեն, չնայած որ նա ընդամենը տասնեչորս տարեկան էր և նրան կարելի էր վարձել միայն Հիւսիսային Ամերիկայում գոյութիւն ունեցող երեխաների աշխատանքի վերաբերեալ օրէնքների խախտումով։ Բայց տեղական կաթոլիկ տէրտէրը երեխային վկայական տւեց, որ նա արդէն տասնվեց տարեկան է և նրան ընդունեցին։ Հէնց այս ժամանակ գործարանում իւղ հաւաքւող նոր մեքենա էին դրել և սրա վրա էլ նշանակեցին Ստա-

նիսլաւին։ Մեքենան դրւած էր էլեքտրականութեամբ լուսաւորւած մի մեծ սենեակում։ Ճարպը հալում էին մի յարկ վերեւում և ցած էր հոսում բարակ շիթերով, որոնք յիշեցնում էին գեղեցիկ, սպիտակ՝ ինչպէս ձիւն, խաղալիքի փոքրիկ օձերի, միայն անդուրեկան հոտ էր արձակում։ Այս մեքենան կառավարելու համար և որպէս զի օրական մի քանի հարիւր թիթեղեա բաժակներ լցնեն, հերթով շիթերի տակ էին դնում այդ բաժակները, և սրա համար հարկաւոր էր ոչ աւելի, քան երկու մարդ։ Նրանցից մէկը իւրաքանչիւր վայրկեան նախապէս որոշւած տեղն էր դնում դատարկ բաժակները, իսկ միւսը հաւաքումէր պատրաստները։ Վերահսկիչը Ստանիսլաւին սովորեցրեց, թէ որտեղ պէտք է բաժակները դնել, և այդ վարկեանում որոշւած էր երեխայի տեղը աշխարհում և նրա ապագա ամբողջ բախտը։ Այժմ նրան վիճակւած էր ժամ առ ժամ, օրէցօր կանգնելու այդ սենեակում առաւօտեան ժամը եօթից մինչև կէս օր և տասներկուս ու կէսից մինչև հինգ և կէսը, չկատարելով ոչ մի ազատ շարժում և իր ամբողջ ուշադրութիւնը դարձնելով հալած ճարպի բաժակների մէջ լցւելու գործողութեան։ Շատ ժամանակ ճարպային հոտը մարդու սիրտ էր խառնում, իսկ ձմեռը բաժակները երեխայի մատներն էին սառեցնում, որովհետեւ այդ նկուղը երբէք չէր տաքացւում։ Տարին վեց ամիս նա լի օրերը ցերեկւա լոյս

չէր տեսնում։ Եւ սրա համար շաբաթւա վերջում նա երեք գոլլար էր ստանում, իսկ բաժինն այն ընդհանուր գումարից, որը վաստակում էին Միացեալ Նահանգների արդիւնաբերութեան մէջ աշխատող երկու միլլիոն երեխաները։

Ամառւա ընթացքում ընտանիքի բոլոր անդամները՝ թէ մեծ և թէ փոքր, ջանասիրութեամբ աշխատեցին և գանձեցին բաւականին քանակութեամբ փող, որպէս զի կարողանան իրենց հայրենիքի սովորութիւնների համաձայն հարսանիքը կատարել։ Իսկապէս որ հիւրե՛ր շատ կային և առատ խնջոյքը շարունակւեց ամբողջ գիշերը սրա համար յատուկ վարձւած մի պանդոկում։ Չիկագոյի բոլոր ծայրերից հայրենակիցները եկան, որպէս զի շնորհաւորեն երիտասարդներին։ Բայց այստեղ պարզւեց, որ նրանցից ոչ բոլորն այդպիսի սրբութեամբ էին յարգում հին սովորութիւնները, ինչպէս իրենց տէրերը։ Սովորութիւնը պահանջում էր, որ հարսանիքի խնջոյքից յետո հիւրերն իրանց ուժերի ու միջոցների համաձայն նորապսակներին փող նւիրէին։ Սա պիտի ծածկեր նրանց ծախսերի ամենամեծ մասը։ Եւահա պարզւեց, որ համարեա ամբողջ երիտասարդ սերունդը, որ արդէն կարողացել էր ամերիկական ոգով վարակւել՝ խուսափում էր հիւրասիրութեան փոխարէնը վճարելուց։ Պանդոկապետը այս առթիւ ոչինչ չէր ուզում լսել և ծախսերի ամբողջ ծանրութիւնն ընկաւ Իւր-

գիսի վրա․ և բանից դուրս եկաւ, որ նա ամբողջ հազար դոլլար պարտքի տակ ընկաւ։

Սա սարսափելի էր, նրանց ջահէլ երջանկութիւնը խաւարեց հէնց առաջին քայլից։ Կարիքի հարուածների տակ նրանց կեանքը խաւարեց, դարձաւ լքուած լի օրեր, նոյնիսկ այն ժամանակ, երբ պէտք է որ մեծ տօնը կատարէին։ Հէնց հետևեալ առաւօտը բոլորը պէտք է զարթնէին ժամը եօթին աշխատանքի գնալու համար։

IV

ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՌԻՎ

Մի շաբաթ չէր անցել, մինչև որ կեանքը սովորական հունը մտաւ. տանը բոլորն ընկճուած ու վրդովուած էին քայլում։ Միայն Իւրգիսը շնորհիվ Օնայի, համեմատաբար բարեհոգի էր տրամադրուած։ Օնայի միայն մի հայեացքը բաւական էր, որ նրա բարկութիւնը իջեցնէր։ Նրա ամբողջ միտքը կենտրոնացած էր իր ջահէլ կնոջ վրա։ Նա գիտէր, որ բացի իրանից Օնան կեանքում մի ուրիշ յենարան չունէր և պատրաստ էր մենմենակ կռիվ մղելու ամբողջ աշխարհի դէմ, միայն թէ նրան կարողանար վշտից և տանջանքից պաշտպանել։ Նա արդէն կորցրել էր մի ժամանակ դէպի մարդիկ ունեցած իր հաւատը։ Նրա համար շատ պարզ էր, որ կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կռիվ, բոլորը բոլորի դէմ, և որ թոյլերը կործանման են դատապարտուած։ Դրա համար էլ անհրաժեշտ է ամեն մի բանի կասկածանքով և ատելութեամբ վերաբերուել, և ականջները սրած պահել, միշտ յիշելով, որ բոլորը և ամեն մէկն էլ խաբում են և կողոպտում։ Խանութների բոլոր ռէկլամները անամօթ և ակնյայտնի սուտ են։ Ցանկապատները,

լապտերները, հեռագրասիւները, փակցրած ա-
ֆիշները, որտեղ էլի միևնոյն բանն են ասում, սուտ են առաջին խօսքից մինչև վերջի-
նը։ Գործարանատէրերը խաբում են, սուտ բանուորներին. գնողներին մատակարարում են կեղծ ապրանքներ, խաբում են և կողոպտում են ամբողջ աշխարհը։ Ամբողջ շրջապատը լիքն է ստով և խաբէբայութեամբ։

Անախորժութիւնները մէկը միւսի ետևից հե-
տևեցին։ Օնան մրսեց և բոլորովին հիւանդ աշ-
խատանքի պիտի գնար։ Նրա բաժանմունքի վե-
րահսկուհին մշտապէս բծախնդրութիւն էր անում նրա նկատմամբ. նա տանել չէր կարողանում ամուսնացած աշխատաւորուհիներին։ Օնայի կրտսեր եղբայրները և քոյրերը շարունակ հի-
ւանդանում էին։ Հայրենիքում՝ Լիտվայում, մօ-
րաքոյր Էլզբետը բոյսերով էր բժշկում երեխա-
ներին։ Բոյսերն ինքն էր հաւաքում, չորացնում, իսկ այստեղ դեղատնից պիտի դեղերը գնէին։ Բայց ինչ կարող էին անել այդ դեղերը, երբ թէյը, շաքարը, սուրճը և ալիւրը վաճառում էին զանազան տեսակի վտանգաւոր խառնուրդ-
ներով, երբ կանաչ սիսեռը պղնձի թթւուտով էին ներկում, իսկ մուրաբան՝ անիլինով, և եր-
բեք չէր կարելի ընդհանրապէս խանութից չկեղ-
ծած մի որևէ բան ստանալ։ Նրանք ձմեռային շորեր գնեցին, բայց դրանք մարմինները չէին տաքացնում, որովհետև ապրանքը կեղծուած էր

հին-հին կտորներից, որոնք յետո երկրորդ ան-
գամ անց էին կացնում ջուլհականոցի դազգահից, և եթե մինչև անգամ նրանք համաձայնուէին աւելի թանգ վճարելու և աւելի լաւ գնելու, միևնոյն է, կտորները միայն գեղեցիկ կարուածքով, իսկ նիւթը, միևնոյն է, ամենավատն դուրս էր գալիս։

Բանաստեղծներն ասում են, որ տանջանքը բարձրացնում է մարդու հոգին։ Նրանք, իհարկէ, ինկատի չեն ունենում այսպիսի դէպքերում ծայրայեղ կարիքի հետ կապուած տանջանքը։ Այս տանջանքներն այն աստիճանի ստորացուցիչ են և հրէշային, որ բանաստեղծական լեզուով դրանց համար խօսք չէր ճարւի։ Ո՞ր բանաստեղծը գրիչ կվերցնէր նկարագրելու այն մասին, որ լիտւական դժբախտ ընտանիքի բնակարանը եռում էր կենդանիներից, որոնցից ոչ մի կերպ չէր կարելի ազատուել։ Խեղճերն ամեն տեսակի դեղօրայք էին գնում, բայց որովհետև բոլորը սարքովի էին, ոչ մի վնաս չհասցրին պարազիտներին։

Մեծ վիշտ էր պատճառում ծերունի Անտոնի վիճակը։ Շնորհիվ խոնաւ նկուղի աշխատանքի՝ նա աւելի ուժեղ սկսեց հազալ։ Բացի դրանից, չնայած, որ երկարավիզ կօշիկները հաստ պադոշներ ունէին, բայց և այնպէս ոտները սարսափելի ցաւում էին քիմիական ուժեղ բաղադրութիւնների պատճառով, որոնք թափւում էին նրա արհեստանոցի յատակին։ Բժիշկը խորհուրդ տուեց անմիջապէս աշխատանքը թողնել,

նախազգուշակելով, որ հակառակ դեպքում ոտքերը բոլորովին կքրքրվեն և մատներն իրենք իրանց կթափվեն։ Անտոնը համբերությամբ տանում էր, ոտքերը փալասներ փաթաթելով և համառությամբ շարունակում էր աշխատանքը։ Բայց շուտով նրա կոկորդից սկսեց արյուն հոսել, նա անկողին մտավ և անմիջապես գործարանում տեղը կորցրեց. մի առավոտ նրան մեռած գտան։ Թաղումը շատ հասարակ էր, սա մեծ վիշտ պատճառեց մորաքույր Էլիզաբեթին, իսկ Յուրգիսն ամբողջ կիրակի օրը առևտուր էր անում դագաղավաճառի և գերեզմանափորի հետ վկաների ներկայությամբ, որպեսզի հետագայում, հակառակ պայմանի նրանից ավել չպահանջեն։ Նա արդեն յուրացրել էր ամերիկյան կարգ ու կանոնը և գիտեր, որ դա անհրաժեշտ է։

Վրա հասավ ձմեռը՝ բուք ու բորանով։ Թոքերի բորբոքումը և ինֆլուենցիան դաժանությամբ տարածվում էին գործարանային թաղում։ Հատկապես թոքախտավորների դրությունն էր ծանր։ Սարսափելի էր թվում, աշխատանքի գնալ առանց տաք շորերի, բայց մի միակ օր բացակայել, նշանակում էր տեղը կորցնել, իսկ դա անմիջապես հասնում էր անգործներից մեկին, որոնք ամբողջ խմբերով հավաքվում էին գործարանի դռների առաջ։ Ոչ մի եղանակ նրանց չէր կանգնեցնում։ Նրանք ցրտահար էին անում իրենց ձեռքերը, ոտքերը, բայց ամեն օր կանոնավոր

ներկա էին լինում։ Ախր նրանք էլ ոչ մի տեղ չունէին գնալու։ Երբ թերթում մի գործարանատէր յայտարարեց, որ իրան հարկաւոր է երկու հարիւր հոգի սառոյց կոտրատելու համար, այն ժամանակ ամբողջ օրուա ընթացքում և հետևեալ ամբողջ գիշերը անտուն, աղքատ մարդկանց ամբոխը դժուարութեամբ ճեղքելով ձիւնէ խորը կոյտերը ամեն կողմից գործարան թափուեցին։ Նրանք գրաւեցին տրամվայի կայարանը, բոլոր միջանցքները և ընդունարանները, քնում էին միմեանց հետ խառնուած, միայն թէ տաքանային։ Առաւօտեան դռների մօտ հաւաքուեցին երեք հազար մարդ։ Նրանց միջից ընտրեցին քսան հոգի ամենից ուժեղների․ ինչպէս պարզուեց, երկու հարիւր թուանշանը վրիպակ էր։

Կանանց և երեխաների դրութիւնն աւելի ծանր է, քան տղամարդկանց։ Երեխաներին թաշկինակներով փաթաթում էին մինչև քթները, բայց սա էլ չէր օգնում։ Մի անգամ, մի սարսափելի սառնամանիք օր, փետրուարի ուղիղ սկզբին, Ստանիսլաւի հետ աշխատող երեխան, որ զբաղուած էր մեքենայի ճարպը քամելով յանկարծ ցաւից սկսեց գոռալ։ Նրան պառկեցրին և ինչքան ուժ կար սկսեցին տրորել նրա ականջները, բայց նրանք արդէն սառել էին և տրորելուց թափւում էին։ Դրանից յետո Ստանիսլաւը սկսեց ցրտից վախենալ և առաւօտները գոռում

էր ու լաց լինում, երբ նրան աշխատանքի էին ուղարկում։ Իւրգիլն ստիպւած էր լինում նրան հետը տանելու, երբ ձիւնը բաւականին խորն էր լինում նա նրան ուսի վրա դրած էր տանում։ Սպանդանոցի շէնքը, որտեղ Իւրգիլն էր աշխատում, երբէք չէր տաքացւում, և այնտեղ ջերմութիւնը ճիշտ դրսինի չափ էր։ Եղների արիւնը մորթողների ձեռքերին էր սառչում։ Չէր կարելի դանակի բերանին դիպչել առանց կաշին պոկ տալու։ Բանւորները ոտներին օրաթերթերով և հին մէշոկներով էին փաթաթում, բայց դրանք ծծում էին արիւնը և սառչում. յետո նորից հին թղթի վրա փաթաթում էին նորը և այդպէս շարունակ։ Օրուա վերջին մսագործների ոտները փղի ոտների նման էին դառնում։ Վերահսկիչներից աննկատելի նրանք տաքացնում էին ոտների ծայրերը մտցնելով հէնց նոր մորթուած եզի փորոտիքը։

Ամենից անտանելին այն էր, որ մերկ ձեռքերով էին աշխատում։ Մատները փետանում էին և այս պատճառով շատ դժբախտ դէպքեր էին տեղի ունենում։ Թափւող թարմ արիւնից և անընդհատ հոսող տաք ջրից օդում մառախուղ էր կանգնում, որը թոյլ չէր տալիս մի քանի քայլի վրա բան տեսնելու։ Եթէ յիշենք, որ այս մառախուղում աշխատանքը կայծակի արագութեամբ էր կատարւում և որ ամեն մի մորթող իր ձեռքում սուր դանակ ունէր բռնած, այն

ժամանակ հարկ է լինում դարմանալու, թէ ինչու մարդիկ էլ այստեղ այնքան չեն ընկնում, որքան որ անասունները։ Տան էլ հաճելի չէր այս խիստ ձմռանը։ Առհանոցում վառւում էր միայն մի փոքրիկ վառարան, որի շուրջը երեկոները հաւաքւում էին ընտանիքի բոլոր անդամները, և ընթրում ափսէները իրենց ծնկների վրա դրած։ Յետոյ պառկում էին քնելու, առանց հանուելու և ծածկւում էին այն բոլորով, ինչով որ կարելի էր։ Բայց յաճախ ցուրտը չէր թողնում քնելու։ Իսկ առաւօտները հարկաւոր էր վեր կենալ առանց լոյսի, առանց արշալոյսի և գնալ աշխատանքի։

Դժբախտութիւնները կատարեալ դարձան, երբ գործերն սկսեցին վատ գնալ. և գործարաններում, և սպանդանոցներում բանուորներին ընկսեցին կրճատել։ Մի քանիսին առանց այլևայլութեան դուրս արին, ուրիշներին առաջւանից աւելի քիչ ժամեր պահանջող աշխատանքի նշանակեցին։ Պատահում էին այնպիսի շաբաթներ, երբ Իւրգիսը վեց դոլլարից աւել չէր աշխատում, որովհետև վճարում էին միայն փաստական աշխատանքի ժամերի համար, իսկ այդ ժամերը օրը վեցից այն կողմ չէին անցնում։ Չնայած դրան, նա պարտաւոր էր վաղ առաւօտ սպանդանոց գնալ և մինչև երեկո, այնտեղ անցկացնել ամբողջ ժամանակը, սպասելով անասունների գալուն, բայց յաճախ շնորհիւ բոք ու բորանի

ուշ էին բերում։ Ուշադրութիւն չդարձնելով բոլոր խնդիրքներին՝ գործարանի վարչութիւնը չէր ցանկանում վերացնել այդ կարգը և մարդիկ սառչում էին ցրտից սպասելով աշխատանքի սկսելուն։ Յուրգիսը պարտաւոր էր ամբողջ ճրագալույցը սպանդանոցում անցկացնել, իսկ ծննդեան առաջին օրը պիտի գործարան գնար սովորական վաղ ժամին, նույնպես անասունների գալուն սպասելու համար։ Բայց ամենից վատն այն էր, որ փողի հաշւի ժամանակ բանւորներին անխղճաբար խաբում էին։ Սպանդանոցում ընդունւած և անխախտ կանոն էր, որ բանւորը թեկուզ մի րոպե ուշանալու համար կորցնում է ամբողջ մի ժամւա աշխատավարձը։ Սակայն եթե նա սովորական ժամից շուտ էր սկսում իր աշխատանքը՝ այն ժամանակ նրան սրա համար ոչինչ չէին վճարում։ Ոչ լրիվ ժամը ընդհանրապես հաշւի չէր առնւում և բանւորների համար այդ ժամը իզուր էր անցնում։ Դրա համար փող ստանալը միշտ մի ինչ-որ տեսակի վիճակախաղ էր դառնում։ Վերահսկիչների և բանւորների միջև ակնյայտնի կռիվ էր կատարւում, բանւորներն աշխատում էին ժամանակը երկարացնել, իսկ վերահսկիչները՝ կրճատել։ Ինքնըստինքեան հասկանալի էր, որ վերահսկիչները մեղաւոր չէին. սրանք միայն իրանց տէրերի կարգադրութիւններն էին կատարում։ Յուրգիսը միայն այժմ հասկացաւ, որ բանւորներն իրանց իրաւունքները պաշտ-

պանելու համար իսկապէս որ պէտք է կռուեն, «Բայց, իսկապէս, սա ճիշտ է,—մտածում էր նա,—բանուորները համախմբուելով կարող են յաղթել իրանց տէրերին։ Եւ առաջին անգամ սա ո՞ւմ մտքին է եկել»։ Այստեղ նրան հաս-կացրին, որ Ամերիկայում միշտ այսպէս են վար-ւում և միայն հիմա նա առաջին անգամ գլխի ըն-կաւ, թէ ինչ է նշանակում ազատ երկրում ապ-րել։ Նա ցանկութիւն յայտնեց բանուորական միութեան մէջ գրուելու։ Իբր անդամակցական նշանը մի առանձին հպարտութեամբ էր կրում, և նրան թւում էր, որ այժմ իր տանջանքների վերջը հասաւ։

Իւրգիսի միութեան մէջ մտնելու հետևանք-ների առաջինն այն եղաւ, որ յանկարծակի նրա մէջ անգլերէն լեզուն սովորելու ցանկու-թիւն առաջ եկաւ։ Նա ցանկանում էր հասկանալ այն ամենը, ինչ կատարւում էր ժողովներում։ Նա սկսեց ուշադրութեամբ լսել ու սովորել, ինչքան որ կարող էր, մեծ մասամբ երեխանե-րից էր սովորում, որոնք արդէն դպրոցում սո-վորել էին անգլիերէն խօսել։ Բացի դրանից Օնան նրա համար բարձրաձայն գիրք էր կարդում. գիրքը մի ընկեր է նրան նուիրել։ Շուտով Իւրգիսը ո-րոշեց, որ ինքն էլ սկսի կարդալ սովորելը և սկսեց երեկոյեան դպրոց յաճախել։ Ամեն երե-կո նա դասարան էր մտնում թէկուզ մի կէս ժամով, եթէ աւելի ժամանակ չունէր։ Այնտեղ

նրան սովորեցրին կարդալ ու գրել, և նա կարող էր և ուրիշ շատ բաներ սովորել, եթէ ժամանակը բաւականացնէր։ Ձմեռուա առաջին կէսին Իւրգիսը բաւականին փող ունէր, այնպէս որ, կարող էր ընտանիքի հետ ապրել առանց սոված մնալու և մինչև անգամ տնտեսութիւնը կարգի բերելու համար արած պարտքերի մի մասը վճարել էր, բայց երբ մի շաբաթուա աշխատավարձ ըտասը դոլլարից իջաւ մինչև վեցը կամ հինգը, Նրա փողն սկսեց չբաւականացնել, մինչև անգամ ամենաանհրաժեշտ բաները գնելու համար։ Վերջապէս գարունը եկաւ, և այսպիսով ազատեց նրանց սառնամանիքներից։ Բանից դուրս եկաւ, որ տաքութիւնը նոր տանջանքների աղբիւր դարձաւ։ Տարուա ամեն մի եղանակն իւր առանձին յատուկ չարչարանքներն ունէր։ Գարնանը պէտք էր տանջուել առատ անձրևներից. այս պատճառով փողոցներն անելանելի ցեխով ծածկուեցին։ Յետո վրա հասաւ սարսափելի շոգ ամառը և սպանդանոցը իսկական դժոխք դարձրեց։ Այնպիսի օրեր էին լինում, երբ արևի խփելուց մի քանի մարդ էին ընկնում։ Տաք, գոլորշիացող արեան հեղեղը հոսում էր առաւօտից մինչև երեկո, և դրանից առաջացած գարշահոտութիւնը սպանիչ էր դառնում։ Մորթողներն ամբողջովին այս հոտով էին սնւում և իրանց հետ էլ ամեն տեղ ցանում։ Այսպիսի կեղտոտութեան մէջ մաքրութիւնը պահպանելու ամենափոքրիկ հնարա-

ւորութիւն անգամ չկար։ Մինչև անգամ տեղ
չկար ձեռները լվանալու։ Աշխատանքի ընթաց-
քում ոչ ժամանակ կար և ոչ էլ որևէ բան երեսը
սրբելու։ Իսկ երբ երեսը քրտինքով էր ծածկւում՝
այն ժամանակ հաւաքւում էին ճանճերը,— ո-
րոնք ամառն այստեղ իսկական եգիպտական
պատիժ էին դառնում։ Ամառուա ամիսներին աշ-
խատանքն անընդհատ շարունակւում էր, ինչ-
պէս և ձմեռը, և բանւորները ոչ մի անգամ չէ-
էին տեսել ոչ թարմ կանաչ և ոչ էլ մաքուր օդ
շնչում։ Քաղաքից մի քանի վերստ հեռու ծփում
էին Միչիգան լճակի կապտաւուն ալիքները,
բայց սրանք նոյնքան անհասանելի էին թւում
բանւորների համար, ինչքան որ Խաղաղ Ովկի-
անոսի ջրերը։ Կիրակի օրերը բանւորներն ի-
րենց չափազանց ջարդւած էին զգում, որպէսզի
հնարաւորութիւն ունենային հեռու զբօսանքներ
ձեռնարկելու, իսկ լի օրերը նրանք ոչ մի ազատ
ժամ չունէին։

Նման գործարանում անախորժ բաներ շատ
էր տեսնում, նրան բոլորովին չէր սիրում վե-
րահսկուհի միսս Հենդերսոնը։ Սա մութ անցեա-
լով մի կին էր և մի ժամանակ կապ էր ունե-
ցել գործարանի այս բաժանմունքի գործավարի
հետ, վերջինս էլ նրան տեղ տւեց, կարծելով
թէ նրանից կպրծնի։ Սակայն սա ոչ բոլորովին
յաջողւեց։ Այս պատճառով նա միշտ աղմուկներ
էր առաջացնում։ Չար և անպիտան կին էր, նա

առաւօտից մինչև երեկո աղմկում էր իր բաժանմունքում: Այնպիսի բանւորուհիներ կային, որոնք աշխատում էին ստորաքարշութեամբ նրան դուր գալ, պատահում էին, որ նրանք գանգատւում էին նրան ուրիշ բանւորուհիների մասին, և այս պատճառով էլ բաժանմունքում կեանքը դժոխքի էր նման: Բացի գործարանից՝ նա փող վաստակելու ուրիշ աղբիւր էլ ունէր: Նա քաղաքում մի կոպիտ, կարմրաքիթ իրլանդացու հետ միասին նաև հասարակական տուն էր պահում. այդ իրլանդացու անունն էր՝ Կօննօր: Սա նոյնպէս վերահսկիչի պաշտօն ունէր գործարանի արտաքին բաժնում: Նա փչացած վերաբերմունք էր ցոյց տալիս աշխատանքի եկող և գնացող կանանց նկատմամբ: Երբ արտադրութիւնը կրճատւում էր՝ բանւորուհիներից մի քանիսն անցնում էին միսս Հենդերսօնի հիմնարկութիւնը, իսկ յետո նորից գործարան էին մտնում: Երբեմն էլ մինչև անգամ պատահում էր, որ ազնիվ կանանց և աղջիկներին դուրս էին անում՝ նրանց համար տեղ բաց անելու համար: Բանւորուհիները միշտ խօսում էին «Քաղաքային տան» մասին ու միաժամանակ աչքի տակով մտիկ տալիս այս մասին բան չիմացողներին: Եթէ անգործութեան մշտական վախը չլինէր և յետո նրանից էլ առաջացող աղքատութիւնը՝ Օնան ոչ մի օր այդպիսի ծառայութեան մէջ չէր մնա, իսկ այժմ պէտք է վախենալ, մի գուցէ դուրս անեն:

Օնան վերջապէս գլխի ընկաւ, որ միսս Հէնդերսոնը նրա համար է իր հետ այդպէս վատ վարւում, որովհետև ինքը ամուսնացած, կանոնաւոր կին է և որ այս պատճառով էլ նրան ատում են հասարակական տան նախկին բնակիչները, իսկ սրանք գործարանում մեծամասնութիւն էին կազմում և աշխատում էին թունաւորել նրա կեանքը,

Բայց միաժամանակ նա գիտէր, որ ամեն տեղ էլ միևնոյն բանն է կատարւում և որ թեթև վարքի տէր կինն անհամեմատ հեշտ է պահում իրան համար տեղ, քան ազնիվ կինը։ Գործարաններում աշխատում էին աղքատ բանւորուհիները, որոնց ամբողջ գոյութիւնը կախւած էր կոպիտ մարդկանց կամայականութիւններից, որոնք ոչ մի կերպ չէին տարբերւում նախկին ստրկատէրերից։ Չթագցրած անառակութիւնը նման պայմանների բնական հետևանքն էր, և գործարանում սարսափելի բաներ էին կատարւում, և ոչ ոքու չէր վրդովեցնում սա։ Սա բնական բան էր համարւում և ոչ ոքու աչք չէր ծակում, ինչպէս իր հերթին նեգրերի վաճառումը, որովհետև այս ստրկուհիները կաշու միևնոյն գոյնն ունէին, ինչպէս որ իրանց տէրերը։

Վրա հասաւ աշունը և Օնան չէր կարողանում դուրս գալ աշխատանքի։ Իւրգիսը բժիշկ հրաւիրեց և նրա կինը մի լաւիկ երեխա բերեց։ Նա մի հաստ և մեծ տղա էր և տարօրինակ էր,

թե ինչպես, նրան աշխարհ բերեց մի այնպիսի քնքույշ և թույլ արարած, ինչպիսին նրա մայրն էր։ Իուրգիսը չէր հավատում իր բախտին, երբ նայում էր գեղեցիկ, սևաչյա երեխային։ Այսօրվանից սկսած նա վերջնականապես դարձավ օրինակելի ընտանիքատեր, և բոլորովին կտրվեց աշխատանքից հետո պանդոկ հաճախելու սովորությունից։ Նա ամբողջ ազատ օրը անց էր կացնում տանը, երազելով այն մասին, թե ինչպես կմեծանա նրա որդին և ինչպես նա իր հորից՝ ավելի երջանիկ կլինի։ Նա շատ էր ուզում, որ ինքը երեխային դայակություն անի, բայց դա անկարելի էր։ Նրան մինչև անգամ շատ քիչ էր հաջողվում երեխային տեսնելու։ Երբ նա վերադառնում էր աշխատանքից, երեխան արդեն քնած էր լինում, իսկ առավոտները դեռ չզարթած՝ հայրը գործարան էր շտապում։ Միայն կիրակի օրերը Իուրգիսը կարող էր նվիրել երեխային։ Սակայն ավելի ցավալին այն էր, որ Օնան էլ հնարավորությունից զուրկ էր երեխային կերակրելու և խնամելու, նա էլ նույնպես ամեն օր գնում էր աշխատանքի, փոքրիկ Անտոնին թողնում էր մորաքույր Էլժբետի հսկողության տակ, որը կերակրում էր նրան կապտավուն թույնանման հեղուկով. սա խանութում ծախում էին կաթ անվան տակ։ Ծննդաբերությունից հետո նա միայն մի շաբաթ տանը մնաց։ Նրան դուրս կանեին, եթե աշխատանքի չգար և դրա համար էլ շտապեց աշխա-

տանքի գնալ դեռ բոլորովին չառողջացած։ Այս պատճառով էլ, Նա դեռ այն ժամանակ ծանր հիւանդութիւն ձեռք բերեց, մեկն այն անհաշիվ հիւանդութիւններից, որը սովորական էր բանւոր դասակարգի կանանց համար։ Նա տանջւում էր գլխացաւով, իսկ երբ պէտք է խոնաւ եղանակին աշխատանքի գնար՝ Նրա մեջքը սկսում էր սարսափելի ցաւել և համարեա ուշաթափութեան էր հասնում։ Գործարաններում աշխատող կանանց մեծ մասը տանջւում էր այդ միևնոյն հիւանդութիւններից, բայց երբէք չէին դիմում բժշկի օգնութեան։ Հետևելով ընկերուհիների օրինակին՝ Օնան փորձեց զանազան սարքովի դեղերով իրան բժշկել, բայց որովհետև դրանք պատրաստուած էին սպիրտի խառնուրդով և ուրիշ հարբեցնող նիւթերով՝ հիւանդը միմիայն ժամանակաւոր թեթևութիւն էր զգում։ Բայց հէնց որ փորձում էր դադարեցնել այս թանկարժէք դեղերի գործածութիւնը՝ ցաւերն իսկոյն առաջ էին գալիս։

Ամառն աշխատանքը նորից սկսեց արագ ընթանալ և Իւրգիսը մի քիչ աւելի շատ սկսեց վաստակել։ Բայց և այնպէս աշխատավարձը անցեալ տարուան հետ համեմատած քչացել էր, որովհետև գործարանատէրերը աշխատանքի տաք շրջանում աւելի շատ բանւորներ էին վարձում, սրանց ինկատի ունենալով նոր մեռած շրջանի սկսւելուն պէս դուրս անել։ Այս պատճառով,

Նա դարձավ օրինակելի ընտանիքատեր։

ամեն մի առանձին բանւորի վարձատրութիւնը բաւականին իջաւ և դրա հետ միասին Չիկագոյի ամբողջ պրոլետարիատը վարժւեց գործարանային աշխատանքին, այնպէս գործադուլի ժամանակ միշտ հնարաւոր էր գտնել հարկաւոր քանակութեամբ բանւորական ուժեր գործադուլին մասնակցողներին փոխարինելու համար․ բացի դրանից, աւելի վատ ապահովւած բանւորները անօգնական դարձան, և նրանց համար հեշտ չէր վճռել գործադուլին մասնակցելու հարցը։ Բայց բանւորական ձեռքերի շատութեան պատճառով աշխատանքը երբէք չթեթևացաւ։ Ընդհակառակն, վերահսկիչներն ամեն կերպ աշխատում էին աշխատանքի թափը արագացնել։ Նրանք մէկ ուժեղ ըմբիշների էին վարձում և «քշում աշխատանքի» առանձին բարձր վարձ տալով, մէկ էլ դիմում էին ուրիշ խորամանկութիւնների օգնութեան։ Այսպէս, օրինակի համար, խոզեր մորթոտելու ժամանակը, որը որոշ տեմպով էր կատարւում, աննկատելի արագացնում էին, և դա անում էին աշխատանքը կանոնաւորող ժամացոյցի մեխանիզմի ընթացքը արագացնելով։ Աշխատավարձի համեմատ աշխատանքինը նոյնպէս արագացնում էին պահանջելով աշխատանքի իւրաքանչիւր միաւորը աւելի կարճ ժամանակամիջոցում կատարել, մինչդեռ բանւորներին օգնած լինելու համար պահում էին նախկին գները։ Բայց երբ բանւորները վարժւեցին աշխատանքի ցան-

կալի արտադրության՝ գները իջնում էին, և վարձատրության ընդհանուր գումարը իջնում էր մինչև նախկին մակարդակը, իսկ երբեմն նրանից էլ ցածր։ Ուրգիսը և Օնան դողալով սպասում էին, թե երբ կհասնի իրանց հերթը։ Լուրեր էին պտտւում, որ Դուրգեմի գործարանում և սպանդանոցներում պատրաստւում էին վարձն իջեցնելու մինչև տասնհինգ ցենտ մի ժամում, իսկ Ուրգիսը գիտեր, որ սա ազդանշան կդառնա նաև մյուս գործարանների համար, որովհետև դրանք առանձին-առանձին, մրցող հիմնարկություններ չէին, այլ մի հատ մսի մեծ տրեստ, որը բոլորը իր ձեռքում էր պահում։

V

ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔ

Աշնանը փչեցին ցուրտ քամիները և օրերն սկսեցին աւելի ու աւելի կարճանալ։ Հանգստութիւնը չափազանց կարճատև եղաւ, և ոչ մի հնարաւորութիւն չկար, ինչպէս հարկն է, պատրաստուելու վրա հասնող նոր դժբախտութիւնների դէմ։ Փոքրիկ Ստանիսլավի աչքերում նորից երևաց վախի արտայայտութիւնը. Իւրգիսն նոյնպէս երկիւղը պատեց։ Նա գիտէր, թէ ինչպէս թոյլ էր Օնան և ինչպիսի ծանրութեամբ նա կտանի սառնամանիքն ու թիփին։

Առաջին թիփին անցաւ քաղաքի վրայով մինչև ծննդեան օրերը, և առաջին անգամ Իւրգիսը հասկացաւ, թէ ինչ է նշանակում ճակատագրի հետ կռուել։ Ամբողջ անցեալը համեմատած այժմ վրա հասնող դրութեան հետ երեխական խաղ էր թւում։ Բայց նա վճռեց անձնատուր չլինել և կռւում էր, ինչպէս առիւծ։ Ամբողջ մի շաբաթ տրամվայները չէին գործում։ Առաջին օրը Իւրգիսը Օնային փաթաթեց վերմակի մէջ և դրեց իր ուսին, իսկ Ստանիսլաւը այնպէս փաթաթուած, պինդ կպել էր նրանից, որ իւր

առաջ ոչինչ չէր կարողանում տեսնել: Սառցէ քամին ուղիղ Իուրգիսի երեսին էր խփում, իսկ ձիւնը համարյա մինչև ծնկներն էր հասնում: Վայրի գազանի կատաղութեամբ Իուրգիսը ճեղքում էր ձիւնի ալիքները: Այդպէս քայլ առ քայլ առաջ գնալով, նա, վերջապէս գործարան հասաւ՝ յոգնածութիւնից թուլացած, աչքերը թափւող ձիւնից համարյա կուրացած: Դեռ լաւ էր, որ այդ օրը անասուններն ուշ էին քշել սպանդանոց մորթելու համար, գնացքներն ուշացել էին թիփիի շնորհիվ: Երեկոյեան պէտք էր տուն վերադառնալ միևնոյն ձևով: Բայց որովհետև Իուրգիսը չգիտէր, թէ ժամը քանիսին է վերջանալու իր աշխատանքը՝ նա խնդրեց իրեն ծանօթ պանդոկապետին Օնային իր մօտ թողնելու: Մի անգամ երեկոյեան նա աշխատանքից ազատուեց միայն ժամը տասն և մէկին: Մութը բոլորովին անթափանցելի էր, բայց և այնպէս նրանց յաջողուեց յաջողութեամբ տուն հասնել: Այս թիփիի ժամանակ շատ բանուորներ գործարանում, իրենց տեղերը կորցրին, որովհետև չէին կարողացել ժամանակին տեղ հասնել. տէրերը նրանց նկատմամբ չնչին ներողամտութիւն անգամ ցոյց չտուին: Իսկ Իուրգիսը յաղթեց ճակատագրին և կարող էր հպարտանալ իր յաղթութեամբ: Բայց բաց կռւում յաղթողը շուտով ընկաւ դաւաճան թակարդի մէջ:

Սպանդանոցում բուականին պինդ չկապած

եզը դուրս պրծաւ մարդկանց ձեռքերից և յարձակուեց իրան պահողների վրա։ Բոլորը փախան այս ու այն կողմ և սկսեցին կռուել նրա դէմ. դալմադալն այն ժամանակ վերջացաւ, երբ վրա վազող վերահսկիչը հրացանով սպանեց եզին։ Այս դէպքն ինքն իրենից մի անսովոր բան չէր ներկայացնում, բայց Իւրգիսը կատաղած կենդանուց փախչելիս սայթաքեց և ընկաւ արիւնալի յատակի վրա և ոտը թեթև վնասեց։ Ոտը ցաւում էր, սակայն, Իւրգիսը շարունակեց իր աշխատանք, ոչ մի ուշադրութիւն չդարձնելով սրա վրա։ Բայց երբ նրանք ոտով ճանապարհ ընկան դէպի տուն, ցաւը շատացաւ, իսկ առաւօտեան դէմ ոտքն այնպէս ուռաւ, որ ոչ մի հնար չկար կօշիկները հագնելու։ Իւրգիսը բարկացաւ, հայհոյեց, բայց և այնպէս ստիպուած, ոտը փալասներ փաթաթելով տրամվայով գնաց գործարան։ Կարծես թէ դիտմամբ այդ օրը յատկապէս շատ աշխատանք կար։ Իւրգիսի ցաւը աւելի ու աւելի սաստկացաւ և կամա թէ ակամա ստիպուած եղաւ վերահսկիչին ասելու, որ իրեն վատ է զգում։ Հրաւիրեցին գործարանային բժիշկին, նա ոտը նայեց և վնասուածին հրամայեց անմիջապէս պառկել։ Նա նկատեց նոյնպէս, որ իզուր Իւրգիսն իրան այդպէս թեթևամիտ է պահել և վնասուած ոտով շարունակել է աշխատանքը։ Այժմ անհրաժեշտ է մի քանի ամիս շարունակ պառկած մնալ։ Գործարանը պարտաւոր չէր դժբախտ

դեպքերի պատասխանատուն լինել։ Դրա համար էլ ամբողջ հոգսը Ուրգիսի նկատմամբ սահմանափակվեց միմիայն բժշկական նախնական օգնություն ցույց տալով։

Ուրգիսը մի կերպ քարշ գալով տուն հասավ։ Ցավն այնպես անտանելի էր, որ աչքերը մթնեցին։ Բայց ամբողջ աշխարհում նա վախենում էր միմիայն մի բանից՝ տեղը կորցնելուց։ Դա սպառնում էր նրանց անելանելի դրության մեջ թողնելու։ Բանկում Ուրգիսը միմիայն վաթսուն դոլլար պահած ուներ և եթե չհաշվենք Օնայի և փոքրիկ Ստանիսլաուի աշխատանքները, որոնք հազիվ էին կարողանում ծածկել նրանց սեփական պահանջները՝ նշանակում է, դա նըրանց ապրուստի միակ միջոցն էր։

Եւ ահա վրա հասան տանջալի ամիսները։ Ուրգիսը ոչինչ չէր անում և ամբողջ օրերով անշարժ պառկած էր իր տեղում։ Խելքն իր բախտին թողած՝ Օնան դուրս էր գալիս իր ուժերի սահմաններից։ Կարիքն աճում էր։ Անհրաժեշտ եղավ մինչև անգամ կրտսեր երեխաներին էլ դպրոցից հանելու։ Բացի Ստանիսլաուից, որ արդեն տասն և հինգ տարեկան էր, մորաքույր Էլզբետան ուներ Կատրինա անունով մի աղջիկ, որը Ստանիսլաուից երկու տարով փոքր էր, և երկու տղաներ՝ Վիլեամս և Նիկոլաս։ Նըրանք շատ բանիմաց երեխաներ էին. վճռեցին նրանց քաղաք ուղարկել թերթեր ծախելու հա-

մար։ Մի շաբաթից յետոյ նրանք ընտելացան այս գործին և երեկոները տուն էին բերում նրանցից ամեն մէկը քսան ցենտից ոչ պակաս։

Գարնան գալուստով Իւրգիսի դրութիւնը մի քիչ թեթևացաւ։ Նա որոշ չափ ընտելացաւ իւր հիւանդ դրութեանը՝ երբէք տնից դուրս չգալ։ Բայց Օնայի դրութիւնն էլի առաջուա նման ծանր էր։ Էլ չխօսելով զանազան տեսակի բանսարկութիւնների մասին, որ գործարանում էին սարքում Օնայի դէմ, նա մտածում էր այժմ, որ Իւրգիսը սառնութեամբ է դիտում իւր տանջանքները և մինչև անգամ չի էլ նկատում, թէ ինչպէս նա հիւանդ է և հիւծուած։ Երբեմն նա սարսափելի տանջւում էր։ Երբեմն էլ կէս գիշերին զարթեցնում էր իր ամուսնուն և լալով հարցնում էր, թէ սիրում է նա իրան էլի առաջուա պէս։ Դժբախտ Իւրգիսը կարիքից թունաւորուած արդէն անընդունակ էր դարձել աւելի նուրբ զգացումների։ Գլուխը բոլորովին կորցրած, նա ձգնում էր վերյիշել, թէ կնոջը չի ասել մի որևէ կոպիտ խօսք վրդովուած ժամանակ։

Ապրիլի վերջին Իւրգիսը կարող էր բժիշկի մօտ գնալ. Նա նրան բանդաժ տուեց և թոյլ տըւեց նորից աշխատանքի անցնելու. բայց այստեղ պարզուեց, որ գործարանում իւր տեղը արդէն բռնուած էր, որովհետև գտնուեց մի մարդ, որ վատ չէր աշխատում, իսկ վերակացուն էլ չէր ուզում նրան դուրս անել։ Իւրգիսը սրան-նրան

հրելով հասաւ գործարանի դռներին և սկսեց նայել՝ թէ ինչպէս են աշխատում իր նախկին ընկերները, և այդ րոպէին նա իրան վերջնականապէս դուրս շպրտուած զգաց։ Նա այժմ ստիպուած էր ամեն օր դռների առաջ խռնուող անգործների ամբոխի շարքերն մտնելու։ Բայց նա այլևս նոյն հաւատը չունէր իր նկատմամբ։ Նա հիւանդոտ տեսք ունէր, տանջուած էր, ճիշտ այնպէս, ինչպէս ուրիշ շատ շատերը, որոնք ամիսներ շարունակ անասունների բակերում աշխատանք էին փնտռում։ Սրանք Իւրգիսի կեանքի սարսափելի րոպէներն էին և նա, իհարկէ, կկորչէր, եթէ մի քիչ աւելի թոյլ լինէր։

VI

ԹՈՅԼԵՐԻՆ՝ ԱՇԽԱՏԱՆՔ ՆԿՈՒՂՈՒՄ

Աշխատանք դեռ բոլորովին չկար։ Իւրգիսը նախ դիմեց բանւորական միութեան անդամներին, խնդրելով որ իրան համար աշխատեն մի որեւէ տեղ գտնելու, յետոյ դիմեց բոլոր ծանօթներին, բոլոր գործարանները, բայց ոչ մի տեղ չգտնւեց։ Նրանով վերջացաւ, որ վերահսկիչները նրան մոռացան և սպառնալիքներով ու հայհոյանքներով դուրս էին շպրտում։ Իւրգիսը շատ լաւ էր հասկանում, թէ ինչու իրան չեն ցանկանում ընդունել։ Եթէ նրան յաջողւեց հէնց առաջին օրը տեղ ստանալ, այն ժամանակ անմիջապէս աչքի էր ընկնում, որ նա առողջ աշխատող է և դրա համար էլ պատրաստ էին ուրախութեամբ նրան իրանց մօտ վերցնելու։ Այժմ նա երկրորդ տեսակի աշխատող դարձաւ և այլես ոչ ոք նրա պէտքը չէր զգում։ Նրա ամբողջ հիւթը քամեցին և յետոյ փողոց շպրտեցին։ Զրուցելով միևնոյն դժբախտութիւնն ունեցող ընկերների հետ, նա իմացաւ, որ նրանք բոլորն միևնոյն բանն էին փորձել։ Մի քանիսը, իհարկէ, իրանք էին մեղաւոր իրանց զրկանքների համար,

որովհետև գայթակղութեան ենթարկուելով՝ սկսել էին խմել, բայց մեծամասնութիւնը, իրան իսկ նման, միմիայն օգտագործել էին մինչև վերջը և դուրս էին շպրտել կոնսերվներ պատրաստող բանւորական մեքենայի մասերի համար անպէտք գտնուելու պատճառով։ Նրանցից շատերը շարունակ այնպիսի արագութեամբ էին աշխատել, որպիսին պահանջւում էր գործարաններում անընդհատ տասը տարուց աւելի, բայց երբ նրանց ուժը սկսեց չբաւարարել ուրիշներին հասնելու համար՝ նրանց առանց ծածկելու յայտնեցին, որ բաւականին ծեր են և պէտք է տեղն ուրիշին յատկացնեն։ Միայն շատ քչերն իրանց սեփական մեղքի պատճառով էին իրանց տեղերը կորցրել, շնորհիւ աշխատանքի անձեռնահասութեան։

Մեծամասնութիւնը միևնոյն դրութեան մէջ էր գտնւում, ինչպէս որ Իւրգիսը։ Նրանք այնքան էին ուժերից վեր աշխատել և այնպէս վատ սնուել, որ հէնց առաջին պատահական հիւանդութիւնը նրանց ձեռքից ու ոտքից գցում էր։ Կամ թէ երբ նրանց դժբախտութիւն էր պատահում, օրինակ, արեան վարակում էին ստանում դանակի կտրելուց յետո, անմիջապէս հիւանդանում էին և ամիսներ շարունակ տանջւում։ Եթէ Փասաւորը հիւանդութիւնից յետո նորից աշխատանք խնդրելու էր գնում, նրան մերժում էին. որպէս զի ընդունէր, հարկաւոր էր վերահսկիչին կաշառք տալ։ Աշխատանքի ըն-

դունակութիւնը կորցնող բանուորի յետագա վիճակն աննախանձելի էր։ Եթէ նա պատկանում էր փորձուած մասնագէտների շարքին, նա երբեմն կարողանում էր բաւականին փող կիտել, որպէսզի չաշխատելու դէպքում կարողանա մի որևէ կերպ ապրել։ Սպանդանոցներում ամենից բարձր ռոճիկ ստանում էին այն բանուորները, որոնք անասուններ էին մաշկում և պատրաստում, երբեմն նրանք օրը մինչև հինգ-վեց դոլլար էին աշխատում։ Բայց այդպիսիների թիւը քիչ էր։ Իսկ սովորական միջին բանուորը պարտաւոր էր բաւարարուելու շաբաթը տասը դոլլարով, այն էլ աշխատանքի ամենաատաք ժամանակները և նրա բախտը կախուած էր բազմանդամ ընտանիքից։ Մենակ մարդն, իսկապէս, կարող էր մի որևէ բան յետաձգել սև օրւա համար, բայց միայն այն պայմաններում, եթէ նա չէր խմում և կրկնակի՝ եթէ նա կատարեալ անտարբեր էր իւր քաղցած փոքրիկ եղբայրների, քոյրերի և բարեկամների վիճակի նկատմամբ։

Աշխատանք գտնելու համար այս ու այն կողմը գնալիս Իւրգիսի առաջ միշտ կանգնած էր վերջին սարսափելի տեսիլը, որը դրութիւնից դուրս գալու միակ ելքը կարող է լինել։ Վերջնականապէս աշխատանք գտնելու յոյսը կորցնող մարդը կարող է վերջին քայլն էլ անել՝ իջնել բոլորովին յատակը, ամենացածր աստիճանը, այսինքն մտնել այն բաժանմունքը,

որտեղ պատրաստում են արհեստական միջոց-ներով արտերը պարարտացնող քիմիական նյութեր, և Իսրգիլը դողում էր այն մտքից, որ նա, իսկապես, ստիպված պետք է լծվի այդ աշխատանքին։

Բանվորները մի ինչ որ միստիկական վախով էին խոսում նրա մասին. տասից միայն մեկն էր վճռում այդ աշխատանքը վերցնելու, իսկ մնացածները դրա մասին միայն լուրերի հիման վրա էին դատում։ Այս բաժանմունքում աշխատանքը սովամահությունից էլ վատ էր։ Բայց մի՞թե նա կարող էր հիվանդ Օնայի փողերով ապրել և սրա հետ միասին հրաժարվել ամեն մի աշխատանքից։

Նկարագրվող գործարանի այս բաժանմունքը բանվորական ուրիշ բնակարաններից հեռու էր ընկած։ Յաճախորդները նրանով շատ քիչ էին հետաքրքրվում։ Այստեղ էր կենտրոնանում արտադրությունից յետո մնացած բոլոր կեղտոտությունները և թափթփուկները։ Հոտած նկուղներում, որտեղ չէր թափանցում արեգակի մի փոքրիկ ճառագայթ անգամ, ամեն հասակի մարդիկ՝ սկսած երեխաներից, կորացած, սղոցով ոսկորների կտորներ էին սղոցում։ Նրանք թոքերն էին քաշում ոսկրային փոշին և դրանով դատապարտում էին իրենց անժամանակ մահվան։ Գարշահոտ մառախուղի մեջ էլեքտրական լապտերները թվում էին, թե շատ հեռում են գտնվում,

ինչպես առկայծող փոքրիկ աստղեր։ Օդը լցւած կեղտահոտի մասին անկարելի է անհրաժեշտ հասկացողություն տալ։ Այդտեղ ներս մտնելիս հարկավոր է նախ շունչը հավաքել, ճիշտ այնպես, երբ ուզում ես սառը ջուրը քեզ գցել։ Ամեն մի կողմնակի այցելու այստեղ մտնելիս թաշկինակը երեսին էր սեղմում, խեղդվում և հազում էր։ Նկուղի տակ մի սարայ կար, որտեղ չորացնում էին մութ գույնի թելանման մի հյութ, որը հանում էր մաշկած անասուններից բոլոր մազային և ճարպային մասերը հանելուց հետո։ Այս հյութը չորացնելուց հետո մանր փոշի էին դարձնում և խառնում մանրացրած գորշագույն կրածնի հետ։ Այսպես էր ստացվում դաշտերը պարարտացնող հռչակավոր ֆոսֆորաթթվուս նյութը։ Հարավային և արևմըտյան նահանգների գյուղացիները այս նյութը տասնյակ փթերով էին գնում և իրանց արտերն էին ցանում։ Ցանելուց հետո մի քանի օր շարունակ դաշտերի վրա անտանելի սուր հոտ էր կանգնում և այդ հոտը ներս էր շնչում ինքը՝ գյուղացին, նրա սայլը և ձին։ Մինչդեռ այդ նյութի մի փութն էլ բավական էր, որ պարարտացներ մի ամբողջ դեսյատին։ Բայց ինչպիսի գարշահոտություն կարող էր լինել այնտեղ, որտեղ հէնց այս նյութն էին պատրաստում և որտեղ յատակը միշտ ծածկւած էր լինում հաստ շերտով հարիւրաւոր և հազարաւոր փթերով և

ամենաչնչին քամու հետ միասին բարձրանում էր ամենանուրբ փոշու նման։

Այդ շէնքին, որտեղ արհեստական միջոցներով պարարտացնող նիւթեր էին պատրաստում, Յուրգիսն ամեն օր մօտենում էր մի այնպիսի զգացմունքով, որ կարծես թէ իրան այդտեղ է քշում մի ինչ որ աներևոյթ ոյժ։ Մայիսը զով էր, բաւականին քանակութեամբ բանուորներ կային և Յուրգիսը գոհ մնաց, որ իրան չընդունեցին։ Բայց յուլիսեան սարսափելի շոգերից յետո թարմ ուժերի կարիք զգացուեց նաև այս դժոխքի համար։ Մի անգամ, երբ Յուրգիսը ցերեկուա ժամը երկուսին այնտեղ գնաց վերահսկիչը կանչեց նրան։ Յուրգիսը սարսափից դողաց։ Բայց տասը րոպէից յետո նա բլուզը հագաւ և աշխատանքի կանգնեց։ Նա նորից սկսեց կռուել և յաղթահարել։

Իրան տուած աշխատանքը նա մի քանի րոպէում սովորեց։ Նրան կանգնեցրին ջաղացի մօտ, որը ոսկորներ էր մանրում և դուրս շպրտում բարակ դարչինագոյն փոշի։ Յուրգիսի ձեռը թիակ տուին և նա պէտք է հաւաքէր այս դարչինագոյն նիւթը և թափէր վագոնետկայի վրա։ Այդ միևնոյն աշխատանքն ուրիշ վեց հոգի էլ էին կատարում։ Սակայն նրանց չէր կարողանում տեսնել։ Աչքերը փակող փոշու միջից վեց քայլից այն կողմ մի որևէ բան չէր կարելի տեսնել։ Հինգ րոպէ անց նա գլխից սկսած մինչև ոտներն ամբողջովին ծածկուած էր

այս փոշով։ Նրան սպունգ տւին, որ բերանին կապի և դրա միջոցով շնչի. ջերմութեան աստիճանը քառասունից բարձր էր։ Իւրգիսն աշխատում էր ժիլետը և բլուզը հանած և փոշին շորերի բաց տեղերից անցնում էր մարմինը։ Նրա գլուխն անմիջապէս ցաւեց. արիւնը խփում էր քունքերում և հազիւ էր կարողանում ձեռքերը շարժել։ Բայց և այնպէս աշխատում էր կատաղի լարւածութեամբ, միշտ աչքի առաջ ունենալով անգործութեան սարսափը։ Կէս ժամից յետո սկսեց սարսափելի փսխել։ Վերահսկիչը նրան ասաց, որ հաստատ ցանկութիւն ունեցողը կարող է վարժւել այս աշխատանքին։ Բայց այժմ Իւրգիսը տեսաւ, որ այս գործին պիտի վարժեցնել ոչ մի այն իւր կամքը, այլ և ստամոքսը։

Օրւա վերջին նա հազիւ էր կանգնում ոտքերի վրա և իբրև բացառութիւն վճռեց տրամվայով տուն գնալ։ Յետագայում նա ծիծաղով էր դիտում հասարակութեան վրա թողած իւր տպաւորութիւնը աշխատանքից յետո, երբ տուն էր վերադառնում տրամվայում նստած։

Բայց առաջին անգամ այնքան վատ էր նա իրան զգում, որ բոլորովին ոչինչ չնկատեց։ Նա չնկատեց, թէ ինչպէս վագոնում բոլորն էլ սկսեցին հազալ և քթերը թաշկինակներով բռնել, կատաղի հայեացքներ գցելով նրա վրա։ Շուտով մէջ լցւած վագոնն սկսեց դատարկւել, ով որ տեղ չգտաւ պլոշչադկաներում, տրամվայից իջաւ ոտով գնալու համար։

Տուն վերադառնալուց հետո անմիջապես նրա շուրջը տարածվեց իր հետ բերած սարսափելի հոտը: Նա գարշահոտության անտանելի աղբյուր դարձավ: Սեղանի վրա դրված կերակուրն անմիջապես ծծվեց այդ հոտով և բոլորի սրտերն էլ սկսեցին խառնել: Ինքն՝ Յուրգիսը մի քանի օր շարունակ ոչինչ չէր կարողանում ուտել: Բերանը և կոկորդը թույնով լիքը լցված էին. այդ թույնը նա կուլ էր տալիս աշխատանքի ժամանակ: Սակայն, անցավ մի շաբաթ և նա այնպես վարժվեց, որ սկսեց ուտել, ճիշտ է, գլուխը ցավում էր, բայց սա չէր խանգարում նրան աշխատելու:

VII

ՊՈՌՆԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Ամեն երեկո Իւրգիսը և Օնան հանդիպում էին միմիանց պայմանաւորուած տեղում և լուռ գնում էին տուն: Օնան որ մի ժամանակ այնպէս երգում էր, ինչպէս թռչուն, այժմ սովորեց ամբողջ ժամերով բառ անգամ չարտասանել: Նա իրան անբախտ և հիւանդ էր զգում և միայն մեծ չարչարանքով էր կարողանում տուն հասնել: Տանն ուտում էին այն, ինչ որ ունէին և որովհետև խօսելու նիւթ չունէին, բացի միայն իրանց դժբախտ դրութեան մասին, նրանք իսկոյն ընկնում էին անկողինների վրա և այդպէս ճնշուած մոռացութեան մէջ այնքան էին պառկած մնում, մինչև որ գալիս էր այն ժամը, երբ հարկաւոր էր տեղերից ցատկել և վազել դէպի մեքենան: Նրանց բոլոր զգացումներն այնպէս էին բթացել, որ մինչև անգամ կորցրել էին սովից տանջուելու ընդունակութիւնը: Սակայն նրանց հոգիները դեռ բոլորովին չէին մեռել: Երբեմն նրանք, կարծես թէ, խելքի էին գալիս, և սա սարսափեցնում էր նրանց: Նրանք սկսում էին յիշել իրանց անցեալ ուրախութիւնները, խորտակուած երազները և յոյսերը, բայց աւելի ուժեղ էին զգում

այժմեան կեանքի անմխիթարութիւնը և խաւարը։ Նրանք այլևս չէին գանգատւում։ Նրանց ճնշում էր այն սարսափելի գիտակցութիւնը, որ ճակատագիրը վերջնականապէս յաղթել է նրանց։

Ինչպէս երևում էր Օսան բոլորովին հիւանդ էր։ Նա սկսեց հազալ ճիշտ այն հազով, որը Ծեր Անտոնին գերեզման էր տարել։ Հետզհետէ հազը ուժեղանում էր, իսկ գիշերները չէր կարողանում քնել։ Երբեմն գլխի անտանելի ցաւ էր սկսւում և առանց պատճառի լացը բռնում։ Երբեմն էլ տուն էր վերադառնում դողով բոլորովին բռնւած, ընկնում էր անկողնի վրա և անվերջ հեծկլտում։ Իւրգիսը յուսահատ դրութեան մէջ էր, նա դիտում էր նրան ինչպէս անտեսանելի թշնամուց վիրաւորւած գազան։

Ջղաձգութիւններն սկսւեցին ամառը, և ամէն անգամ էլ Օսան մի ինչ-որ անհասկանալի երկիւղով բռնւած խոստանում էր, որ սա այլևս չի կրկնւի, բայց ուժ չունէր իր խոստումը պահելու։ Օսայի ամէն անգամ ընկնելուց յետո Իւրգիսն աւելի էր վախենում։ Նրան թւում էր, որ Օսայի հետ մի ինչ-որ խորհրդաւոր—սարսափելի բան է կատարւում։ Օսան թունաւորւած գազանի տեսք ունէր, ջղայնական հեծկլտումների ժամանակ նրա բերնից դուրս էին թռչում յուսահատական խօսքեր, որոնք սարսափեցնում էին Իւրգիսին։ Բայց հանգիստ րոպէներին նա համեմատաբար քիչ էր անհանգստանում, որովհետև ինքն էլ էր վշտից բթացել։

Նորից վրա հասավ ձմեռը։ Հոկտեմբերն էր, և մոտենում էր նախատոնական աշխատանքի եռանդուն շրջանը։ Կոնսերվների գործարաններում աշխատում էին մինչև ուշ գիշեր, պատրաստում էին ծննդյան տոների համար։ Երբեմն Օնան ստիպված էր լինում գործարանում մինչև օրական տասնհինգ—տասնվեց ժամ մնալ, ազատվում էր միայն կես գիշերին։ Յուրգիսն առաջարկեց նրան սպասելու իրան երեկոները միասին տուն վերադառնալու համար, բայց նա դիմադրում էր։

Դեկտեմբերի սկզբին սկսվեց առաջին թիփին։ Յուրգիսը վերադարձավ տուն և պառկեց, նա սպասում էր կնոջը, բայց աննկատելի պինդ քնեց։ Երբ զարթնեց՝ առաջը կանգնած էր մորաքույր Էլզբեթը և ինչ որ բաներ էր ասում։

— Օնան տուն չի վերադարձել,—կրկնեց նա։

— Իսկ ժամը քանի՞սն է—հարցրեց Յուրգիսը։

— Արդէն առավոտ է, վեր կենալու ժամանակ։ Օնան տանը չի գիշերել։

Յուրգիսը վեր ցատկեց, հագավ երկարավիզ կոշիկները, բլուզը և դուրս թռավ։ Փողոց դուրս եկավ, բայց դեռ չգիտէր, թէ ուր գնա։ Դեռ մութ էր, ինչպէս գիշեր, և ձյունի ծանր փաթիլներ էին թափվում։

Նա վազեց դէպի Անասունների Բակերը։ Գործարանի գրասենեակում նրան ասացին, որ նրա կինը նախորդ օրը իր ընկերուհիների հետ

միասին վերջացրել էր աշխատանքը։ Իւրգիսն ոչինչ չէր մնում անելու, եթէ ոչ միայն այդտեղ սպասելու կնոջը, գործարանի մուտքի մօտ։ Իւրգիսը գրասենեակում կանգնեց պատուհանի մօտ։ Արդէն բաւականին լոյս էր, այնպէս որ կարելի էր անցորդներին նկատել։ Բառորդ ժամից յետո թափուող ձեան քօլի միջից նա նկատեց ծանօթ կերպարանքը և վրա պրծաւ նրան դիմաւորելու։ Դա, իսկապէս Օնան էր։ Հենց որ Իւրգիսն տեսաւ՝ Օնան առաջ վազեց և համարեա ընկաւ նրա ձեռքերի վրա։

— Ո՞րտեղ էիր—հարցրեց նա։

Օնան դժւարութեամբ էր շնչում և միանգամից չպատասխանեց։

— Ես չկարողացա տուն հասնել,—վերջապէս շշնջաց նա։—Եադվիգի մօտ եմ գիշերել։

Իւրգիսը թեթեւացած շունչ քաշեց։ Եադվիգան նրանց ծանօթ մի կին էր, որ ապրում էր Անաստունների Բակերի մօտ։ Բայց Օնան լաց էր լինում և ամբողջովին դողդողում էր, կարծես թէ պատրաստւում էր ջղաձգութիւնները նորից սկսելու։

— Ի՞նչ է, - բացականչեց նա,—ի՞նչ է պատահել քեզ հետ։

— Ես այնպէս վախենո՜ւմ եմ Իւրգիս,—ասաց նա, հպւելով նրան.—Այնպէս ծա՜նր է։

Օնայի գտնւելը Իւրգիսն հանգստացրեց և նա էլ ուրիշ բանի մասին չէր մտածում։ Օնայի

անսովոր վրդովմունքը Իուրգիսին էլ տարօրինակ չէր թվում։ Նա թույլ տվեց, որ Օնան լացը վերջացնի և որպես գի չկորցնի օրվա աշխատավարձը շտապեց աշխատանքի։ Օնային թողեց գործարանի դռների մոտ, նա սփրթնած էր մահու չափ և աչքերը լիքն էին աննկարագրելի սարսափով։

Էլի մի քիչ ժամանակ անցավ։ Մոտենում էր ծնունդը։ Որովհետև անընդհատ ձյուն էր գալիս, Իուրգիսն ամեն առավոտ մութը ճեղքելով կնոջը ուղեկցում էր մինչև գործարան, բայց շուտով այս բոլորին էլ վերջ տրվեց։

Այս պատահեց ծննդից երկու օր առաջ։ Էլզբետը տուն վերադարձավ մոտավորապես կես գիշերին և երբ իմացավ, որ Օնան դեռ չի վերադարձել՝ վախեցած ճչաց։ Նա Իուրգիսին զարթեցրեց։ Իուրգիսը տեղում նստեց, բարկացավ և սկսեց լսել, թե ինչ է ասում Էլզբետը։ Ինարկե, Օնան շատ է հոգնել, դուցե չի կարողացել տուն վերադառնալ և նորից Եադվիգի մոտ է գնացել գիշերելու։ Իուրգիսն ասաց իր այս ենթադրությունը, շուռ եկավ պատի կողմը և սկսեց նորից խռմփալ։ Սակայն, առավոտյան նա սովորականից վաղ տնից դուրս եկավ։ Եադվիգա Մարցինկուսը Անաստունների Բակերի մոտ էր ապրում, իր մոր և քույրերի հետ։ Իուրգիսը հեռուից պատուհանում լույս նկատեց։ Նա մոտեցավ և դուռը ծեծեց, համարյա հուսա-

ցած լինելով, որ Օնան դուռը բաց կանի։ Բայց Օնայի փոխարէն նա տեսաւ Յադվիգայի փոքր քույրերից մեկին։

— Ո՞րտեղ է Օնան,—հարցրեց նա։ Աղջիկը զարմացած նրան նայեց։

—Օնա՞ն։

— Հա՛, էլի,—ասաց Յուրգիսը,—մի՞թե նա այստեղ չէ։

— Ոչ,—պատասխանեց աղջիկը։

Յուրգիսը դողաց։ Մի րոպէից յետո դռների արանքից նայեց Յադվիգան։ Հենց որ տեսաւ այցելուին՝ նա թաքնուեց և խնդրեց իրան հագնուելու ժամանակ տալ։

— Մի՞թե Օնան ձեզ մոտ չէ,—անհանգստացած հարցրեց Յուրգիսը։

— Ոչ,—ասաց Յադվիգան,—ինչո՞ւ եք կարծում, որ նա ինձ մոտ է։ Մի՞թե նա ցանկացել է ինձ մոտ գալու։

— Ոչ,—պատասխանեց Յուրգիսը.—բայց գիշերը նա տուն չի վերադարձել. իսկ ես կարծում էի, որ նա ձեզ մոտ է, ինչպես որ անցեալ անգամ։

— Ինչպես թե անցեալ անգամ,—շփոթուած նորից հարցրեց Յադվիգան։

— Անցեալ անգամ երբ նա այստեղ էր գիշերել։

— Այստեղ ինչոր սխալ բան կա,—արագութեամբ վրա բերեց Յադվիգան.—Օնան մեզ մոտ երբեք չի գիշերել։

— Նա ասաց, որ հենց ձեզ մոտ է եկել, պնդեց Ուրգիսը,— նա ինձ պատմել է ձեր ապրուստի մասին, ձեր խոսքերը հաղորդեց։ Գուցէ դուք մոռացե՞լ էք։

— Դէ, ոչ, հաւատացնում եմ ձեզ,— նորից կրկնեց Եագվիգան, իսկ այդ ժամանակ լսուեց բարկացկոտ մի ճիչ.

— Եագվիգա, փակիր դուռը, երեխան կը մրսի։

Ուրգիսը մի քիչ էլ կանգնեց քթի տակ մի ինչ-որ բան փնթփնթաց և հասկանալով՝ որ այլևս ուրիշ բան չի իմանա, Ցտես բարով ասաց և գնաց։ Նա բոլորովին ապշած էր և չէր իմանում որ կողմը գնա։ Նա իրեն հարցրեց։ Օնան նրան խափել է, սուտ է ասել։ Ի՞նչ է նշանակում սա։ Նա ուժ չունէր ոչ մի բան հասկանալու և միայն մութ կերպով գուշակեց, որ սարսափելի դժբախտութիւն է պատահել։

Չիմանալով, թէ ուր գնա, նա ուղևորուեց դէպի գործարան որտեղ Օնան էր աշխատում, սպասեց մինչև ութը և յետո անցաւ արհեստանոց, որպէսզի մի որևէ տեղեկութիւն ստանա վերահսկիչից, բայց պարզուեց, որ նա իր տեղում չէր։ Էլեքտրական կայարանում մի ինչ որ բան փչացել էր և դրա համար էլ երեկուանից սկսած տրամվայը չէր գործում, այնպէս որ քաղաքից գալ չէր կարելի։ Ուրգիսին այս բացատրութիւն տուող աղջիկը շատ զբաղուած էր և

դժգոհութեամբ էր պատասխանում։ Յետոյ սայ-լակով մի բանւոր եկաւ։ Նա գիտէր, որ Իւր-գիսն Օնայի ամուսինն է, և դրա համար էլ հե-տաքրքրուեց երիտասարդ կնոջ հանելուկային ան-յայտութեան հարցով։

— Գուցէ քաղաքից տուն չի եկել տրամ-վայը չգործելու պատճառով,—նկատեց նա։

— Ոչ,—ասաց Իւրգիսը,—նա երբէք քա-ղաք չի գնում։

— Չի՞ գնում,—երկարացրեց բանւորը։ Իւր-գիսին թւաց, որ նա և աղջիկը աչքով արին մի-մեանց։

—Իսկ ի՞նչ գիտէք այդ մասին,—հարցրեց նա։

Բայց բանւորը սայլակը քաշ տալով արդէն հեռացել էր։

— Ոչինչ չգիտեմ,—ասաց նա, նայելով մի կողմը.—Ի՞նչպէս կարող եմ իմանալ, թէ ուր է գնում ձեր կինը։

Իւրգիսը նորից դուրս գնաց և գործարանի առաջ սկսեց ետ ու առաջ քայլել։

Այսպէս իզուր սպասեց ու ամբողջ առաւօտն անցկացրեց։ Կէսօրից յետո նա ուղևորուեց դէպի տուն։ Տրամվայն արդէն սկսել էր գործել և նրա մօտով անցան մի քանի լիքը վագոններ։ Իւրգի-սը մեքենայաբար նրանց էր հետևում։ Յանկարծ ճչաց նա, սառեց իր տեղում և յետո անմիջա-պէս սկսեց վազել, համարեա տրամվայից ետ չմնալով։ Գոյնը քցած կարմիր ծաղիկով սև գլխար-

կը, գուցէ Օնայի գլխարկն էր, բայց սա անհաւատալի էր թւում։ Այս րոպէիս կպարզւի, որովհետև երկու թաղամասից յետո նա, եթէ սա իսկապէս Օնան էր, պէտք է իջնի։ Իւրգիսը քայլերը դանդաղեցրեց։

Օնան դուրս եկաւ վագոնից և անցաւ ան-կիւնի միւս կողմը։

Իւրգիսը նրա ետևից ընկաւ։ Նա տեսաւ, թէ ինչպէս Օնան տուն մտաւ։ Այն ժամանակ նա ետ դարձաւ և սկսեց մայթի վրա խոշոր քայ-լերով հինգ րոպէի չափ ման գալ, ատամները սեղմելով հոգեկան ցաւից։ Յետո շարժւեց կնոջ հետքի ուղղութեամբ։

Հէնց որ դուռը բաց արեց Էլզբետին տե-սաւ։ Էլզբետը ոտների մատների վրայով էր քայ-լում և մատը շրթունքներին դրեց։

— Կամաց,— շշնջաց նա,— նա քնած է։ Նրա դրութիւնը վատ է։ Նա ասում է, որ ամբողջ գիշերը թափառել է փողոցներում ու չի կարո-ղացել տան ճանապարհը գտնել։Ես հազիւ հանգըս-տացրի նրան…

— Ե՞րբ վերադարձաւ—հարցրեց Իւրգիսը։

— Առաւօտեան, քո գնալուց անմիջապէս յետո,—պատասխանեց Էլզբետը։

— Իսկ յետո դուրս գնա՞ց։

— Ոչ։ Օնան շատ թոյլ է, Իւրգիս, նա…

Իւրգիսը սեղմեց ատամները։

— Սո՛ւտ ես ասում,—ասաց նա և հրելով

նրան՝ ննջարան մտաւ։ Նրա կինը նստած էր անկողնում և վախեցած նրան էր նայում։ Իրգիսը դուռը փակեց։

— Որտե՞ղ էիր դու,— հարցրեց նա։

Օսան նստած էր՝ ջղաձգաբար սեղմած ձեռքերը ծնկների վրա դրած, նրա երեսը սպիտակ էր, ինչպէս թուղթ։ Նա մի քանի անգամ շունչը հաւաքեց, նախ քան ուժերը հաւաքելը, որպէս զի կարողանա պատասխանել։ Յետոյ սկսեց կամաց, ընդհատուող ձայնով.

— Իրգիս, կարծես թէ խելքս գլխումս չէր։ Ես քայլում էի, քայլում ամբողջ գիշերը և տուն հասայ միայն առաւօտեան։

—Քեզ անհրաժեշտ էր պառկել,—կտրուկ նկատեց Իրգիսը.—իսկ երկրորդ անգամ ինչո՞ւ տնից դուրս եկար։

— Ես պէտք է խանութ գնայի, թոթովեց նա հազիւ լսելի։

— Սո՛ւտ է,— ասաց Իրգիսը և պինդ սեղմեց նրա ձեռքերը,—ինչո՞ւ ես խաբում։

- Իրգի՛ս,—վախեցած ճչաց նա,—Իրգիս, ի՞նչ է պատահել քեզ։

— Դու խաբել ես ինձ, ասում եմ ես քեզ, —գոռաց նա,— անցեալ անգամ դու պատմեցիր, որ իբր թէ Եազվիգի մօտ ես գիշերել, իսկ դա ճիշտ չէ։ Դու այն ժամանակ էլ քաղաքում էիր եղել, մի ինչ որ տեղ։ Ես տեսայ, որ դու տրամվայով գնում էիր։ Որտե՞ղ ես եղել։

թափանցելու։ Բայց յանկարծ մի սոսկալի միտք նրա միտքը մթնացրեց և յետ թռաւ կատաղի գոռոցով։ Նա յենւեց պատին, նայեց չորս կողմը և շշնջաց.

— Յիսո՛ւս, Մարիա՛մ։

Մի քիչ յետո՝ նա կռացաւ Օնայի վրա, որը պառկած էր նրա ոտքերի մօտ, և բռնեց նրա կոկորդը։

— Քեզ ո՞վ տարաւ այնտեղ,—ասաց նա խուպոտ ձայնով։

— Կօննօրը, վերահսկիչը։

Նա սեղմում էր Օնայի կոկորդը, և միայն այն ժամանակ, երբ Օնայի աչքերը յետ գնացին՝ գլխի ընկաւ, որ խեղդում է նրան։ Այն ժամանակ նա բաց թողեց և երբ Օնան նորից աչքերը բացեց, նա բոլորովին մօտիկ կռացաւ։

— Ասա՛ ինձ բոլորը,—շշնջաց նա։

Օնան պառկած էր առանց շարժւելու։ Իւրգիսն ստիպւած էր շնչառութիւնը պահելու, որպէս զի լսի նրա խօսքերը։

— Ես չէի ուզում,—պնդում էր Օնան,—բայց ստիպւած եղա գիջելու։ Այլապէս մենք բոլորս կը կորչէինք։ Նա ինձ ասաց, որ ինձ դուրս կանի, որ մենք բոլորս էլ առանց աշխատանքի կըմնանք։ Նա սպառնում էր, որ մեզ բոլորիս էլ կոչնչացնի։

— Ե՞րբ սկսւեց դա,—հազիւ լսելի ասաց Իւրգիսը։

նրան՝ ննջարան մտաւ: Նրա կինը նստած էր անկողնում և վախեցած նրան էր նայում: Իրգիսը դուռը փակեց:

— Ո՞րտեղ էիր դու,— հարցրեց նա:

Աննան նստած էր՝ ջղաձգաբար սեղմած ձեռքերը ծնկների վրա դրած, նրա երեսը սպիտակ էր, ինչպէս թուղթ: Նա մի քանի անգամ շունչը հաւաքեց, նախ քան ուժերը հաւաքելը, որպէս զի կարողանա պատասխանել: Յետոյ սկսեց կամաց, ընդհատուող ձայնով.

— Իրգիս, կարծես թէ խելքս գլխումս չէր: Ես քայլում էի, քայլում ամբողջ գիշերը և տուն հասա միայն առաւօտեան:

— Քեզ անհրաժեշտ էր պառկել,— կտրուկ նկատեց Իրգիսը.— իսկ երկրորդ անգամ ինչո՞ւ տնից դուրս եկար:

— Ես պէտք է խանութ գնայի, թոթովեց նա հազիւ լսելի:

— Սո՛ւտ է,— ասաց Իրգիսը և պինդ սեղմեց նրա ձեռքերը,— ինչո՞ւ ես խաբում:

— Իրգի՛ս,— վախեցած ճչաց նա,— Իրգիս, ի՞նչ է պատահել քեզ:

— Դու խաբել ես ինձ, ասում եմ ես քեզ,— գոռաց նա,— անցեալ անգամ դու պատմեցիր, որ իբր թէ Եադվիգի մօտ ես գիշերել, իսկ դա ճիշտ չէ: Դու այն ժամանակ էլ քաղաքում էիր եղել, մի ինչ որ տեղ: Ես տեսա, որ դու տրամվայով գնում էիր: Ո՞րտեղ ես եղել:

— Հենց առաջին իսկ օրերից ինձ հանգիստ չէին թողնում։ Այս բոլորն սարքել էր տիկին Հենդերսոնը։ Նա ինձ ատում էր... իսկ նրան... նրան էլ դուր էի գալիս։ Նա ամեն կերպ աշխատում էր ինձ հաճոյանալ։ Ինձ հետ խոսակցեց։ Փող առաջարկեց։ Յետո սկսեց սպառնալ։ Նա գիտէր, որ սովածությունից կոտորւում ենք։ Նա ճանաչում է քո վերահսկիչին։ Նա խոստացաւ մեզ բոլորիս սովամահութեան դուռը հասցնի, իսկ յետո ասաց, որ եթէ ես... եթէ ես... այն ժամանակ մենք բոլորս էլ աշխատանք կունենանք։ Մի անգամ նա ինձ բռնեց... և բաց չթողեց... և... և...

— Ո՞րտեղ պատահեց այդ։

— Գործարանում... Շատ ուշ... երբ մնացածները գնացին։ Ես չէի կարող դիմադրել։ Ես մտածում էի քո մասին... երեխայի մասին... ես նրանից վախենում էի... վախենում էի օգնություն կանչել։

Մինչ այս նրա երեսը համարեա գորշ էր, իսկ այժմ յանկարծ խիստ կարմրեց։

— Երկու ամիս առաջ,— շարունակեց նա —նա սկսեց պահանջել, որ ես յաճախեմ այն տունը, նորից սպառնաց, որ մեզ բոլորիս աշխատանքից կզրկի։ Երեկոները այնտեղ էի գնում, իսկ քեզ պատմում էի, որ իբր թէ գործարանում աշխատում եմ։ Երբ այն գիշերը թիփին բռնեց ես չկարողացա տուն վերադառնալ։ Իսկ

Այս խօսքերով նա խեղդպես Օնայի սիրտը ճիշտ դանակ խրեց։ Օնան երերաց, նայում էր նրան աչքերում սարսափ արտայայտելով և յե-տո, ճչաց, ձեռքերը տարածելով ընկաւ նրա վրա։ Յուրգիսը մի քայլ ետ նահանջեց, իսկ Օնան ըն-կաւ տեղաշորի վրա և երեսը ծածկելով սկսեց հեկեկալ։ Նրա ամբողջ մարմինը ցնցւում էր ջղաձգութիւններից։ Առաջ այս հեծկլտութիւնների վրա միայն մի անգամ հայեացք ձգելը Յուրգիսին խել-քահան էր անում, իսկ այժմ նա կանգնած էր անշարժ ու բռունցքները սեղմած։ Նա իր այդ տեղից դեռ էլի չէր շարժւի, եթէ Օնան մինչև անգամ իր աչքերի առաջ սպանէր իրան։ Օնա-յի աչքերին շեշտակի նայելով գոռաց.

— Դէ՛, խօսիր։

Օնան աչքերը նրա վրա գցեց, յետո ընկաւ ոտքերը և այնպէս պինդ գրկեց, որ Յուրգիսը էլ չէր կարող նահանջել։ Երեսնիվայր ընկնելով յա-տակի վրա՝ նա շարունակում էր հեծկլտալ, իսկ Յուրգիսը կատաղութեամբ գոռում էր։

— Դադարի՛ր, վերջապէս։

Օնան հնազանդւեց, խորը հոգոց քաշեց և լռեց... Միայն նրա ուսերն էին ջղաձգաբար ցնցւում։ Յանկարծ լսւեց նրա թոյլ ձայնի շշըն-ջիւնը։

— Հաւատա ինձ, Յուրգիս, հաւատա ինձ։

— Ինչի՞ն հաւատամ։

— Հաւատա, որ սա յանուն սիրու էր։ Մի

երեկ տրամվայը կանգնեց։ Հենց սա մեզ կործանեց... Ես ուզում էի ոտքով գալ—բայց չկարողացա։ Ես ուզում էի, որ դու ոչինչ չիմանայիր... Ամեն ինչ կանցներ, թե դու միայն չիմանայիր։ Ես արդեն էլ Նրան դուր չեմ գալիս և շուտով ինձ հանգիստ կթողներ։ Իսկ այժմ... դու կսպանես Նրան և մենք բոլորս կկորչենք։

Նա սա արտասանեց միատեսակ ձայնով. պառկել էր, ինչպես մեռած մարդ, աչքերը պինդ փակած։ Իւրգիսը էլ ոչ մի խոսք չասեց՝ մի հայացք անգամ չձգելով կնոջ վրա՝ դուրս գնաց, ինչպես որ առանց գլխարկ էր, դրսի դուռն էլ ետևից չփակեց և երբ միայն դրսումն էր՝ սկսեց վազել ինչքան ուժ ունէր։

VIII

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՄՈԿՐԱՏԻԿ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Նա վազում էր ինչպես խելագար, դեմքը վայրենի արտահայտություն էր ստացել և շուրջն էլ չէր նայում։ Նա տեսավ մոտեցող տրամվայը և թռավ վագոնը։ Նրա աչքերը վայրենի էին, մազերը ծածանվում էին և ինչպես վիրավոր եզ՝ խուպոտ շնչում էր։ Տրամվայում գտնվող անցորդները սակայն առանձին ուշադրություն չդարձրին նրա վրա։ Երևի նրանց թվում էր, որ այդպիսի սարսափելի հոտ ունեցող մարդը պետք է ունենա նաև համապատասխան տեսք։

Հազիվ էր վագոնը հավասարվել Անասունների Բակերին, երբ Յուրգիսը ցած թռավ և նորից սկսեց վազել։ Անցորդները ետ էին դառնում և նրա հետքից նայում էին նրան, բայց նա ոչ ոքի չէր տեսնում։ Վազելով մինչև գործարանը՝ նա ներս խուժեց արհեստանոցը, որտեղ Օնան էր աշխատում։ Նա լավ էր ճանաչում Կոննորին, բեռնակիրների կառավարչին։ Բեռնակիրներն աշխատում էին հենց այդտեղ, պլատֆորմի վրա։ Աշխատանքը եռում էր։ Յուրգիսը մի արագ հա-

յեացք ձգեց չորս կողմը, բայց Կոննորն այդտեղ չէր։ Յանկարծ նա լսեց ծանօթ ձայնը, որ գալիս էր միաջանցքից, և նետուեց այն կողմը։ Նա մի Թիկնաւէտ կոպիտ դէմքով իռլանդացի էր։ Նրա վրայից օղու սաստիկ հոտ էր փչում։ Նա տեսաւ Իւրգիսին և գունաթափուեց։ Ուզեց հեռանալ, բայց այդ ժամանակ Իւրգիսը յարձակուեց նրա վրա։ Կոննորը բռունցքները բարձրացրեց և երեսն էր պաշտպանում։ Բայց միեւնոյն ժամանակ Իւրգիսն ինչքան ուժ ունէր խփեց քթի վերին մասին, աչքերը միացնող տեղին և գլորեց, ընկաւ նրա վրա ամբողջ մարմնով և սկսեց խեղդել։ Այդ րոպէին Իւրգիսը բոլորովին խելագարուել էր։ Նրա աչքերի առաջ կարմիր շրջաններ էին պտտում։ Նա գոռում էր, ինչպէս կատաղած, իր զոհին բարձրացնում էր և գլխով խփում էր յատակին։

Սարսափելի աղմուկ բարձրացաւ, կանայք ճչում էին, իսկ տղամարդիկ վրա պրծան օգնելու համար։ Բայց Իւրգիսը իսկապէս խելագարուել էր։ Երբ միայն վեց մարդ բռնեցին նրա ոտներից և ուսերից ու սկսեցին յետ քաշել - նա հասկացաւ, որ որսը ձեռքից խլում են։ Նա արագութեամբ կռացաւ և ատամները խրեց վիրաւորողի թշները։ Երբ վերջապէս նրան յետ քաշեցին բոլորովին նա ամբողջովին արիւնով էր ներկուած և բերանից կաշուի կտորներ էին կախուած։

Նրան յատակի վրա գլորեցին, ձեռքերը և ոտքերը բռնեցին և միայն սոսկալի աշխատանքից յետո՝ կարողացան նրան յաղթել։ Նա կռւում էր ինչպէս վագր, աշխատում էր, նորից թշնամու վրա յարձակւել, իսկ գոռն արդէն՞ ուշաթափ պառկած էր։ Սակայն, նորից մարդիկ յարձակւեցին եւ այն ժամանակ միայն վերջնականապէս յաղթեցին։ Նրան ձեռքերի վրա դրած տարան ոստիկանատուն եւ ուժասպառ պառկած մնաց, մինչեւ որ քաղաքից պահանջւող ոստիկանական կառքը տարաւ բանտ։ Այնտեղ նրան առանձին կամերայում փակեցին։

Կամերան նման էր մի փոքրիկ մեշոկի, հինգ ոտնաչափ երկարութեամբ եւ եօթը՝ լայնութեամբ։ Փայտէ ծանր նստարանը յատակին էր մեխւած։ Կային նաեւ փայտէ թախտեր մէկը միւսի վրա սարքած և ամէն մի թախտի վրա փռած դարմանով լիքը մի դոշակ և անհաւատալի կեղտոտ վերմակ։ Երբ Իւրգիսը դոշակը բարձրացրեց նրա տակը սկսեցին եռալ տարականները։

Ճաշով նրա համար ընթրիք բերին՝ չոր հաց ու սուրճ։ Բոլորովին մութն էր ու հանգիստ։ Իւրգիսը քնել չէր կարողանում։ Մինչեւ ուշ գիշեր նա քայլում էր յետ ու առաջ, ինչպէս գազանը վանդակում։ Նա լսեց, թէ ինչպէս մօտակա գմբեթից ժամացոյցը տասներկուսը խփեց, բայց շատ զարմացաւ, երբ շարունակեցին զանգահարել։ Սա ի՞նչ բան է։ Հրդե՞հ է

սկսել։ Ուշադրութեամբ լսելուց յետոյ՝ Իւրգի-սը վերջապէս գլխի ընկաւ, որ եկեղեցու զան-գերն էին տալիս։ Ամէն տեղից նոյնպէս սկսե-ցին զանգերը տալ։ Եւ Իւրգիսը յանկարծ գու-շակեց, որ դրանք Ծննդեան զանգերն էին. ճրա-գալոյցն էր։

Նա յիշեց հեռու հայրենիքը՝ Լիտվայի Ծնուն-դը։ Բայց այստեղ էլ, չնայած բոլոր դժբախտու-թիւններին՝ պահել էին այս տօնը։ Սա էր մի քիչ լուսաւորում նրանց մռայլ կեանքը։ Անցեալ տարի, չնայած որ Իւրգիսը և Օնան մինչև ճրա-գալոյցի երեկոն աշխատում էին և Ծննդեան ա-ռաջին օրն էլ սովորական ժամին գործարան գնա-ցին, բայց և այնպէս կարող էին երեխաների հետ միասին գլխաւոր փողոցում զբօսնել և հի-ացմունքով դիտում էին պատուհաններում դրուած համեղ ուտելիքները և խաղալիքները։ Նրանք էլ իրենց հետ մի մեծ կողով էին վերցրել՝ գնած իրե-րի համար։ Նրանք տապակած խոզի միս գնեցին, կաղամբ, սպիտակ հաց, իսկ այժմ նա բանտում է գտնւում, կինը հիւանդ է և ամբողջ ընտանի-քը բոլորովին անօգնական դրութեան մէջ է մնա-ցել։ Եւ ինչո՞ւ են զանգերը տալիս, յիշեցնում են Ծննդեան օրերը։

Ծննդեան այս գիշերը Իւրգիսի կեանքի հա-մար օրհասական նշանակութիւն ունեցաւ։ Նրա հոգում բռնկւում էր ապստամբութեան բոցը։ Նա այլևս չէր հաւատում ոչ օրէնքներին և ոչ էլ ար-

դարութեանը։ Նա բաւականին զարգացած չէր, որ հասկանար չարիքի իսկական պատճառը, որը վերջ ի վերջո խորտակեց նրա կեանքը։ Նա չգիտէր, որ ինքը կապիտալիստների շահագործման միայն սովորական զոհն էր։ Կապիտալիստները միացել են և իրանց ձեռքն են վերցրել երկրի կառավարութիւնը, դարձել են տէրեր, դատաւորներ և օրինականութիւնը փոխել են զզուելի կամայականութեան։ Նա միայն մի բան գիտէր, որ անարդարութեան զոհն է, և որ օրէնքը, հասարակութիւնը նրա թշնամիներն են։ Իւրաքանչիւր ժամ նրա հոգին աւելի ու աւելի մռայլւում էր և ծրագրում էր վրէժխնդրութեան նոր պլաններ։

Մի շաբթից յետո նրան դատեցին։ Երբ նրան նիստի դահլիճը տարան՝ նա իսկոյն և եթ նկատեց մօրաքոյր Էլսբետին և փոքրիկ Կատրինային։ Նրանք նստած էին հանդիսականների վերջին կարգում, սփրթնած էին և վախեցած։ Նա նստեց մեղադրեալների նստարանի վրա և անհանգստութեամբ նրանց կողմն էր նայում։ Օնան նրանց հետ չէր և նա երևակայում էր, որ ինչ որ սարսափելի բաներ են պատահել։ Յանկարծ նա ուղղւեց և արիւնը խփեց նրա գլխին։ Ներս մտաւ երեսը կապած մի մարդ, բայց չնայած այս փոփոխութեան՝ Իւրգիսն իսկոյն ճանաչեց։ Դա Կօննօրն էր։ Իւրիգսը դողդողաց և կռացաւ, կարծես թէ պատրաստւում էր ցատկելու։ Կօն-

նօրը կենդանի էր մնացել և սա Իւրգիսի համար մեծ հիասթափութիւն էր։ Բայց միւս կողմից, հաճելի էր, որ իւր թշնամուն այդպէս այլանդակւած է տեսնում։ Կօննօրը և գործարանում ծառայող փաստաբանը, որը դուրս էր գալու այստեղ իբրև մասնաւոր մեղադրող՝ գրաւեցին իրանց տեղերը։ Պրիստավը Իւրգիսի անունը տւեց և նրան սեղանի մօտ տարան։

Կօննօրը մօտեցաւ ցանկապատին, երդւեց և սկսեց պատմել, թէ ինչպէս է պատահել դէպքը. մեղադրւողի կինը ծառայում էր իւր բաժանմունքի կողքին գտնւող արհեստանոցում։ Անզգամ կին էր, դրա համար էլ դուրս արին և բացի դրանից վատ վերաբերմունք էր ցոյց տւել իր նկատմամբ։ Կէս ժամից յետո իւր վրա յարձակւեց մեղադրեալը, վայր ձգեց իրան և քիչ էր մնում խեղդէր։ Դատաւորը դարձաւ Իւրգիսին.

— Ի՞նչ կարող էք ասել ձեզ արդարացնելու համար։

Իւրգիսը շւարել էր։ Երկու ու կէս տարւա ընթացքում նա սովորել էր անգլիերէն լեզուն և բաւականին էլ ազատ էր խօսում, այնքան, որ քան որ խօսքը վերաբերում էր սովորական հարցերին։ Բայց նա բառերի պաշար չունէր, որպէս զի կարողանար բացատրել, թէ ինչպէս այդ մարդը վախեցրել է և գայթակղեցրել է իւր կնոջը։ Նա բաւականին ժամանակ կակազում էր և շփոթում ասածները և վերջապէս խնդրեց, որ

թարգմանիչ տանը։ Երբ թարգմանը եկավ՝ Իրգինը բացատրեց գործն իր ամբողջ մանրամասնությամբ։ Թարգմանն ուզում էր բոլորը պատմել դատավորին, բայց վերջինս նրա բացատրության կեսին ընդհատեց։ Նա տուն էր շտապում և ուզում էր նիստը շուտով վերջացնել։

— Այո, ես հասկանում եմ, — ասաց նա, — բայց ինչո՞ւ համար ձեր կինը չի գանգատվել գործարանի տնօրենին կամ տեղից չի հրաժարվել։

Իրգինն ուզում էր սկսել իր բացատրությունը, որ նրանք աղքատ են և որ նոր աշխատանք գտնելը շատ դժվար է,

— Այո, — նորից ընդհատեց դատավորը, — և դուք դրա համար ավելի լավ համարեցիք նրա վրա հարձակվելու և քիչ էր մնում, խեղդեիք։

Նա դարձավ դեպի վկաները և հարցրեց։

— Միստր Կոննոր, այս ցուցմունքների մեջ կա՞ արդյոք ճշմարտության մի փոքրիկ նշույլ անգամ։

— Սուտ է սկզբից մինչև վերջը, — պատասխանեց վերահսկիչը, — նրանք միշտ այդպիսի պատմություններ են հնարում, երբ գործարաններում նրանց կանանց տեղ չեն տալիս։

— Ես այդպես էլ կարծում էի, — վրա բերեց դատավորը, — առաջին անգամ չէ, որ ինձ այդպիսի բաներ են պատմում։ Բայց նա լավ է ձեզ արել։ Երեսուն օր բանտ և դատարանի ծախսերը։

Իւրգիսը յանկարծակի եկաւ։ Միայն այն ժամանակ, երբ ոստիկանը հրեց նրան և յետ տարաւ՝ նա հասկացաւ, որ վճիռն արդէն ար-ձակուած է։

— Երեսուն օ՞ր,— բացականչեց նա խեղ-դուող ձայնով։ — Իսկ ի՞նչ կլինի իմ ընտանիքիս դրութիւնը։ Ես կին ու երեխա ունեմ, նրանք ոչ մի կոպէկ չունեն, սովից կմեռնեն։

— Այդ մասին պէտք առաջ մտածէիր և յետոյ ծեծը սկսէիր,— չոր ձայնով ասաց դատա-ւորը և անցաւ հետևեալ գործի քննութեանը։

IX

ԿԱՏԱՍՏՐՈՖԻ ՎԱԽՃԱՆԸ

Ուրգիսը իր երեսուն և երեք օրը նստեց Ջիկագոյից տասնհինգ վերստ հեռավորության վրա գտնվող բանտում։ Դրա համար էլ նրա հարազատները չէին այցելում նրան, ինքն էլ ոչ մի լուր չուներ տնից։ Վերջապես դուրս եկավ բանտից և գնաց տուն. իր ընտանիքը նա գտավ ամենից աղքատ դրության մեջ։ Նրանց բնակարանից դուրս էին արել և իբրև ողորմածություն ապաստարան էին տվել իրանց հայրենակից պանն Անելի մոտ, որը լվացքատուն էր պահում։ Ուրգիսը մեծ դժվարությամբ գտավ պանի Անելի բնակարանը։ Պառավն ինքը դուռը բաց արեց, Ուրգիսին երբ տեսավ՝ դողաց և յետ յետ գնաց։

— Ո՞րտեղ է Օնան,— գոռաց նա, հազիվ շունչ առնելով։

— Նա այստեղ է,— եղավ պատասխանը։

— Ի՞նչպես, նա դեռ ապրում է,— սկսում էր այդպիսի եղանակով խոսելու՝ բայց յանկարծ լռեց։ Վերևից մի ինչ որ տեղից մի վայրենի ականջ ծակող, սարսափելի ճիչ։ Օնայի ձայնն էր։

ճիշտ վերևից էր գալիս, տանիքից։ Իւրգիսն արագութեամբ այն կողմը թեքւեց գնալու և արդէն ոտը դնում էր, որպէս զի բարձրանա սանդուխի առաջին աստիճանը՝ պառաւը բռնեց թևից.

— Քեզ չի կարելի այնտեղ գնալ,—ասաց նա։

Իւրգիսը անորոշութիւնից և վախից համարեա խելքահան էր լինում։

— Ի՞նչ է պատահել,—գոռաց նա,—ի՞նչ բան է։

Նա լսեց, թէ ինչպէս վերևում տքում է և լաց է լինում Օնան և դէպի նրան էր ձգտում։

— Չէ, Իւրգիս, չէ,—քաշ էր տալիս ներքև պառաւը նրան.—քեզ չի կարելի այնտեղ գնալ։ Այնտեղ երեխա կա։

— Երեխա,—զարմացած կրկնեց նա,—ի՞նչ երեխա։ Մեր Անտո՞նը։

— Ուրի՛շ,—շշնջաց պառաւը։

— Ուրի՛շ,—բայց ախր դեռ շատ շուտ է։

Անելան գլխով արաւ։

— Այո՛,—բայց պատահեց։

Նորից լսեցին Օնայի ճիչերը։ Իւրգիսի ականջներում հնչում էին այդ ճիչերը ինչպէս ապտակի ձայներ։ Նա դողաց և սփրթնեց։ Իսկ Օնան ճչում էր վերևում լացող ձայնով։

— Տէր Աստուած, ինձ մահ ուղարկիր, աւելի լաւ է մեռնեմ, քան թէ այսպէս տանջւեմ։

— Վաղո՞ւց է սա սկսել,—դողդողացող ձայնով հարցրեց Իւրգիսը։

— Չէ, վաղուց չէ։ Արժէր բժիշկ հրաւիրել, բայց մենք փող չունենք, ապրելու համար էլ ոչինչ չունենք։

Իւրգիսն անձրևի տակ երկար ժամանակ վազվզում էր քաղաքում, մինչ որ յաջողեց մի մանկաբարձուհու գտնել։ Նա անողոք առևտուր սկսեց Իւրգիսի հետ և վերջապէս համաձայնեց Օնային օգնութիւն ցոյց տալ մէկ ու կէս դոլլարով։ Բայց նա փողն սկզբից էր պահանջում։ Իւրգիսը տուեց վերջին կոպէկները, ինչքան որ դեռ գրպանում էին մնացել։

Որովհետև պանի Անելի բնակարանում, որտեղ բնակւում էր մի բազմանդամ ընտանիք, բոլորովին տեղ չկար՝ Օնան տանիքում երեխան բերեց։ Տանիքը մինչև անգամ իսկական յատակ չունէր, և միայն մի քանի հին տախտակներ էին ընկած պատի տակ, որտեղ և տեղաւորուել էր հիւանդը։ Մանկաբարձուհին չէր ուզում այդ բունը բարձրանալ։ Վերջապէս նրան համոզեցին։ Իսկ Օնան շարունակում էր իր ականջ ծակող ճչոցները։

Իւրգիսի կողքին էլի նորից յայտնուեց Անելան, բռնեց նրա թևից և ասաց.

— Լսեցէք ինձ, հեռացէք այժմ։ Հեռացէք և գնացէք մի որևէ տեղ, այնտեղ։ Չէ՞ որ դուք բոլորն արիք, ինչ որ կարող էիք։

— Բայց ախր ո՞ւր գնամ,— գլուխը կորցրած հարցրեց Իւրգիսը։

— Ուր որ ուզում էք, փողոց կամ մի ուրիշ տեղ։ Բայց առաւօտւանից շուտ չվերադառնաք։

Իւրգիսը գիշերը պանդոկում անցկացրեց։ Փող չունէր, բայց ծանօթ պանդոկապետը հաւատաց նրան և պարտքով երկու բաժակ տուեց, բացի դրանից թոյլ տուեց, որ մինչև լուսանալը կրակի մօտ նստի։

Ժամը չորսին մօտ Իւրգիսին անտանելի դարձաւ այլևս սպասելը և համարեա վազելով գնաց Անելի բնակարանի ուղղութեամբ։ Խոհանոցի պատուհանը լուսաւորւած էր, վարագոյրն իջեցրւած էր, իսկ դուռը փակած չէր։ Անելյան և նրա մեծ աղջիկները նստել էին պատուհանի մօտ։ Այս անգամ տանը բոլորովին լռութիւն էր տիրում։

— Ինչպէ՞ս է,—հարցրեց նա։

Պատասխան չկար։ Բոլորը լուռ էին։

Նա նորից հարցը կրկնեց։

— Ի՞նչ կա։

Անելյան գլուխը ճօճեց։

— Դեռ ոչինչ յայտնի չէ։

Խեղճը համարեա քարացաւ։

— Բայց ես նրա ձայնը այլևս չեմ լսում, —շշնջաց նա։

Նա վաղուց է լռել, ասաց Անելյան։

Նորից թագաւորեց լռութիւնը։ Բայց յետոյ մի ձայն լսւեց.

— Է՜յ, ո՞վ կա այդտեղ։

Կանայք վազեցին դեպի հարևան սենեակը, բայց Իւրգիսը կանգնած մնաց, նա դողում էր ու սփրթնել էր։ Նա հասկացաւ, որ մանկաբարձուհին ցած է իջնում, աստիճանները դողդողում էին նրա ծանր քայլերի տակ։ Նա բարձր ձայնով հայհոյում էր։

Վերջապէս նա երևաց, բարկացած էր ու հեւում էր։ Իւրգիսը նայեց նրան և յանկարծ սպիտակեց, ինչպէս կաւիճ։ Կարծես թէ մանկաբարձուհին սպանդանոցից էր դուրս եկել։ Նրա ձեռքերը մինչև արմունկներն արիւնով էին շաղաղւած, երեսը և շորերը նոյնպէս ապականւած էին։

Նա կանգնեց, ծանր շունչ քաշեց և ոչ ոք ոչ մի խօսք չասաց։

— Դէ, ես ամեն ինչ արի, ինչ որ կարող էի, չարչարւելու էլ ոչ մի միտք չկա,— յանկարծ յայտարարեց նա։

Առաջւա նման էլի բոլորն էլ լռել էին։

— Ոչինչ բան չունե՞ք խմելու,— դիմեց մանկաբարձուհին ծեր Անելլին։— Գոնէ մի քիչ կոնեակ կամ մի ուրիշ բան։

Անելյան գլխի բացասական նշան արաւ։

— Ի՞նչ մարդիկ էք. երեկ առաւօտւանից ես ոչինչ չեմ կերել և մինչև կիսամահութիւնս աշխատել եմ այստեղ... Եթէ ես իմանայի, երբեք չէի գա այստեղ այդպիսի չնչին գումարով։

Այստեղ նա յետ դարձաւ և նկատեց Իւրգիսին։ Մատը թափ տւեց, սպառնաց և ասաց.

— Բայց և այնպէս դուք միքիչ աւելի պի-
տի վճարէք ինձ։ Ես մեղաւոր չեմ, որ չկարո-
ղացայ ձեր՝ կնոջն օգնել։ Շատ ուշ կանչեցիք ինձ։
Ես այստեղ ամբողջ գիշերն եմ անցկացրել, այս
անիծւած շան բնում, որտեղ մինչև անգամ ու-
տելու բան չկայ։

Մանկաբարձուհին ծանր արտաշնչելուց յե-
տո՝ մի բոպէ լռեց։ Քրտինքի խոշոր կաթիլներն
Իւրգիսի ճակատը ծածկեցին։

— Իսկ ի՞նչպէս է Օնայի դրութիւնը,—
հարցրեց նա կամաց ձայնով։

— Ինչպէս է Օնան,—կրկնեց մանկաբար-
ձուհին,—պատահեց այն, ինչ որ պիտի պատահէր՝
հարկաւոր է տէրտէրի ետևից մարդ ուղարկել։
Նա ջահել էր, նա շատ բան կարող էր տանել և
կարող էր առողջանալ, եթէ ամեն ինչ արւէր,
ինչպէս հարկն էր։ Խեղճ աղջիկ, նա երկար դի-
մադրում էր, նա դեռ չի մեռել։

Երկիրն սկսեց դողդողալ, շարժւել, յատա-
կի տախտակները սկսեցին թռչկոտել՝ երբ Իւր-
գիսն սանդուխքով վեր բարձրացաւ։ Մի անկիւ-
նում, չոր տախտակների վրա պառկած էր Օնան։
Նա ծածկւած էր վերմակով, բայց ուսերը և մի
ձեռքը բաց էին մնացել. Նա այնպէս էլ լղարել,
որ հազիվ էր կարելի ճանաչել։ Կատարեալ կմախք
էր. երեսն սպիտակ, ինչպէս կիր։ Իւրգիսը վրա
պրծաւ և յուսահատ ճչաց.

— Օնա, Օնա։

Օնան չշարժւեց։ Նա բռնեց նրա ձեռքը և սկսեց ջղաձգաբար մատները սեղմել և կրկնում էր.

— Նայի՛ր ինձ, ես եմ, քո Իւրգիսը, ես վերադարձա, լսո՞ւմ ես ինձ—պատասխանի՛ր։

Օնայի կոպերը հազիվ նկատելի դողացին, իսկ Իւրգիսը՝ ինչպես խելագար գոռաց.

— Օ՜նա, Օ՜նա...

Նա աչքերը կեսով չափ բացեց, իսկ գիտակցութիւնը փայլեց նրա հայեացքում։ Բայց սա միայն մի վարկեան տևեց։ Իւրգիսը երկարացրեց ձեռները դէպի Օնան և անօրինակ կատաղի յուսահատութեամբ սկսեց նրան կանչել։ Նրա սիրտը կտոր կտոր էր լինում։ Սոսկալի հեկեկանքները ցնցում էին նրա ամբողջ մարմինը և արցունքները թշերի վրայով ցած էին թափւում ու Օնայի դիակը ոռոգում։ Նա գրկեց նրան և սեղմեց իր կրծքին, բայց իզուր. նա սառն էր և հանգիստ, նա մեռաւ։

Եվ երբէք Իւրգիսն Օնային չի տեսնի, չի լսի։ Մենակութեան վշտոտ զգացմունքը նրան պաշարեց։ Նա երեսի վրա ընկաւ յատակին Օնայի ճիշտ կողքին։

Առաւօտեա գորշ լոյսը վերջապէս թափանցեց պատուհանի միջից։ Իւրգիսը պառկած էր անշարժ սպիտակ դիակի հետ կողք-կողքի և չէր շարժւում։ Ժամանակ առ ժամանակ նա շուռ էր տալիս Օնայի գլուխը, նայում էր այդ սպիտակ դիակին, որը շատ ժամանակ չէր անցել, որ կեն-

Իրգիսը վրա պրծա

դանի էր։ Ու նորից սկսեց ձեռքերը կոտրատել։

— Մեռա՜ւ, մեռա՜ւ։

Բայց ախր նա համարեա երեխա էր, հազիվ տասներինը տարեկան։ Նա նոր էր սկսում ապրել և ահա մեռաւ։

X

ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԵՐ

Օնային թաղեցին չներկուած եղևնու փայտից շինուած դագաղի մէջ դրուած հասարակական հաշուով։ Ընտանիքը փող չունէր, որ թաղման ծախսերը ծածկէր։ Սակայն, Իւրգիսի վիշտը մի քիչ մեղմացել էր։ Այս դէպքում նրան քաջալերում էր փոքրիկ Անտանի ապագայի միտքը։ Այո, նա իր երեխայի նկատմամբ դաւաճան չպիտի լինի։ Երեխան չպիտի կորչի։ Հէնց վաղն և եթ Իւրգիսն աշխատանք գտնելու կգնա։

Հետևեալ օրը, լուսանալուն պէս նա ճանապարհ ընկաւ։ Նախ և առաջ նա գնաց արհեստական միջոցներով պարարտացնող նիւթեր պատրաստող գործարանը, այն նպատակով, որպէս զի նախկին տեղն ստանա։ Վերահսկիչն նրա հարցին պատասխանեց գլուխը բացասաբար թափ տալով։

— Ոչ, այդ տեղն արդէն վաղուց է գրաւած, իսկ ուրիշ տեղ չկա։

— Գուցէ, շուտով մի ուրիշ տեղ կբացուի։ Ես կարող եմ սպասել։

— Ոչ, ոչ,—նկատեց վերահսկիչը,—իզուր

յոյս մի դրէք, դուք այստեղ աշխատանք չէք ստանա։

Իւրգիսը զարմացած նրան նայեց։

— Ինչո՞ւ համար։ Մի՞թէ ես վատ եմ աշխատել։

Բայց վերահսկիչը դաժան սառնասրտութեամբ կրկնեց.

— Ես արդէն ասացի, իզուր էք այստեղ գալիս։

Այս խօսակցութիւնը Իւրգիսին առիթ տուեց մտածելու այդ մասին։ Մտատանջութեան մէջ ընկած Իւրգիսը շարունակեց իր յետագա փնտռտուները։

Երկու ժամ անցկացրեց գործարանի մեծ դռների մօտ իր նման յաջողութիւններից զուրկ մարդկանցից հաւաքուած ամբոխի մէջ։ Վերջապէս երկու ոստիկաններ եկան և իրանց փայտերով սկսեցին սպասող մարդկանց քշել։ Այսպիսով այդ օրը նա առանց գործի անցկացրեց։

Իւրգիսը շատ երկար ժամանակ էր աշխատել գործարանում և այդ պատճառով էլ բաւականին շատ ծանօթներ ունէր այդտեղ. պանդոկատէրերը երբեմն մի մի բաժակ գարեջուր և բուտերբրոդ էին տալիս նրան, այն հաշւով, որ յետո կվճարի։ Միս մորթողների միութեան նախկին ընկերներից ոմանք ծայրայեղ դէպքերում մանր փող էին տալիս նրան պարտք, դրա համար էլ նա սովածութիւնից կարող էր չմեռնել։

Ամբողջ օրերով նա վազվզում էր, աշխատանք էր փնտրում, միայն գիշերներն էր վերադառնում։ Մինչ դեռ մորաքույր Էլզբետը քաղաքային այգում ողորմություն էր խնդրում, իսկ երեխաները քիչ ու միչ բան էին բերում տուն, այնպես որ կարելի էր մի կերպ քարշ տալ իրանց կյանքերը։

Շաբաթվա վերջին դաժան ցրտերում անվերջ թափառելուց յետո բոլորովին անսպասելի Յուրգիսին խոստացան տեղ տալ Ջոնասի ապրանքներ կապկպող և դարսող մեծ գործարանում։ Բաց դռան արանքից նա տեսավ վերահսկիչին, մոտեցավ նրան և աշխատանք խնդրեց։

— Կարո՞ղ եք սայլակներ քաշել,— տակառների արանքից հարցրեց վերահսկիչը։

— Այո, պարոն,— համարեա թե ճչաց Յուրգիսը, երբ վերահսկիչը դեռ չէր վերջացրել։

— Սպանդանոցներում աշխատե՞լ եք առաջ։

— Այո։

— Որտե՞ղ։

— Երկու տեղ՝ Բրաունի սպանդանոցում և Դուրհեմի արհեստական միջոցներով պարարտացնող նյութեր պատրաստող բաժանմունքում։

— Իսկ ինչո՞ւ դուրս եկաք այդ տեղերից։

— Առաջին անգամ մի դժբախտ դեպքի պատճառով, իսկ երկրորդ անգամ կռիվ արել, մի ամսով էլ բանտ նստացրին։

— Տեսնենք։ Ես ուզում եմ ձեզ փորձել։ Վաղը եկեք։

Իւրգիսն ուրախացած տուն վազեց. նա տե՞ղ ունի։ Փնտրտուքների սարսափելի ժամանակն անցաւ։ Հետևեալ առաւօտ Իւրգիսը մի ամբողջ ժամով շուտ գործարան գնաց և դռների մօտ սպասեց։

— Ա՜, — ասաց նա սառը արտայայտութեամբ, — ես, կարծեմ ձեզ տեղ խոստացայ։

— Այո, պարոն, — պատասխանեց Իւրգիսը։

— Շատ եմ ափսոսում, բայց ես սխալւել եմ. դուք ինձ հարկաւոր չէք։

Իւրգիսը մեխուել էր տեղում։

— Ի՞նչ է նշանակում այդ, — շշնջաց նա։

— Շատ պարզ, հարկաւոր չէք, էլ ուրիշ ոչինչ։

Վերահսկիչը նրան նայեց այնպիսի սառնութեամբ և այնպէս չար, որպէս պարարտացնող նիւթեր պատրաստող գործարանի կառավարիչը։ Ոչինչ չհասկանալով Իւրգիսը շուռ եկաւ և առաջ գնաց։

Պանդոկում ծանօթները նրան բացատրեցին, որ այս բոլորը նշանակում է թէ, երևի նա «սև ցուցակն» է ընկել։ Բայց ախր նա ի՞նչ է արել։ Ծեծել է վերահսկիչի՞ն։ Տէր Աստուա՜ծ, ով կարող էր այս նախատեսնել։

Իսկ այժմ, — ասացին նրան, — նա աւելի շուտ կարող է Չիկագոյի քաղաքագլուխ լինել, քան թէ քաղաքի այս մասերում աշխատանք կգտնի։ Նրա անունն ընկել էր սարսափելի «սև

ցուցակը» և գործարանային ամեն մի գրասենյակին յայտնի է այդ։ Այս մասին մինչև անգամ լուր ուղարկեցին Միացեալ Նահանգների ամենագլխաւոր քաղաքները։ Նրան աշխատանք չեն տա ոչ սպանդանոցներում, ոչ գործարաններում, չեն թոյլ տա Անասունների Բակերում աղբը մաքրելու կամ բեռնուած վագոնէտ քաշ տալ։ Ոչ մի տեղ ոչ մի խօսք չեն ասի, բացատրութիւն չեն տա, ոչ մի տեղ Նա չի իմանա մերժման իսկական պատճառը, և որտեղ էլ որ երևա՝ Նրան ամեն տեղ միևնոյն պատասխանը պիտի տան։ Նա չի ազատւի, եթէ մինչ անգամ անունը փոխի։ Միևնոյն է երեք օրից աւել չեն թողնի աշխատելու։ Մսի տրեստը իր սեփական լրտեսներն ունի։ Շնորհիվ այդ «սև ցուցակների» գործարանատէրերը կարող են զսպել բանւորական միութիւնների գործունէութիւնը և բանւորների անբաւականութիւնները ճնշում։

Խորհրդակցելով իր հարազատների հետ՝ Նա վճռեց այսուհետև սկսի աշխատանք փնտռել Չիկագոյում։ Նա վճռեց ինքը մենակ գնա, իսկ հարազատները թող սպասեն իր աշխատանքների հետևանքներին։

Եւ ահա սկսւեցին Նրա առաջին թափառումները Չիկագոյում։ Ամբողջ օրերով Նա թափառում էր իր նման հարիւր հազարաւոր դժբախտների հետ միասին փողոցներով, որպէս զի որտեղ որ հնար կա, այնտեղ մտնի աշխատելու։

Մինչև գիշերվա կեսը նա ստիպված էր թագնվելու սանդուղքների և վագոնների տակ, ժամը տասներկուսին գնում էր քաղաքի գիշերային տներից մեկը, յատակի վրա թերթեր էր փռում և պառկում էր իր նման շատերի կողքին՝ դրանք օրավարձով աշխատողներ էին, աղքատներ և թափառաշրջիկներ, որոնք տանջվում էին զանազան զզվելի հիվանդություններով և որոնք զանազան պարազիտների իսկական բներ էին։

Վերջապես բախտը նրան ժպտաց։ Պատահաբար հանդիպելով մի մորթողների միութեան անդամ, իրան ծանոթ հին ընկերոջը, նա իմացավ, որ նա այժմ աշխատում է հնձող մեքենաներ պատրաստող հսկայական գործարանում։ Ընկերը հենց աշխատանքի էր գնում և Յուրգիսին առաջարկեց իրան ուղեկցել և խոստացավ, որ վերահսկիչի հետ կխոսի։ Գործարանի դռների առաջ ինչպես միշտ, անգործների ամբոխն էր կանգնած։ Յուրգիսի ուղեկիցը դռնապանին աչքով արավ և նրանց բաց թողին։ Կես ժամից անց վերահսկիչը Յուրգիսին հարցաքննելուց յետո ասաց, որ աշխատանք կտա։

Միայն շատ ուշ Յուրգիսը կարող էր գնահատել, ինչպես հարկն է, թէ ինչ սատանանի բախտ իրան բանեց։ Հնձող մեքենաներ պատրաստող գործարանն այն գործարաններից մեկն էր, որով հպարտանում էին ֆիլանտրոպիստները և ռեֆորմատորները։ Այստեղ կատարեալ բարե-

խղճությամբ էին վարվում բանվորների հետ։ Արհեստանոցները մեծ էին, հրաշալի օդափոխությամբ, ունեին ճաշարան, որտեղից բանվորները կարող էին էժանագին կերակուր ձեռք բերել, ընթերցարան կար և հանգստանալու համար էլ ննջարան։ Բայց աշխատանքն էլ այստեղ այնպես կեղտոտ չէր և գարշահոտ, ինչպես սպանդանոցներում։ Վերջիվերջո Յուրգիսին գործարանը դրախտ թվաց։

Սա հասարակական մի հիմնարկություն էր, որ հինգ հազար մարդու աշխատավարձ էր տալիս և տարեկան երեք հարիւր հազարից ոչ պակաս հնձող մեքենաներ բաց թողնում։ Ինչ վերաբերում է արտադրության կազմակերպության՝ Յուրգիսը շատ քիչ բան կարող էր հասկանալ դրանից։ Ինչպես սպանդանոցներում, այնպես էլ այստեղ աշխատանքի խիստ բաժանում էր թագավորում։ Ամեն մի մեքենա բաղկացած էր գանազան բազմաթիվ մասերից, այդ մասերն առանձին էին պատրաստում և երբեմն հարիւրաւոր բանվորների ձեռքից-ձեռք անցնում։ Այն բաժանմունքում, որտեղ Յուրգիսն էր աշխատում, պողպատը կաղապարելու մի մեքենա էր զետեղված։ Մոտավորապես մի վերշոկի մեծությամբ պողպատի շերտերը թափվում էին տախտակի վրա. բանվորները խլում էին այդ կտորները և միւսներին տալիս, իսկ հետո նորից ու նորից լցնում էր տախտակը։ Կտորները հարթելու աշխատան-

քը յանձնած էր մի երեխայի. այս աշխատան-
քը կլանում էր նրան հոգով ու սրտով: Նրա մատներն այնպէս հաւասարաչափ ու արագ էին շարժւում, որ ընկնելու ժամանակ և միմեանց հետ խփւող կտորների ձայները յիշեցնում էին գնացքի անիւների հանած ձայներին: Խօսքն ըստինքեան հասկանալի է, որ աշխատանքն աշխատավարձի համեմատ էր որոշւած և միջոցներ էին ձեռ առնւած, որ երեխան չծուլանայ: Մեքենան այնպիսի արագութեամբ էր շարժւում, որ նրա ետևից հազիվ կարելի էր շարժել մարդկային ձեռքերը:

Կողքին նստած էին պտտւող սրցաքարերի վրա դանակներ սրող մարդիկ: Նրանք աջ ձեռքով կողովից դանակներ էին հանում, սուր կողմը քարի վրա սեղմում էին, իսկ յետո ձախ ձեռքով դանակը գցում էին միւս կողմը: Հարևան բաժանմունքում տեղաւորւած էին այնպիսի զարմանալի մեխանիզմներ, որ իրանք էին խլում պողպատի երկար շերտերը և յետո կտրեր թէ կլանում. անպէտք կտորներն աւտոմատիկ կերպով դուրս էին շպրտում, իսկ մնացածները յղկում էին, շիկացնում, գլուխներ պատրաստում և վերջապէս կողովներն էին ընկնում արդէն իբրև բոլորովին պատրաստ ձողակներ և պտուտակի գլուխներ՝ հնձող մեքենայի տասնձին մասերը միացնելու համար:

Իւրգիսի ընկերն աշխատում էր այն բաժ-

նում, որտեղ մետաղներ էին հալում: Նրան պատվիրել էին ձուլելու համար ձևեր պատրաստել: Նա ևս ավազը երկաթե ձևի մեջ է լցնում, լավ հալում և մի կողմ էր դնում: Նա էլ էր աշխատում հատ հատ պատրաստած ձևերի հաշվով և աշխատավարձն ստանում էր համաձայն պատրաստած ձևերի քանակի: Երևակայել պետք է, թե ինչպիսի կատաղի արագությամբ էր աշխատում այդ մարդը: Նրա ձեռներն շարժվում էին, ինչպես մեքենայի լծակ, երկար մազերը ծածանվում էին, աչքերը ճակատն էին թռել, քրտինքը հեղեղի նման էր թափվում երեսից: Այս ամբողջ երկար օրը նա միևնույն ոգևորությամբ էր աշխատում, ամբողջովին կլանված էր մի մտքով՝ մի ժամումաշխատել քսաներեք ցենտ, քսան և երկուսուկեսի փոխարէն: Եվ ստատիստիկներն այդ աշխատանքը հաշվի էին առնում, իսկ արդյունաբերության ղեկավարները իրանց բանկետներում հպարտությամբ էին ասում, որ ամերիկական բանվորի աշխատանքը համարեա երկու անգամ արդյունավետ է միւս երկրների բանվորի աշխատանքից:

Յուրգիսի պարտականությունն էր սայլակները երկաթե թեթեվներով լցված քաշ տալ: Այդ թեթեղները տանում էին այն բաժանմունքը, որտեղ հնձող մեքենայի մասերի միացման աշխատանքն էր կատարվում:

Յուրգիսի համար այս աշխատանքը երեխա-

յական խաղ էր և աշխատանքի համար նա օրական մեկ դոլլար և եօթանասունհինգ ցենտ էր ստանում։ Նա պարտքերը վճարեց, լոմբարդից վերարկուն գնեց և արդէն ապագային ծրագիրներն էր մշակում։ Եւ ահա մի անգամ ճաշաընդմիջումից յետո, նա մի խումբ բանւորներ նկատեց, որոնք դռների վրա կպցրած յայտարարութիւններ էին կարդում։ Նա մօտեցաւ նրանց և հարցրեց, թէ այդ ինչ են կարդում։ Նրան ասացին, որ վաղուանից սկսած գործարանի այն բաժանմունքը, որտեղ Իւրգիսն էր աշխատում՝ փակւում է մինչև նոր կարգադրութեան։

Բոլորովին անսպասելի աշխատանքները դադարեցին, իսկ բանւորներին իր ժամանակին չնախազգուշացրին։ Նրանցից ոչ մեկը մինչև անգամ կէս ժամ առաջ մինչև այդ դժբախտութիւնն այդ մասին ոչինչ չգիտէր և յանկարծակի նրանք բոլորն էլ փողոց շպրտւեցին։ Միշտ այդպէս է եղել և միշտ էլ այդպէս կլինի, ասում էին փորձւած մարդիկ։ Հնձող մեքենաներ շատ էին պատրաստել, նրանց պահանջը կրճատւել էր և այժմ պէտք էր սպասել, մինչ որ պահեստում եղածները ծախւէին։ Ոչ ոքի չէր կարելի մեղադրել այս դժբախտութեան համար, սա յաճախ է պատահում։ Հազարաւոր բանւորներ, տղամարդիկ և կանայք ձմեռւա ցրտերին փողոց շպրտւեցին. իսկ տարւա այսպիսի ժամանակ մի որևէ ուրիշ աշխատանք գտնելն անկարելի էր և այժմ նրանք

կամ խնայած փողերի հաշւին պիտի ապրէին, եթէ իհարկէ այդպիսիները կային, կամ պիտի մեռնէին։ Քաղաքում ինչպէս ողորմութիւն, խնդրում էին մի որևէ աշխատանք տալ իրանց. այդ հազարաւոր քաղցածների, անտուն-անտէրների թիւն աւելացաւ էլի մի քանի հազար մարդ։

Անսպասելի դժբախտութիւնից շանթահարւած Իւրգիսը տուն գնաց։ Էլի մի նոր աչքակապ ընկաւ նրա աչքերից, էլի մի նոր թակարդ բացուեց նրա առաջ։ Ինչի համար էին գործատէրերի այդ հոգացողութիւնը և լաւ վերաբերմունքը բանւորների նկատմամբ, եթէ նրանք հնձող մեքենաներ աւելի շատ են արտադրում, քան թէ պահանջւում էր։ Ճակատագրի ինչպիսի սարսափելի հեգնանք. մարդ հիւծում է իւր բոլոր ուժերը հնձող մեքենաներ պատրաստելու համար, դրա համար էլ նա սոված պէտք է մնա, հէնց միայն այն պատճառով, որ նա բաւականին լաւ է կատարում իւր վրա դրած պարտականութիւնները։

Երկու օր շարունակ Իւրգիսն սարսափելի յուսահատ դրութեան մէջ էր և նրա ամբողջ հոգին վրդովւած էր։ Իւր ժամանակը նա անց էր կացնում տանիքում, կատաղում էր իւր բախտի վրա և չէր ուզում տեղից շարժուել։ Ինչո՞ւ համար այդպիսի յամառութեամբ աշխատանքի ետևից ընկնի, երբ ամէն մի րոպէ իրան կարող են այդ աշխատանքից զրկել։ Բայց երբ ամբողջ

փողը մինչև վերջին կոպեկը ծախսեց և փոքրիկ Անտոնն սովածությունից և այժմ իրանց տանիքում թագավորող խիստ ցրտից սկսեց ճչալ՝ Յուրգիսը նորից սկսեց քայլել աշխատանք գտնելու համար։

Նա աշխատում էր գործ գտնել խանութներում, գրասենյակներում, ճաշարաններում և հյուրանոցներում, յաճախում էր երկաթուղային կայարանները, ապրանքների պահեստները և գործարանները։ Մի երկու ազատ տեղի համար հազարավոր ցանկացողներ էին լինում և դրությունն անտանելի էր դառնում։ Նա գիշերներն անց էր կացնում դատարկ ցուրտ նկուղներում ու պօդեզդներում։ Երբ շատ ցուրտ էր լինում՝ Յուրգիսը վայրի գազանի կատաղությամբ կռիվ էր անում որպեսզի իրան ոստիկանատուն տանեն։ Ընդհանրապես այդ օրերը նա յաճախ էր կռվում կամ գործարանային դռների մոտ տեղ բռնելու համար կամ ընդհանրապես փողոցային անմիտ ընդհարումների պատճառով։ Երբ մի անգամ կայարանում նա փորձեց ծանրություններ տեղափոխել մոտավորապես տասը նասիլշչիկներ յարձակվեցին նրա վրա և համարյա մինչև կեսամահության հասցնելը նրան մի լավ ծեծեցին...

Բայց յետո նորից անսպասելի բախտն իր դեմքը Յուրգիսի կողմը դարձրեց։ Մի բարեգործուհի—տիկին փողոցում տեսավ մորաքրոջ Էլզ-

բեռի երեխաներից ամենակրտսերին՝ փոքրիկ Իոզեֆին, որը թափթփուկների մեջ բան-ման էր փնտրում, և հետաքրքրվեց նրանով։ Տիկինը գնաց նրանց ողորմելի բնակարանը՝ մի քիչ փող տվեց, բայց ամենագլխավորը՝ Իւրգիսին երաշխավորություն տվեց պողպատաձուլարանի գործարանի հասցեով, որտեղ ծառայում էր իրան ծանոթ ինժեները։ Ուրեմն տիկնոջ միջոցով Իւրգիսը նորից տեղ ստացավ, սա Ամերիկայում իր բոլոր ստացած տեղերից ամենածեռնտուն էր։ Յաջողվեց նաև մորաքրոջը Էլսբետին էլ տեղավորել։ Նա առավոտները ժամը հինգին գնում էր կոնսերվներ պատրաստող գործարանի ապրանքները կապող բաժանմունքի յատակն սրբելու։ Բայց այս դրությունը մի անյարմարություն էր ստեղծել, փոքրիկ Անտոնը՝ Իւրգիսի երեխան, ամբողջ օրերով մենակ էր մնում. մորաքույր Էլսբետի երեխաներին էլ ոչ մի կերպ չէր կարելի տանը պահել։

Անտոնն արդէն երկու տարեկան էր դառնում, սա մի ուշադրավ երեխա էր։ Նա այնպիսի արագությամբ էր աճում, որ Իւրգիսը, չնայած որ միայն շաբաթ օրերն էր տանը մնում, բայց միշտ մի նոր բան էր նկատում երեխայի մեջ։ Նա նստում էր իր երեխայի մոտ, յատակին և չէր ձանձրանում նրանով զմայլելուց։ Սիրալիրությամբ լսում էր նրա թոթովանքները և յետո համբույրներով ծածկում։ Այս

փոքրիկ էակը Իւրգիսի կեանքում միակ ուրախութիւնն էր, նա նրա յոյսն էր և հպարտութիւնը։ Փ՛առք Աստծոյ Անտոնը տղա էր ծնուել։ Նա կմեծանա և այս բոլոր այլանդակութիւնները բախտաւորութեամբ կանցկացնի։ Երեխան շատ կռուարար էր, բայց հայրը սրանով աւելի էր ուրախանում. չէ որ Անտոնն ապագայում շատ պիտի ծեծուի և կռուի, որպէսզի կարողանա իր գոյութեան իրաւունքը պաշտպանելու։

Կիրակի օրերը Իւրգիսը, եթէ ազատ փող էր ունենում, սովորութիւն ունէր թերթ գնելու։ Մի հինգ ցենտ էր վճարում և գնում էր թղթի մի ահագին հաստ տետրակ, որը լըցուած էր լինում ամբողջ երկրագնդում տեղի ունեցող զանազան տեսակի հրաշքների և նորութիւնների նկարագրութեամբ։ Իւրգիսը կամանց-կամանց վանկերով կարդում էր խոշոր շրիֆտով գրուած վերնագրերը, երբեմն էլ մորաքույր Էլզբետի երեխաների օգնութեան էր դիմում, եթէ չէր կարողանում հասկանալ մի որևէ բառի նշանակութիւնը։

Թերթերում գրում էի կռիւների և սպանութիւնների, աւազակային յարձակումների և դժբախտ դէպքերի, ցաւալի և ծիծաղելի պատմութիւնների մասին։ Բացատրութիւն տուող նըկարները շատ ճիշտ էին, ինչպէս ինքը կեանքը։ Թերթում կային նաև ծաղրանկարներ, որոնք փոքրիկ Անտոնին մեծ զւարճութիւն էին պատ-

ճառում։ Ուրգիսը եթե երեխայի համար մի որևէ հասկանալի բան էր կարդում՝ անմիջապես հարցնում էր նրան, իսկ երեխան կրկնում էր լսածը և իր հերթին էլ ավելացնում էր իր երևակայությունից բաներ, Այսպես միասին էին անցկացնում ամբողջ օրեր՝ յատակի վրա կողք-կողքի պառկած։ Ուրգիսի համար ամենամեծ հաճույքն էր լսել երեխայի թոթովանքները, իսկ երբ փոքրիկ սրիկան առաջին անգամ արտասանեց «կորիր սատանի մոտ» հայրն ուրախությունից թռչկոտել սկսեց։

Մի անգամ շաբաթ օրը երեկոյեան Ուրգիսը իր տանն էր մոտենում։ Արևն արդէն մայր էր մտնում և նրա ճառագայթները գեղեցիկ կերպով արտացոլել էին խորն առւի մէջ, որը հոսում էր անմիջապես մայթի մոտով և մի արշինից ավելի խորությամբ լցված էր կիսահալ ջրով։ Գարնան սկիզբն էր. հրաշալի եղանակ էր, Ուրգիսն էլ իրան հրաշալի էր զգում. Նրա տան դռների առաջ մի խումբ մարդիկ էին կանգնած. Նա արագությամբ վեր բարձրացավ և տեսավ, որ խոհանոցը լցված են վրդովված և վախեցած կանանցով։ Եւ յանկարծ նրա գլխում կայծակի արագությամբ թափանցեց այն միտքը, որ միևնոյն բանն է պատահել, երբ բանտից դուրս էր եկել և Օնայէն կիսամահ դրության մէջ էր գտել։ Նրա սիրտը դադարեց գործելուց։

— Ի՞նչ է պատահել, — գոռաց նա։ Եւ յան-

կարծ տանիքից հեծկլտանքի ձայներ լսեց.մորաքոյր Էլսբեթն էր լաց լինում։ Նա հէնց ուզում էր սանդուխքի առաջին աստիճանը բարձրանալ, երբ Անելյան, ինչպէս և այն անգամ, բռնեց նրա ձեռքը։

— Չէ, չէ, մի գնա։

— Բայց ի՞նչ է պատահել,—գոռաց նա։

Եւ պառաւը պատասխանեց.

— Անտոնն է։ Նա փողոցում խեղդւեց։

— Իւրգիսի երեսը մահւան պէս սփրթնեց, բայց նա իրան պահեց և կանգնած մնաց սենեակի մէջ տեղում, ատամները պինդ սեղմած։ Յետո նա հրեց Անելյին և վեր բարձրացաւ։

Անկիւնում մի վերմակ էր ընկած, դրանով էր ծածկւած իր երեխան։ Նրա մօտ պառկած էր մօրաքոյր Էլսբետը։ Իւրգիսը բռունցքները սեղմեց և կտրուկ հարց տւեց.

— Ինչպէս պատահեց այդ.

— Նա մայթեց առուն ընկաւ,—տնքաց Էլսբետը։

— Բայց ինչպէս էր նա դուրս գնացել,— հարց ու փորձ էր անում Իւրգիսը։

— Նա դուրս գնաց... դուրս գնաց խաղալու,—հեծկլտում էր Էլսբետը և ձայնը դաւաճանեց նրան,—մենք ոչ մի կերպ երբէք չկարողացանք նրան տանը պահել։ Շատ էլ ուշ դուրս քաշեցինք։

— Բայց նա մեռա՞լ է արդէն,—հարցրեց Իւրգիսը։

Օ՜յ,—օ՜յ,—օ՜յ,—մեռաւ, տնքում էր Էլլաբետը.—բժիշկն արդէն եղել է և ասաց, որ արդէն ամեն ինչ վերջացած է։

Ուրգիսը ճօճւելով էլ մի քանի վարկեան կանգնեց։ Արցունքներ չունէր։ Նա մէկ էլ նայեց փոքրիկ մարմինը ծածկող վերմակին, յետո կրունկների վրա շուռ եկաւ և արագութեամբ ցած իջաւ։ Խոհանոցում լռութիւնը նորից թագաւորեց, երբ նա դուրս գնաց։ Նա ուղիղ պէպի դուռը գնաց, բաց արեց, դուրս եկաւ ու սկսեց նորից փողոցները չափչփել։

XI

ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿԸ

Նա քայլում էր ու ոչինչ չէր տեսնում, ուշադրութիւն չէր դարձնում ցեխից ու անձրևից առաջացած լճակների վրա։ Յետոյ նստեց մի ինչ որ սանդուխքի աստիճանների վրա, գլուխն առաւ ձեռքերի մէջ և այդպէս մօտ մի ժամի չափ նստած մնաց. Նա ինքն իրան շշնջում էր.

— Մեռա՜ւ։ Մեռաւ։

Վերջապէս նա վեր կացաւ տեղից. և նորից սկսեց քայլել։ Նա քայլեց այնքան ժամանակ, մինչ որ մութը վրա հասաւ։ Այն ժամանակ նա իւր չորս կողմը նայեց։ Նրա առաջը ընկած էր երկաթուղագիծը և գծերի վրայով աղմուկով անցաւ ապրանքատար վագոնների մի ամբողջ շարք։ Նա կանգնած էր և դիտում էր։ Եւ յանկարծ մի տաք ոգեորութիւն գրաւեց նրան, և իւր էութեան անգիտակից խորքերում արդէն վաղուց թաղնուած միտքը դուրս ժայթքեց։ Նա բոլորովին մօտիկ գնաց գծին, մի մեծ թռիչք գործեց և բարձրացաւ վագոնների մէկի պլօշչադկան։

Իւր ամբողջ կեանքում նա կռւում էր մի

կտոր հացի համար։ Եւ այժմ այս մասին յիշելիս՝ Նա պատրաստ էր ատամները կրճտացնելու։ Ինչպէս Նա անվերջ յիմա՞ր է եղել։ Նա փչացրեց իր կեանքը, քիչ էր մնացել ոչնչացնէր ինքն իրան։ Բայց հիմա ժամանակ է սթափուելու. բաւական է լաց լինել և վերյիշել։ Նրանք էին իրեն ստրկացրել։ Նա ուզում էր ազատ լինել, կապանքները դէն շպրտել։ Նա մինչև անգամ ուրախ էր, որ ամեն ինչ վերջացաւ։ Աշխարհը կանանց և երեխաների համար չէ ստեղծուած։ Փոքրիկ Անտոնը մեռաւ, Նշանակում է, Նա այլևս չպիտի տանջուի։ Սա երեխայի մասին ունեցած վերջին Նրա միտքն էր։ Նա վճռեց այսուհետև մենակ ինքն իր մասին հոգս տանի. զինուել բոլոր մարդկանց դէմ, ամբողջ աշխարհի դէմ, որն այնպէս իրան չարչարեց և խաբեց։

Գնացքը թռչում էր գծի վրայով, ածխային փոշու բուք ու բորան էր բարձրացնում և խըփում Իւրգիսի երեսին։ Գնացքը գիշերը մի քանի անգամ կանգնեց կայարանում, բայց Իւրգիսը վճռեց գնացքը չթողնել մինչև այն ժամանակ, քանի դեռ իրան դուրս չեն շպրտի, Ձիկագոյից հեռացող ամեն մի վերստ Նրա հոգուն աւելի ու աւելի թեթևութիւն էր տալիս։

Երբ վագոնները կանգնեցին՝ Իւրգիսն թռչեց զով քամին ծծուած թարմ վարած արտերի, կանաչի ու առուոյտի հոտով։ Նրա կուրծքը խորն իջնում էր ու բարձրանում. վերջապէս

Նա նորից գիւղն ընկաւ։ Հազիւ էր լուսածէգը բացւում, երբ նա սկսեց իր չորս կողմը նայել։ Նրա աչքերը ոչ մի կերպ չէին կշտանում դաշտերի, ծառերի, գետերի տեսքից։ Վերջապէս նա էլ չհամբերեց և կայարաններից մէկում դուրս եկաւ իր թագստատեղից։ Տորմոզի մօտ կանգնած կոնդուկտորը բռունցքով սպառնաց նրան, բայց Իւրգիսը հեգնանքով ձեռքը թափ տուեց և սկսեց արտերի վրայով քայլել։

Իւրգիսն իր ամբողջ կեանքը գիւղում էր անց կացրել, իսկ այժմ իր երեք երկար տարիների Ամերիկայի կեանքի ընթացքում՝ գիւղական կեանք երբէք չէր տեսել։ Մինչև անգամ ծառ էլ չէր տեսել, իսկ այժմ նա իրան ինչպէս վանդակից բաց թողած թռչուն էր զգում։

Գրպանում նա դեռ մի շաբաթւա աշխատավարձ ունէր։ Դրա համար էլ, երբ սոված զգաց իրան, մտաւ առաջին պատահած գիւղական տունը և տասը ցենտ վճարելուց յետո՝ ըստացաւ երկու մեծ կտոր հաց, տապակած միս, մի կտոր կարկանդակ և երկու խնձոր։ Մի քանի րոպէից յետո նա մօտեցաւ մի գետի և անտառի կածանի ուղղութեամբ գնաց գետի ափով։ Շուտով հանգստանալու համար նա մի յարմար տեղ գտաւ, նստեց ու սկսեց ագահութեամբ ուտել միսը, երբեմն երբեմն էլ գետի ջուրն էր խմում։ Յետոյ նա երկարացաւ մի թփի տակ և անմիջապէս քնեց։

Երբ նա զարթնեց արեգակի ճառագայթնե-րըն ուղիղ նրա աչքերին էին խփում։ Սկսեց կոտրատուել և միաժամանակ նայել գետնին։ Յանկարծ մի հրաշալի միտք ծագեց նրա գլխում։ Ախր նա կարող է լողանալ։

Շնորհիւ աղքատութեան, ցրտի, սովածութեան և կեղտոտ աշխատանքի նա վերջին տարիները ձմեռ թէ գարուն բաւականանում էր նրանով, որ միայն երեսն էր լուանում։ Իսկ այժմ նա կարող էր նաև լողանալ։

Չնայած, որ տարուա վաղ ժամանակն էր, ջուրը տաք էր, ու ինչպէս երեխա, նա շըմփացնում էր ջուրը և տակովը լինում։ Յետո նա նստեց ափին մօտիկ ջրի մէջ և սկսեց մարմինը տրորել, իսկ սապոնի փոխարէն աւազն էր գործածում։ Յետո լուաց սպիտակեղէնը, մինչև անգամ վրայի շորերն էլ։ Այս բանը նրան մեծ բաւականութիւն պատճառեց։ Մինչև շորերի չորանալը՝ նա նորից քնեց։

Արեւն արդէն դէպի հորիզոնն էր թեքւում, երբ նա զարթնեց։ Նա սաստիկ սով զգաց և շտապեց հագնուել։ Յետո անտառի փայտերից մի լաւ մահակ ջարդելուց յետո ճանապարհ ընկաւ։

Շուտով նա մօտեցաւ մի մեծ գիւղի։ Ընթրիքի ժամանակն էր, տան տէրը խոհանոցի դռների մօտ ձեռքերն էր լուանում։

— Չէ՞ք ծախի ինձ ուտելու մի որևէ բան, —հարցրեց Իւրգիսը։

Բայց ֆերմերը կոպտութեամբ քշեց նրան։

Յուրգիսը գնաց առանց մի խօսք ասելու։ Կալերից անցաւ ու մօտեցաւ թարմ վարած և հենց նոր ցանած մի նոր արտի։ Այստեղ տանտէրը մի ամբողջ շարք դեղձի ջահել ծառեր էր տնկել։ Անցաւ նրանց մօտից և սկսեց կոտրատել նրանց ցողունները, մինչև անգամ ամբողջ արմատներով հողի միջից հանել։ Այսպիսով նա հարիւրից աւելի դեղձենիներ ոչնչացրեց։ Այս ձևով Յուրգիսը վրէժը հանեց ֆերմերից, մերժելու համար։ Յուրգիսը վճռեց այսուհետև ոչ մէկին չզիջել, ով իրան թէկուզ մի փոքրիկ վիրաւորանք անգամ կհասցնի։

Այսպէս սկսւեց գործարանից փախած այս բանւորի թափառական կեանքը։ Սովորաբար նա խուսափում էր բնակիչներից գիշերելու տեղ խնդրել, լաւ եղանակներին բաց օդում էր քնում։ Եթէ անձրև էր գալիս, նա սպասում էր մինչև որ գիշերը գալիս էր, յետոյ մահակը ձեռքին գողտուկ մտնում էր մի որևէ մէկի գարմանանոցը։ Մեծ մասամբ նա այնպիսի յաջողութեամբ էր անում այս բաները, որ մինչև անգամ շներն էլ չէին նկատում նրան և նա մինչև առաւօտ հանգիստ քնում էր։ Շուտով հասաւ անտառի մոշը, յետոյ էլ սև ղարաղաթը։ Մրգեղէնը շատ էր, այդ պատճառով փողը խնայում էր, իսկ յետոյ էլ այգիներում խնձորները հասան, իսկ բանջարանոցներում կարտոֆիլը։ Յուրգիսը ցերեկները աշ-

խաստում էր նրանց տեղերը գտնել, իսկ գիշերները գրպաններն էր լցնում։ Մի երկու անգամ նա լաւ յաջողութիւն ունեցաւ․ բանեց յաջողութեամբ ուրիշի հաւերը և կուշտ կերաւ։ Եւ այս պատճառով էլ նրա փողերը շատ դանդաղ էին ծախսւում։

Նրա արեան մէջ զարթնեց հին թափառաշրջիկը։ Երջանիկ էր, որ կարող է ամէն մի օրէնքից դուրս ապրել և զանազան տեսակի պատահարների հանդիպել։ Մինչև անգամ նրա նոր կեանքի պատահական անախորժութիւնները մի ինչ որ նոր բան էին խոստանում։ Կամաց կամաց վերականգնւեց նախկին առողջութիւնը, ջահել ուժը, անհոգ ուրախութիւնը, կարճ ասած, այն բոլորը, որոնք թւում էին, թէ անյետ կորել էին։ Կուշտ ուտել, հրաշալի մաքուր օդ շըն-չել, ֆիզիկական ուժ գործադրել միայն, իհարկէ, այն ժամանակ և այնքան, որքան որ այդ անհրաժեշտ էր, դրանք Իւրգիսի համար լաւագոյն դեղերն էին, դարմանը, նախկին կեանքի հասցրած վէրքերի համար։ Իւրգիսին այնպէս էր թւում, որ կարծես թէ նա ծանր քնից է զարթնել։ Ուժերի շատութիւնը նրա մէջ աղբիւրի նման էր խփում։ Երբեմն առանց որոշ պատճառի նա սկսում էր թռչկոտել, ձեռքերը թափահարել և հարազատ լիթւական երգեր երգել։ Երբէք չէր աշխատում իմանալ, թէ ինչպիսի տեղերով է անցել և, իսկապէս, որ կողմով պիտի

գնալ։ Նա միայն մի բան էր յիշում, որ ինչքան էլ գնա՝ միևնույն է, չի հասնի այս հսկայական անծանօթ երկրի ծայրին։ Եթէ նրան ձանձրացնում էր մենակութիւնը, նա միշտ կարող էր յարմար ընկերներ գտնել, որովհետև համարեա ամեն մի քայլափոխման հանդիպում էին իր նման թափառող մարդիկ։ Նրանք հաճութեամբ էին հաղորդում իրանց հանելուկային արհեստի նրբութիւնները։ Նրանցից նա իմացաւ, թէ ինչպիսի բնակութեան տեղերից նա պիտի խուսափի և որպիսի տեղերից և ինչ միջոցներով առանց ռիսկի կարող է անցնել, ինչ է նշանակում այն պայմանագրերը, որ ընկերները ցանկապատերի վրա էին նշանակում, որտեղ կարելի է ողորմութիւն խնդրել և որտեղ պէտք է գողանալ։ Այս թափառաշրջիկներից շատերն իսկական ոճրագործներ էին, բայց մեծամասնութիւնն Իւրգիսի նման անցել էին բանւորական փորձութիւնները, յուսահատ կռիւ մղել և վերջն իրանց յաղթւած համարել։

Յուլիսի կէսերին, երբ հունձն սկսւեց, Իւրգիսն, ինչպէս հարազատ գիւղացի՝ չհամբերեց ու աշխատանքի վարձւեց հարաւային նահանգներից մէկում։ Հրաշալի բերք կար, բայց ամբողջը կարող էր իզուր փչանալ հաւաքելու համար բաւականաչափ ձեռքեր չլինելու պատճառով։ Ամեն տեսակ միջոցներ էին ձեռք առնւել և քաղաքների աշխատանքի բոլոր ընդունակ տղա-

մարդկանց էին հրաւիրել։ Աշխատավարձը բարձր էր և օդում թագաւորում էր հնձի տենդը։ Իւրգիսը հնձւոր դարձաւ և երկու շաբաթ շարունակ օրը տասնեութ ժամ անընդհատ աշխատում էր։

Մի ժամանակւա կարիքի օրերում այժմեան աշխատած գումարը կատարեալ հարստութիւն էր նրա համար։ Բայց ի՞նչ անի այժմ այդ գումարը։ Իւրգիսը երկար չտատանւեց և իր ճանապարհին ընկած առաջին հանդիպած քաղաքում իր նման ազատ ընկերների հետ միասին մինչև վերջին ցենտը խմեց։ Հետևեալ օրը նա նորից ճանապարհ ընկաւ։ Նրա գլուխը ցաւում էր, բերանում զզւելի համ կար, բայց շնորհիւ թարմ, բացօդեա շարժումների նա նորից ստացաւ նախկին կայտառութիւնը և լաւ տրամադրութիւնը։

XII

ԽՈՒՐԳԻՍԸ ՉԻԿԱԳՈՅՈՒՄ

Աշնանը Խուրգիսը Չիկագո վերադարձաւ։ Ինչ հաճույք թափառական կյանք վարել, երբ դրսում ցրտերն են սկսված։ Եւ իր նման ուրիշ շատ հազարաւոր դժբախտների պես նա իրան մխիթարում էր այն յույսով՝ որ իրան կյաջողւի քաղաքում աշխատանք գտնելու։ Չնայած բոլոր դայթակղություններին նա իր կոշիկների մէջ դեռ պահած ունէր մօտ տասնուհինգ դոլլար։

Քաղաք գալուց յետո՝ Խուրգիսը հաստատ վճռեց բացառապէս միմիայն իր մասին հոգս տանել և ինչքան հնարաւոր է աւելի լաւ դասաւորել իր գործերը և ոչ մի բանի առաջ կանգ չառնել այդ նպատակին հասնելու համար։ Նա մտադրւեց լաւ եղանակներին գիշերել որտեղ հնարաւոր է՝ այգիներում և դատարկ կիոսկներում։ Իսկ երբ բոլորովին ցուրտ կլինի կգնա գիշերելու մի այնպիսի տեղ, որտեղ տեղի համար կվերցնէին երեք ցենտ։ Ուտելու համար օրական ծախսում էր հինգ ցենտից ոչ աւելի։ Այսպիսով նա ուզում էր երկու ամիս, գուցէ և աւել մի կերպ քարշ տալ և այս ժամանակամիջո-

ցում աշխատի մի յարմար գործ գտնել։ Իսկապէս, մի քանի օրուա յոգնեցուցիչ թափառումներից յետո նրա յոյսն իրականացաւ։ Նրան ստորերկրեա երկաթուղու համար տունել փորողների խմբի մէջ ընդունեցին։ Սրանից յետո նա առաջին անգամ իրան համար գիշերելու մի անկիւն վարձեց։ Ճաշի համար շաբաթական չորս դոլլար էր տալիս։ Մի այդպիսի գումար էլ գնում էր ուրիշ կարիքների և հաճոյքների բաւարարման համար։ Նա հնարաւորութիւն ունեցաւ ձեռք բերելու մի զոյգ երկարաճիտ կօշիկներ և ֆանելի բլուզ։ Նա երկար տատանւում էր, գնի, արդեօք, նաև մի վերարկու և վերջ ի վերջո վճռեց, որ դա շռայլութիւն է։

Այստեղ նա սխալուեց։ Վերարկու չունենալու պատճառով նա ստիպուած եղաւ պանդոկ շատ շատ յաճախել։ Նրա աշխատանքը շարունակւում էր առաւօտեան ժամը եօթից մինչև հինգ և կէսը երեկոյեան, այնպէս որ լի օրերը հողի տակ էր անցկացնում և արեգակի լոյս չէր տեսնում։ Երեկոները, եթէ չհաշուենք պանդոկ յաճախելը, ոչ մի ուրիշ տեղ չունէր գնալու։ Նա ոչ մի մօտիկ մարդ չունէր և նրա ամբողջ յարաբերութիւնն արտաքին աշխարհի հետ սահմանափակւում էր ընդհանուր քէֆերի ժամանակ ձեռք բերուած ծանօթութեամբ։

Կիրակի օրը, իհարկէ, կարող էր եկեղեցի գնալ։ Բայց որ եկեղեցին կթողնեն այդ պատա-

ռոստուածին, որի վրայից զզուելի հոտ էր գալիս, իսկ գլուխը ոջիլներով լիքը։ Ոչ ոք չէր ցանկանա նրա կողքին նստել։ Նրան թւում էր միայն մի անկիւն, մի փոքրիկ և կեղտոտ պատուհանով, որտեղից երևում էր հարևան տան մութ և խուլ պատը։ Նրա տրամադրութեան տակ էին գտնւում նաև սառցային քամու հպատակ դատարկ փողոցները։ Սրա բացառութեամբ նա ունէր նաև պանդոկը և հարկաւոր էր խմել, որպէս զի իրաւունք ունենար այդտեղ մնալու։ Այստեղ շատ հաճելի էր։ Կարելի էր և ուտել, և թուղթ խաղալ, և նկարներով զարդարուած թերթը քրքրել, որտեղ ծիծաղելի ծաղրանկարներ կային, նաև մարդասպանների և մերկ կանանց նկարներ։ Մօտաւորապէս վեց շաբաթ այդպիսի կեանք անցկացրեց Իւրգիսը։ Եւ յետոյ նորից բախտը նրան ցաւալի խաբեց։ Ստորերկրեա աշխատանքները տարւում էին առանց նախազգուշացման ամենահասարակ կանոնների պահպանման։ Ճանապարհներ գցող ընկերութիւնը ոչ մի կերպ չէր հոգում բանւորներին անվտանգ պահելու համար։ Ստորերկրեա ռելսերը, որոնց վրայով արդէն սկսել էր գնացքը երթևեկել, ոչ մի կերպ ապահոված չէին՝ և դժբախտութիւնները համարեա ամեն օր էին տեղի ունենում։

Մի անգամ տունելի կողքի գծից դուրս եկող գնացքը դիպաւ Իւրգիսին և բաւականին ուժեղ տրորեց նրա ուսը։ Ուշաթափութիւնից

նա զարթնեց միայն շտապ օգնություն հասցնող կառքի մեջ։ Նրան հիվանդանոց տարան և այնտեղ բժիշկը տեղը դրեց դուրս պրծած ուսը և վաննա ընդունելուց հետո Նրան պառկեցրին տեղաշորում մի մեծ սենյակում, որտեղ մի երկու դյուժին թախտեր էին դրված։

Ամբողջ Ծնունդը Յուրգիսը հիվանդանոցում անցկացրեց և սա ամենալավ ծննդյան տոնն էր նրա համար Ամերիկայում անցկացրած իր ամբողջ երեք տարվա կյանքի մեջ։ Միակ բանը, որ սարսափելի ճնշում էր նրան, այն էր, որ ստիպված էր տեղական գործարաններում պատրաստած մսի կոնսերվներն ուտելու։ Առաջ զարմացած ինքն իրան հարց էր տալիս, թե ով է ուտում այս աղը դրած միսը և այս ամբողջ ռոստբիֆը, իսկ, իհարկե, Անասունների Բակերում աշխատող ոչ մի բանվոր չէր ուտի։ Այժմ պարզվեց, որ մթերքները հիվանդանոցներին էին տալիս նաև զինվորական մասերին, բանտերը և մի քանի ուսումնական փակ հիմնարկություններն էին մատակարարում։ Մի քանի շաբաթից հետո Յուրգիսն այնքան լավացավ, որ նրան հիվանդանոցից դուրս գրեցին։ Ճիշտ է, նա դեռ չէր կարողանում շարժել վնասված ձեռքը և դրա համար էլ հնարավորություն չուներ աշխատանքի անցնելու։ Բայց առողջանալը ժամանակի հարց էր միայն, անդամահատության էլ կարիք չէր զգացվում։ Դրա համար էլ նրա թախտն ուրիշին տվին։ Իսկ

այն հանգամանքը, որ հիւանդանոցից դուրս գալուց յետո Նա պիտի սոված մնար, որովհետև ոչ ոք չունէր, ոչ ոքի վճռապէս չէր հետաքրքրում:

Դժբախտութիւնն երկուշաբթի օրը պատահեց, մինչդեռ շաբաթական աշխատավարձը ծախսել էր ճաշի և սենեակի համար, իսկ մնացածները ամբողջովին պանդոկում գնացին: Նա դեռ եօթանասունհինգ ցենտ ունէր և մէկ էլ դոլլար ու կէս պիտի երկուշաբթի օրն ստանար:

Նա ստացաւ այդ փողերը, վերցրեց իր գործիքները և տարաւ գրաւ դրեց, որի համար էլի մի յիսուն և հինգ ցենտ ստացաւ: Յետո Նա գնաց իր սենեակը, որպէս զի տանտիկնոջից տեղեկութիւն ստացաւ այդ մասին: Բայց բանից դուրս եկաւ, որ արդէն նոր կենողի էին …ել, իսկ տանտիրուհին ուրիշ ոչ մի անկիւն չունէր: Իւրգիսը մռայլ յուսահատութեամբ պաշարուած սկսեց փողոցները թափառել: Նա ոչ ապաստարան ունէր, ոչ տաք շոր, և նա լաւ գիտէր, որ շատ ժամանակ կանցնի, մինչ որ կկարողանա գոնէ մի կոպէկ աշխատել: Իսկ գրպանում ունէր երկու դոլլար և վաթսունհինգ ցենտ: Առաջուա ժամանակներում նա կարող էր ձիւն հաւաքելու աշխատանքի վարձուել, կարծես դիտմամբ մեծ քուլաներով էր թափւում:

Բայց այժմ դուրս պրծած ձեռքը զրկում էր նրան այս հնարաւորութիւնից: Յոյս էլ չունէր

պատահական աշխատավարձ ստանալու, ոչ կառքերից բեռ իջեցնել ու բարձել և ոչ էլ բեռ կրել։ Անկարելի է նկարագրել նրան պաշարող սարսափը, երբ վերջնականապէս նա հասկացաւ իր դրութիւնը։ Նա նման էր խիտ անտառի թաւուտի վիրաւորուած գազանի. Նա ստիպուած էր իր կռիւը տանելու ամենաանբարեյաջող պայմաններում։ Իսկ թէ նա տանջւում էր, դա ոչ ոքի գործը չէր։ Դառը փորձը համոզել էր նրան, որ մինչև անգամ ողորմութիւն խնդրելու աշխատանքին էլ պիտի կարողանալու հնարաւորութիւն ունենալ, այլապէս այստեղ էլ ձեռնից առաջ կանցնեն աւելի փորձուած մասնագէտները։

Սկզբում նա ոչ մի բանից չէր վախենում և ոչ էլ մտածում, միայն ցրտից պաշտպանուելու հարցն էր նրան յուզում։ Նա մտաւ մի ժամանակ յաճախող պանդոկը մի բաժակ խմելու համար և ամբողջովին դողդողալով մօտեցաւ կայծկլտող բուխարուն տաքանալու համար։ Այստեղ գոյութիւն ունէր գրի չառնուած բայց խիստ պահպանուող մի կանոն, որի հիման վրա ամեն մի յաճախորդ, որ պատրաստելու տուած բաժնին էր սպասում, իրաւունք ունէր այդ ժամանակամիջոցին վառարանի մօտ տաքանալու։ Բայց երբ պահանջածը նա խմեց և բոլորը կերաւ, պէտք էր կամ նոր բաժին պատրաստել տալ կամ կրակի մօտի տեղը թողնել։ Չնայած որ նա այս պանդոկի մշտական հիւրն էր և միշտ կարող էր տաքանալ,

ինչքան որ կարող էր. բայց այժմ դրութիւնը բոլորովին փոխուել էր, նա վերին աստիճանի ողորմելի տեսք ունէր և եթէ նա ցանկանար իր դժբախտութեան մասին պատմել համակրանք ստանալու համար՝ այս բանը նրան մի փոքրիկ կտոր անգամ օգուտ չէր բերի։

Մի քիչ սպասելուց յետո նա մտաւ մի ուրիշ պանդոկ, որտեղ պէտք էր էլի մի ռուբլուց հրաժարուէր։ Նոյն բանը կրկնեց նաև ուրիշ պանդոկներում։ Այս սարսափելի օրը Իւրգիսը ստիպուած եղաւ ծախսելու մօտ երեսուն ցենտ ցրտի և սովի դէմ կռուելու համար։ Անհրաժեշտ էր ինչ էլ որ լինի կէս գիշերուան սպասել, երբ ոստիկանական թաղամասային գիշերելու տեղերը կըբացուէին։

Մի պանդոկում, որտեղ նա վերջին ժամանակներս էր սկսել յաճախել, իրան ծանօթ մի՝ սպասաւոր խորհուրդ տուեց անմիջապէս կրօնական ժողովատեղը գնալ, որտեղ արդէն շատերն են գնացել իր նման մի քանի հարիւր դժբախտներ, որոնք գոնէ ժամանակաւորապէս ցանկանում էին այնտեղ մշտապէս թագաւորող տաքութեամբ հրճուելու։ Իւրգիսը վազեց ցոյց տուած հասցէի ուղղութեամբ։

Յայտարարութեան մէջ գրուած էր, որ դռները կբացուեն ժամը եօթ ու կէսին, իսկ այժմ ժամը վեցն էր միայն։ Այն ժամանակ նա սկսեց փողոցի մի անկիւնից միւս անկիւնը համարեա

վազելով քայլել, երբեմն էլ թփերից ազատվելու համար դռների արանքներում էր ծածկվում: Այդպես համարյա մի ժամ վազեց և մրսեց մինչև ոսկորները: Վերջապես դռները բացվեցին: Երկրորդ անգամ ձեռքը դուրս գցելու ռիսկով Նա ճանապարհ բացեց ուրիշ թափառաշրջիկների ամբոխի միջից և անմիջապես հսկայական վառարանի մոտ տեղ գրավեց: Երեկոյան ժամը 8-ին դահլիճում արդէն ասեղ գցելու տեղ չկար:

Տախտակաշէն բարձրութեան վրա նստել էին երեք ծերունիներ սև սիւրտուկներով և մի ջահել աղջիկ դաշնամուրի առաջ: Սկզբում հիմն երգեցին, յետո քարոզիչներից մէկը՝ բարձրահասակ, բարակ և խնամքով սափրուած, սկսեց խօսել: Իւրգիսը ջանասիրութեամբ լսում էր: Նա գիտէր բարձր ձայնով խռմփացնելու իր սովորութիւնը, սարսափում էր այն մտքից, որ այս պատճառով նրան փողոց կշպրտեն, իսկ սա նրա համար մահ էր:

Քարոզողը խօսում էր մեղքի, քաւութեան, Աստծու անծայր ողորմածութեան մասին և Նրա անսահման ներողամտութեան մասին, որ Նա անէր մարդկային թուլութիւնների նկատմամբ: Նա հրապուրում էր իր սեփական ճարտասանութեամբ: Եւ Իւրգիսը լսում էր նրան ու կամաց կամաց սկսեց մի վայրենի չարութիւն զգալ: Ի՞նչ է հասկանում մեղք և տանջանք տալով այդ լքուած պարոնը ձիւնի

պէս սպիտակ օձիքով և նուրբ մանուշկից կարած հագուստով, կուշտ ստամոքսով, որ ապրում է առատութեան և տաքութեան մէջ։ Նա այստեղ է գալիս և ինչ որ յիմար բաներ է ասում մարդկանց, որոնք ոչնչանում են սովի և ցրտի դժոխային ճիրանների մէջ։ Իւրգիսի համար պարզ էր, որ այդ վայրահաչը մինչև անգամ մօտաւոր գաղափար չունի այն կեանքի մասին, որի վերաբերեալ համարձակութիւն ունի դատողութիւններ տալու։ Բացի դրանից, նա հէնց ինքը և իր նմանները հասարակական անարդարութիւնն են մարմնացնում։ Ինչն է ստիպել բոլոր այս անբախտներին այստեղ գալ և լսել, եթէ ոչ այն հասարակական կարգը, որն այդպէս հաճելի է նրան՝ այդ քարոզչի համար։ Չէ որ հէնց ինքն էլ պատկանում այդ հրամայող, յաղթանակող դասակարգին, կեանքի այդ զզուելի տէրերին։ Իհարկէ նա ապրելու տեղ էլ ունի, վառելիք էլ ուտեղէն, հագուստ և փող։ Դրա համար էլ նա համարձակւում է գնալ իրան մերձաւոր սովածներին սովորեցնելու համար, հաւատացած լինելով, որ սովածները կլսեն նրա վայրահաչութիւնները։ Պէտք է երևակա՞յել, որ նրանք ինչպէ՞ս հոգս են քաշում մարդկային հոգիների ազատութեան մասին։ Բայց միայն յիմարը չի հասկանում, որ այս սոված մարդկանց հոգին կարիք է զգում միայն մի բանի, որ իրանց մարմինն ստանա, վերջապէս, երկրային բարիքների իր անհրաժեշտ բաժինը։

Ժողովը վերջացաւ երեկոյեան մօտ ժամը տասն և մէկին, ու տխուր ունկնդիրները նորից պէտք է դահլիճից դուրս թափւէին ձիւնի և ցրտի աշխարհը, խորն անիծելով չորս անգործներին, որ բաւականին շուտ վերջացրին իրանց պատսպարկարանութիւնները։ Թաղամասային գիշերելու տեղը միայն մի ժամ յետո պիտի բացւէր։ Հիւանդութիւնից թուլացած և զրկւած տաք հագուստից Իւեգինը բառիս իսկական իմաստով պէտք էր կռիւ մղէր այս ժամանակներում մահւան դէմ։ Նա ամբողջ ուժով սկսեց վազել և երբ վերջապէս հասաւ թաղամասը՝ այնտեղ անգործների մի ահագին բազմութիւն տեսաւ, որոնք դեռ սպասում էին դռների բացւելուն։

Դէպքը տեղի էր ունենում 1904 թ. յունւար ամսին, երբ Ամերիկական արդիւնաբերութիւնը իր ճգնաժամն էր ապրում և թերթերն ամէն օր յայտարարում էին այս կամ այն ձեռնարկութեան սնանկութեան մասին։ Ձմեռւա վերջում մէկ ու կէս միլիոնից աւելի անգործներ փողոց շպրտւեցին. բարեգործական բոլոր հիմնարկութիւնները լիքը լցւած էին և ոստիկանական թաղամասի առաջ երեկոները վայրենի տուրուդմփոցներ էին տեղի ունենում։

Երբ գիշերելու տեղը լիքը լցւեց և նրա դռները փակւեցին՝ սպասատարան մնացողների կէսից ոչ քիչ մասը, նրանց թւում նաև Իւրգինը դուրս մնաց. Իւրգինը չկարողացաւ հրել, խփել,

շնորհիվ հիւանդ ձեռքի։ Ուրիշ հնար չկար, պէտք է վճարէր և տեղ գտնէր գիշերն անցկացնելու համար։ Միտքն արիւնով լցւած՝ նա վճռեց ծախսել տասը ցենտը, այդ սոսկալի գիշերը կրօնական ժողովատեղում և փողոցներում իզուր տեղը տանջւելուց յետոյ։ Այնպէս որ ակամա քնել էլ չկարողացաւ, իսկ ուղիղ ժամը եօթին առանց աւելորդ խօսակցութիւնների պէտք էր գիշերելու տեղից հեռանալ։

Դեռ էլի երկու շաբաթ շարունակ դաժան սառնամանիք էր և արդէն վեցերորդ օրը Իւրգիսը ծախսեց իր վերջին կոպէկը։ Որպէս զի չկորչի նա ստիպւած եղաւ ողորմութիւն խընդրելու։

Այս աշխատանքը նա սկսեց հէնց վաղ առաւօտւանից։ Դուրս եկաւ պանդոկից, նայեց չորս կողմը, այստեղ, արդեօք, ոստիկաններ չկան և սկսեց հերթով մօտենալ ամեն մի անցորդի, և ով գոնէ մի քիչ բարեսիրտ տեսք ունէր, մօտենում էր նրան և սկսում պատմել իր տխուր պատմութիւնը և մանր փող էր խնդրում։ Հէնց որ ստանում էր, անմիջապէս ծռւում էր փողոցի անկիւնը, վազում էր պանդոկ, որպէսզի տաքանա։ Երբ ողորմութիւն տւողը պատահաբար նկատում էր նրա պանդոկ մտնելը՝ երդւում էր, որ էլ երբէք աղքատներին ոչինչ չի տա, որոնք ստացած փողերով հարբում են։ Սակայն ոչ ոքի գլխովն չէր անցնում, որ

Յուրգիսի նման մարդը մի որևէ ուրիշ տեղ չէր կարող գնալ իրան մի քիչ պնդացնելու համար։ Եւ որ ամեն մէկն էլ, եթէ նրա տեղը լինէր, ճիշտ նրա նման կվարուէր։ Պանդոկում անհամեմատ աւելի էժան գնով ուտելիք էր ստանում և բաւականին էլ շատ, քան թէ մի համեստ ճաշարանում, և, բացի դրանից, այստեղ, իբրև հաւելում, մի փոքրիկ բաժակ էլ արաղ էին տալիս, որը տաքացնում էր նրան։ Այստեղ նա կարող էր կրակի մօտ մի հաճելի անկիւնում նստել և զրուցել ընկերների հետ։ Միայն այստեղ նա իրան ինչպէս տանն էր զգում։ Բացի դրանից, պանդոկապետներից մի քանիսը մի ուրիշ բան էին հնարել․ նրանք աղքատներին կերակրում էին ու մի անկիւն տալիս այն պայմանով, որ նրանց մի օրւա ստանալիքի որոշ մասն իրանց տային։

Թւում էր, որ խեղճ Յուրգիսն իբրև աղքատ, յաջողութիւն կունենար։ Նա նոր էր հիւանդանոցից դուրս եկել, շատ լղար էր երևում, նրա ձեռքը դեռ կապած էր, վերարկու չունէր և ցրտից ամբողջովին դողդողում էր։ Բայց աւա՜ղ։ Նա անփորձի մէկն էր, նոր սկսնակ։ Նա պէտք է մրցէր վարժ պրոֆեսիոնալ աղքատների հետ։

Նա հենց նոր էր հիւանդանոցից դուրս գրւել —հին ե՛րգ։ Ինչպէս ապացուցէր այդ․ որ ձեռքը կապա՞ծ է։ Բայց մի այդպիսի միջոցի կարող է դիմել իւրաքանչիւր աղքատ երեխա։ Որ նա սփրթնած է և դողդողո՞ւմ է։ Բայց նրա մրցակիցները հրա-

շալի գլխի էին լինում, որպէս զի հիւանդ թեւան և գլուխն ատամները չխչխկացնելու արուեստը։ Ինչ վերաբերում է այն բանին, որ նա վերարկու չունի. պրոֆեսիոնալ աղքատները յաճախ է երևում միայն թղթէ կտորից հագած ողորմելի ցնցոտիներով, մինչդեռ տակից նա հագած ունի բրդէ տաք սպիտակեղէն։ Այս խաբեբաներից շատերն իրենց ընտանիքն ունէին, լաւ բնակարան և հազար դոլլար էլ բանկում։ Մի քանիսը դադարեցին փողոցներում երևալուց, բայց սկսեցին որսի ուղարկել իրենց սեփական երեխաներին և մինչև անգամ սրա համար յատուկ վարձւած օտար մարդկանց։ Մի քանիսն էլ իրանց առողջ ձեռքը կապում էին մարմնին և կամ ցոյց էին տալիս բլուզի կախ ընկած թևը։ Ուրիշները ըստ երևոյթին, ոտից զուրկ են երևում, մինչդեռ իսկապէս ամենից արագ գնացողի առաջը կը կտրեն։ Կան նաև այնպիսինները, որոնք շատ հրաշալի կարողանում են կոյրի նմանուել. և իրանց առաջնորդող մարդու փոխարէն՝ շան հետ են գնում։ Աւելի վատ արհեստաւորները գզուելի վերքեր էին առաջացնում իրանց մարմնի վրա։ զանազան թունաւոր թթուուտների միջոցով։

Ամեն օր ոստիկանութիւնը մեծ քաղաքների բնակչութեան այս ողորմելի քափը հետըզհետէ դուրս էր շպրտում։ Հիւանդանոցներում և բանտերում նման անձնաւորութիւնները հազարներով են պատահում։ Սարսափելի է նայել այդ

դժբախտների հաշմանդամացած, կիսա-անասնական դեմքերին, ծածկված պզուկներով և պարագիտներով, կապկի նման շարժումներ անում, շան նման ոռնում, մինչև անզգայությունը հարբում, սպիտակ դողերոցքով բռնված գետնին զարկվում:

Որպէս զի կարողանար վճարել իր ողորմելի գիշերելու տեղի համար և սովից չմեռնել՝ Իսրգիսը պիտի աշխատեր յաղթահարելու այս բոլոր դժվարությունները: Օրից օր նա կռիվ էր մղում սատանաների դեմ՝ իր ամենավտանգավոր թշնամու դեմ, և նրա հոգին բռնված էր անթափանցելի յուսահատութեամբ: Նա նոր էր հասկանում, վերջապես թէ ինչ է նշանակում ժամանակակից քաղաքակրթութիւն: Նրա համար պարզ դարձաւ այն հանգամանքը, որ գոյութիւն ունեցող հասարակական այս կարգում իրաւունքը կոպիտ ուժի արտայայտութիւնն է հանդիսանում միայն և որի օգնութեամբ հարուստները աղքատներին իրանց ձեռքում են պահում: Նա ինքն աղքատ էր: Չնայած որ նա ազատ էր համարւում, բայց ամբողջ աշխարհը՝ նրա համար մի ինչ որ մեծ բանտի էր նման և նա կարող է, ինչքան ուզենա, այս ու այն կողմը զարկւել, ինչպես վագրը վանդակում, նրա ճաղերը կրծել անուժ չարութեան ժամանակ. բայց երկաթէ այս ճաղերը նրա ողորմելի ատամների համար բաւականին պինդ էին:

Ամենօրեա մի կտոր հացի համար տարւող այս կռւում նա իրան յաղթւած համարեց և խո-նարհութեամբ սպասում էր վախճանին։ Հասա-րակութիւնը միացել էր նրա դէմ, նրա անկումն էր ցանկանում։ Իւր վանդակի որ անկիւն էլ որ փախչի՝ միեւնոյն է, ամեն տեղ էլ նոյն ճաղերն է տեսնում, և դրանց արանքներից իրան են նա-յում չար, թշնամանական աչքերը։ Ռուշտ կե-րած, փրանտ հագնւած ոստիկաններն այնպիսի հայեացքով էին նրան գլխից վեր չափում, որ հոգին յետ-յետ էր գնում։ Պանդոկների սպասա-ւորները նոյնպէս ծուռ էին նայում նրան։ Նրանք անհամբերութեամբ էին սպասում, դեռ հազիվ վճարած կերածի և խմածի համար, թէ երբ պէտք է նա չքւի։ Անցորդները, կարծես, խօսքը մէկ արած վճռել էին աղաչանքների վրա ուշադրու-թիւն չդարձնել։ Եթէ կարիքից ստիպւած, նա ա-ւելի համառատակամ էր դառնում և յամառութեամբ ողորմութիւն խնդրում՝ նրան արհամարանքով և ատելութեամբ քշում էին։ Ամեն մէկն իւր հոգսն ունէր և նրա վիճակը ոչ ոքու չէր հետաքրքրում։ Այժմ նա այդ շատ պարզ էր տեսնում։ Իւր ամ-բողջ շրջապատը կատարեալ անկեղծութեամբ միեւնոյն բանն էր գոռում՝ և տների խուլ պա-տերը, և դռների հսկայական կողպէքները, և ցածի յարկերի պատուհանների ճաղերը, և խանութնե-րի երկաթեա փեղկերը՝ լիքը լցւած աշխարհի բո-լոր ծայրերից բերւած ապրանքներով, և անմեր-ձենալի ամրոցներին նման բանկերը, որոնք իրանց նկուղներում բազմաթիւ միլլիարդ դոլլարներ էին պահում։

XIII

ԻՒՐԳԻՍԸ ԾԱՆՕԹԱՆՈՒՄ Է ՈՃՐԱԳՈՐԾ ՇՐՋԱՆԻ ՀԵՏ

Ինչքան էլ որ սա տարօրինակ թւայ, բայց և այնպէս Իւրգիսի վիճակը յանկարծակի բարեյաջող փոփոխութիւն ստացաւ այն ժամանակ, երբ նա բանտ ընկաւ։ Պատահաբար նա կուի բռնւեց մի պանդոկապետի հետ։ Չնայած որ պանդոկապետը ամէն կողմից մեղաւոր էր, բայց բանտ տարան ոչ թէ նրան, այլ Իւրգիսին։ Եւ նա ստիպւած նորից տասն օր բանտ պիտի նստէր։

Բանտում նա ծանօթութիւն հաստատեց մի երիտասարդ մարդու հետ, որի անունն էր Ջեկ Դուենն, և որին նա ճանաչում էր դեռ այն ժամանակ, երբ նա ստիպւած էր Կօննօրի հետ ընդհարւելու պատճառով իր պատիժը կրելու։ Ջեկ Դուենը պրոֆեսիոնալ աւազակ էր։ Սակայն նա բանտ էր նստել ոչ թէ կողոպտելու համար, այլ փողոցային մի սովորական զալմաղալի պատճառով և դրա համար էլ նա Իւրգիսից շուտ բանտից ազատ արձակւեց, բայց նրան տւեց իր հասցէն։

Երբ գրպանում առանց մի կոպէկ ունենա-

լու բանտից դուրս եկաւ, մեր լիտվինի առաջին հոգսը դարձաւ նոր բարեկամին գտնելու։ Հասցէի համաձայն Իւրգիսը գնաց և շուտով հասաւ հրէական թաղամասը. տանիքի մի սենեակ վարձել էր մի երիտասարդ, գեղեցիկ ֆրանսուհի-կարանող. Նա ամբողջ օրը աշխատանքի էր նստում, բայց կարողանում էր մի կերպ ծայրը ծայրին հասցնել, շնորհիւ ուրիշ հասոյթների, այսինքն պոռնկութեամբ պարապելով։ Այս կինը Իւրգիսին պատմեց, որ Ջեկն ուրիշ տեղ է թագնուած և մի կասկածելի պանդոկի անուն տուեց։ Այս հիմնարկութեան տէրն ուզում էր հրաժարուել Իւրգիսի հարցերին պատասխանելուց, և միայն ուշադիր հարցաքննութիւնից յետո՝ նրան սանդուխքներով վեր առաջնորդեց և մի բուն տարաւ, որը գտնւում էր խանութի ետևի մասում, իսկ դուռն այդտեղի նախագաւիթն էր դուրս բերում և այդպիսով միացնում էր կեղտոտ կահաւորուած սենեակների հետ։ Այս սենեակներից մէկը գրաւել էր Ջեկ Դուէնը։

Նա շատ ուրախացաւ, երբ Իւրգիսին տեսաւ. Նա խոստովանեց, որ առանց մի կոպէկի է նստած և յոյսը դրել է Իւրգիսի վրա և երկուսով կարող են մի բան անել։ Պատի փոքրիկ պահարանում Ջեկը մի փոքրիկ լամպ ունէր. սրա օգնութեամբ ընթրիքի համար իբր թէ մի բան պատրաստեցին։ Երեկոյեան, ժամը տասնմէկին նրանք գաղտնի դռնից դուրս եկան։ Ջեկը ձեռ-

քում մի թոկ բռնած ունէր, այդ թոկի ծայրից արճճէ մի գունդ էր կախուած։ Նրանք գնացին քաղաքի հարուստ թաղամասերից մէկը և մի դատարկ փողոց ընտրեցին։ Դուէնը լապտերի սիւնը բարձրացաւ և լոյսը հանգցրեց։ Յետո երկուսն էլ անկիւնում թագնուեցին։ Շուտով մի անցորդ երևաց։ Բայց նա հասարակ բանուորի նման էր հագնուած, դրա համար էլ նրան բաց թողին։ Յետո լսեցին ոստիկանի չափաւոր քայլերը։ Շունչերը պահեցին և սպասեցին, մինչ որ նա կհեռանայ։ Սրանից յետո մօտ մի ժամ անցաւ. ցրտից համարեա փետացել էին։ Վերջապէս հեռուից նորից քայլերի ձայներ լսեցին։ Դուէնն Իւրգիսին նշան արաւ։ Անցորդը հազիւ էր նրանցից մի քիչ անցել, երբ հարուածն իջաւ և մի խուլ ճիչ արձակեց։ Բայց որովհետև Իւրգիսը գտնւում էր զոհից ոչ աւել, քան թէ երկու քայլ հեռու՝ նա ընկաւ նրա վրա և բերանը փակեց։

Համաձայն նախնական որոշման Դուէնը կողոպտուողի թևերը պիտի պինդ բռնէր, բայց սրա կարիքը չզգացուեց, խեղճն արդէն անշնչացել էր։ Իւրգիսը միայն նրա օձիքից բռնեց, մինչ որ Ջեկը ճարպկութեամբ գրպանները հետախուզեց— սկզբում վերարկուն և յետո պինջակը և ժիլետը։ Վերջապէս Դուէնն ասաց.

— Պատրա՛ստ է.

Նրանք կողոպտուածին մի կողմ՝ քաշ տուին,

Երկուսն էլ անկյունում թաքնվեցին:

գցեցին մի տեղ, իսկ իրանք ծուռ ու մուռ ճանապարհներով գնացին իրանց տեղը, բայց մէկ մէկ էին գնում։ Երբ Իւրգիսը տեղ հասաւ, նա Ջեկին տեսաւ, արդէն, կողոպուտը քննելիս։ Պարզւեց, որ վերցրել էին մի ոսկէ ժամացոյց՝ մասսիւ շղթայով, արծաթէ մատիտ, լուցկու արծաթէ տուփ, մի բուռը մանր փող և վերջապէս քսակում գտան հարիւր դոլլարից աւելի վարկային տոմսեր։ Ջեկը թեթևութեամբ շունչ քաշեց։

— Լաւ է, այժմ մի առ ժամանակ ապահովւած ենք,—բացականչեց նա։

Մի անգամ էլ քսակը հետախուզելուց յետո՝ նրանք նրա մէջը գտնւող բոլոր թղթերի հետ միասին այրեցին, միայն փողերը թողին իրանց։ Նրանք ոչնչացրին նաև ժամացոյցի բրելոկի մէջ դրւած փոքրիկ աղջկա նկարը։ Սրանից յետո Դուէնը գնաց իրան ծանօթ հնութիւններ ծախողի մօտ, որին նա ծախում էր կողոպուտը, իսկ հնութիւններ ծախողը պարտաւոր էր իրան այդպիսի ձևով յանձնւած իրերը մի տարուց առաջ չծախել։ Յետո Դուէնը վերադարձաւ այնտեղից՝ ոչ բոլորովին բաւարարւած։

— Անզգա՛մ պառաւ,—ասաց նա,—գիտէ, որ ինձ մորթելու չափ փող է հարկաւոր և դրա համար էլ կոպէկներ է տալիս։

Նրանք ազնւութեամբ իրար մէջ բաժանեցին։ Իւրգիսը ստացաւ ութանասունը և հինգ դոլլար, մի բուռն էլ մանր փող։ Նա իրան անյարմար

զգաց և ստացածը շատ համարեց. բայց ընկերը բացատրեց, որ այդպիսի յաջողութիւններ ամեն օր չեն պատահում:

Հետևեալ օրը Ջեկը Իւրգիսին թերթ գնելու ուղարկեց: Բանից դուրս եկաւ, որ շատ հաճելի էր թերթում իրանց սեփական քաջագործութիւնների մասին կարդալ:

— Ես մի ընկեր ունէի,— պատմում էր Ջեկը,— որը երբեք չէր մոռանում «գործից» յետոյ հետևեալ օրն անմիջապէս թերթերը նայելու, բայց շուտով այդ սովորութիւնը թողեց, երբ մի անգամ կարդաց, որ կողոպտուածի գաղտնի գըրպանում ամբողջ երեք հազար դոլլար է թողել:

Կողոպուտի պատմութիւնը թերթում սիւնեակի մօտ կէսն էր բռնել:

«Հաւանական է,— ասում էր թերթը,— որ այդ թաղամասում մի ամբողջ լաւ կազմակերպուած խմբակ է բուն դրել, որովհետև մի շաբաթուա ընթացքում սա երրորդ յարձակումն է տեղի ունենում, իսկ ոստիկանութիւնը բոլորովին անզօր է զգում այդ չարիքի դէմ կռուելու համար»:

Բանից դուրս եկաւ, որ կողոպտուողը ապահովագրութեան ագենտն էր, մօտը եղած կառավարչական հարիւր տասը դոլլարը յափշտակել էին: Նա խորը ուշաթափութեան մէջ է եղել: Բարեբախտաբար նրա շապկի վրա նշանակուած է եղել ազգանունը, դրա համար էլ հնարաւոր եղաւ տուժողի անձնաւորութիւնը պարզելու: Յարձակւող-

ները գլխին ուժեղ հարուած են հասցրել, որն պատճառում է լուրջ հետեւանքներ ունենալու. Երբ նրան գտան՝ նա արդէն սառած է եղել, այնպէս որ, անհրաժեշտ եղաւ աջ ձեռքի երեք մատները հանել։

Այսպիսի գործերի համար Իւրգիսը դեռ նոր մարդ էր և դրա համար էլ Թերթի յօդուածը նրան շատ վրդովեց։ Բայց ընկերը հեգնանքով ժպտաց. ինչ արած, այդպէս են այդ արհեստի պայմանները։ Չի կարելի դրանից խուսափել։ Հարկաւոր է ուրիշների օձիքից բռնել, եթէ չես ուզում, որ քոնը բռնեն։

— Բայց չէ որ այդ մարդը մեզ ոչ մի վատ բան չէր արել,—բողոքեց Իւրգիսը։

- Մե՞զ, իհարկէ։ Բայց ուրիշներին հօ՛ արել է ինչքան որ ուժ ունեցել է,—ասաց Ջեկը։

Նա Իւրգիսին բացատրեց, որ այսպիսի պայմաններում հարկաւոր չէ, որ ոստիկանութիւնն իրանց տեղն իմանայ։ Այլապէս ոչ դրամաշորթութիւնից և ոչ էլ կաշառք տալուց կարող են ազատուել։ Դրա համար էլ Իւրգիսը հնարաւորութեան չափ լաւ թաղնուած պիտի մնայ, և երբէք Դուէնի հասարակութեան մէջ չպիտի երեւայ։

Իւրգիսը կատարեց այս խորհուրդը։ Բայց երբ մօտ երկու շաբաթ անցաւ և մի լաւ պնդացաւ, հնարաւորութիւն ստացաւ աջ ձեռքն ազատ շարժելու՝ նա ձանձրացաւ։ Դուէնը, որ մի նոր գործ էր ձեռնարկել իր սեփական ռիսկի և

վախի վրա հիմնուած, արդէն կարողացել էր ոս-
տիկանութեան հետ ընդհարուել, ուղարկեց իր գեղեցիկ ընկերուհի ֆրանսուհի Մէրիին Իւրգիի մօտ, որպէս զի մենակութեան մէջ նրան սփոփանք պատճառի։ Բայց այս միջոցն էլ նրան կարճ ժամանակով միայն օգնութիւն ցոյց տուեց։ Ճար չկար, պէտք էր զիջել։ Իւրգին սկսեց յաճախել այն պանդոկները և խրախճանքի վայրերը, որտեղ Դուենն էր լինում։ Այսպիսով Իւրգին ծանօթութիւն հաստատեց Չիկագոյի ոճրագործ շրջանի հետ։

XIV

ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆ

Չնայած որ այս քաղաքը մի խումբ կապիտալիստների ձեռքի տակ էր գտնւում, բայց համաձայն տառացի օրէնքի ամբողջ իշխանութիւնը ժողովրդին էր պատկանում։ Դրա համար էլ անհրաժեշտ է միջնորդների մի ահագին բանակ ունենալ, որոնց պարտականութիւնն էր և ծառայութեան նպատակն էր իշխանութիւնը մէկի ձեռքից միւսի ձեռքը գցել։ Տարին երկու անգամ՝ գարնանը և աշնանը, քաղաքային ընտրութիւնների համար կապիտալիստներն այդ միջնորդներին հսկայական գումարներ էին տալիս։ Այդ գումարներով միտինգներ էին կազմակերպում և այնտեղ դուրս եկող հռետորներին էլ առատ վարձատրում. հարիւրաւոր փթերով ագիտացիոն գրականութիւն էին բաժանում և միլլիոնաւոր բաժակներ ձրի գարեջուր խմում։ Բացի դրանից տասնեակ հազարաւոր ձայներ էին ձեռք բերում կանխիկ դրամի վարձատրութեամբ։

Կապիտալիստներն ամբողջ տարին պէտք է այս բանակը իրանց հաշւին պահէին։ Միջնորդ-

ների գլխաւոր ղեկավարները յարաբերութեան մէջ էին կապիտալիստների առաջնորդների հետ և նրանցից էլ ստանում էին իրանց վարձատրութիւնը։ Քաղաքային ձայնաւորները և կոնգրեսի անդամները կաշառք էին վերցնում. ընտրական ագենտները նախընտրական ֆոնդի հաշւին էին պահւում, հռետորները և փաստաբանները համապատասխան հոնորար էին ստանում, բանւորական միութիւնների ղեկավարներին նիւթական աջակցութիւն էին ցոյց տալիս, իսկ թերթերի հրատարակիչներին յայտարարութիւնների համար փող էին բաց թողնում։ Բայց այս ամբողջը— իսկական բանակի միայն վարչական մասն էր, որոնք կապիտալիստների օգտին էին ծառայում։ Հասարակ, սովորական ծառայողները պարտաւոր էին իրանց վարձատրութիւնը ժողովրդից պոկել։ Դրանց թւում էին ոստիկանները, հրդեհաշէջները, ջրմուղների ծառայողները, քաղաքային ամբողջ չինովնիկութիւնը՝ մեծից մինչև փոքրը։ Իսկ նրանք որոնք դէպի հասարակական կարկանդակը մուտք չունէին՝ լռութեամբ իրաւունք էին ստանում իսկական ոճրագործութիւններ կատարելու։

Օրինակի համար, օրէնքն արգելում էր կիրակի օրերը սպիրտէ խմիչքների առևտուր անել։ Սրանք ոստիկանութեան ձեռքն էին ընկնում ճաշարանների և պանդոկների տէրերը, իսկ որպէս զի իրաւունք ստանային՝ անհրաժեշտ էր,

այդ բանը համապատասխան ծառայությունների միջոցով գնեին: Ոստիկանությունից այդպիսի կախում ունեին նաև զանազան տեսակի հասարակական որջերի տերերը, որտեղ հավաքվում էին այն բոլոր մարդիկ, որոնք զբաղվում էին մի որևէ հակաօրինական արհեստով՝ կոնտրաբանդիստները, կողոպտողները, գրպանահատները, բոլորովին փչացած մթերքների առևտուր անողները, կախարդները, փախստականները, աղքատները, շուլլերները, պոռնիկ կանայք պահողները և այլն:

Քայքայող հասարակության բոլոր այս ներկայացուցիչներն ամուր կապ ունեին միմիանց հետ, իսկ ոստիկանությանն ու քաղաքական ղեկավարներին բարեկամական վերաբերմունք էին ցույց տալիս: Ընտրությունների օրերին ոճրագործ շրջանի գլխավորները միասին էին գործում և կարող էին մինչև մի տոկոսի ճշտությամբ գուշակել ձայնատվության հետևանքն այս կամ այն շրջանում և կամ վարկեանապես փոխել ստացված հետևանքը որ ուղղությամբ էլ որ ուզենային:

Ուղիղ մի ամիս առաջ Իւրգէնը բառիս բուն իմաստով սովից մեռնում էր, իսկ այժմ կարծես գերբնական գաւազանի մի հարւածով ամեն ինչ փոխուել էր, նա թեթև աշխատավարձ ստանալու հնարաւորութիւն ստացաւ և հետևաբար. կեանքի բոլոր բարիքներից էլ կարող էր

օգտվել։ Դունը իր բարեկամին ծանոթացրեց մի իռլանդացու հետ, որին Բեն Գալլորան էին կանչում և որը սոցիալական մեխանիզմի պստիկ պտուտակներից մեկն էր։ Ուրգիսի հետ կարճ խոսակցելուց հետո՝ այս մարդը նրան մի բան սովորեցրեց, որի օգնությամբ մի ճարպիկ խոնարհ, ազնիվ բանվորի արտաքին ունեցող մեկը չէր դժվարանա բավականին մեծ գումար վաստակելու։ Ուրգիսը համաձայնեց։ Այս բանը պատահեց շաբաթ օրը և գնացին այն գրասենյակը, որտեղ քաղաքային հիմնարկություններում աշխատող բանվորների հաշիվներն էին մաքրում։ Գանձապահը նստել էր իր տնակում։ Նրա առաջ արդեն դրված էին փողով լցված բազմաթիվ ծրրարներ, այստեղ էլ հսկում էին երկու ոստիկաններ։ Նախապես իրեն տված ցուցմունքների համաձայն՝ Ուրգիսն իրեն Միքել Օֆլաերտի անունից, ծրարն ստացավ և տարավ հարևան սենյակում սպասող Գալլորանին տվեց։ Մի քիչ սպասեց և երկրորդ անգամ գնաց, ստացավ երկրորդ ծրարը, այս անգամ արդեն Իոհան Շմիդի անվան տակ։ Վերջապես նա գնաց իբրև Սերգեյ Բենիեցկիյ և ստացավ երրորդ ծրարը։ Գալլորանը կեղծ բանվորների ամբողջ ցուցակ ուներ, այդ իբր բանվորների անվան տակ Ուրգիսը գրասենյակից այդ ծրարները ստացավ։ Այս գործի համար Ուրգիսն հինգ դոլլար բաժին ստացավ, սակայն, նրան ասացին, որ ամեն շաբաթ

էլ այդքան կստանա, եթէ կարողանա լեզուն ատամների տակ պահել։ Բայց որովհետև Իւրգին իր ժողովրդի հարազատ զաւակն էր, կարող էր լռել, ինչպէս մեռած մարդ, այս պատճառով էլ Հալլորանը նրան ներկայացրեց իրան գործերին շատ ծանօթների, որպէս մի մարդ, որին կարելի է վստահել։

Իւրգիսի նոր բարեկամը նրա համար շատ օգտակար մարդ դուրս եկաւ նաև միւս կողմից։ Նրա միջոցով Իւրգիսը, վերջապէս, հասկացաւ «պրոտեկցիա» բառի իսկական նշանակութիւնը։

Մի անգամ հասարակական տանը, որտեղ նա շուտ շուտ էր գնում այժմ, Իւրգիսը անտանելի խմած դրութեան մէջ մի կնոջ պատճառով կռիւ սարքեց։ Նրա ձեռքն արդէն առողջացել էր և կարող էր ամեն կերպ օգտագործել, այնպէս որ գործը ոստիկանատանը վերջացաւ։ Կուտուզկան, ըստ սովորականի լեփ լեցուն էր, և Իւրգին իր արժանապատւութիւնից ցած համարեց այնտեղ գիշերելու։ Նա հեռախօսով յայտնեց Հալլորանին, իսկ սա անմիջապէս դիմեց իրանց շրջանի ազդեցիկ պատգամաւորին, որի թեկնածութիւնը մօտակա ընտրութիւնների ժամանակ նորից պէտք է դրւէր։ Այս դիմումն անմիջապէս իր ազդեցութիւնն ունեցաւ և հակառակ բոլոր կանոնների՝ Իւրգիսին ազատեցին առաւօտեան ժամը չորսին մօտերը։

Այն ընկերութեան մէջ, որտեղ Իւրգին էր

գործում, փողը բոլորովին ուրիշ կերպ էին գնահատում, քան թէ բանուորական թաղի բնակիչների շրջանում։ Ինչքան էլ որ սա տարօրինակ լինէր, բայց և այնպէս Իւրգիսն այժմ աւելի քիչ էր խմում, քան թէ բանուոր ժամանակը։ Այն ժամանակ նրան սարսափելի յոգնածութիւնն ու բութ անյուսութիւն էին ստիպում խմելու։ Իսկ այժմ նա երբէք չէր յոգնում և իրան հրաշալի էր զգում։

Մի գործը մի ուրիշ գործ էր ծնում։ Մի անգամ երեկոյեան Իւրգիսը և Ջէկը մի ծանօթ պանդոկում էին նստած։ Յանկարծակի այնտեղ յայտնուեց կոմիսախոների տեսք ունեցող մի մարդ, որը մի ինչ որ խուլ քաղաքի առևտրականի յանձնարարութեամբ շրջում էր այս քաղաքից այն քաղաքը։ Նա շատ վատ տրամադրութեան մէջ էր երևում։ Պանդոկում, բացի պանդոկապետից, նստած էին նաև մեր երկու բարեկամները։ Նրանք անծանօթին թոյլ տուին դախլու առաջ քիմքն էլի մի քիչ տաքացնելու և երբ նա դուրս եկաւ՝ իսկոյն յետևեցին նրան։ Միայն այն ժամանակ, երբ նա ծռուեց մութ փողոցը՝ Իւրգիսը յարձակուեց նրա վրա և ուղիղ քթին մօտեցրեց ատրճանակը, իսկ Դուենը գլխարկն աչքերը քաշած սովորական ճարպկութեամբ գրպանները թափ տուեց։

Վերցրին նրա ժամացոյցը, քսակը և կարողացան անմիջապէս ծածկուել, և յետոյ միայն

խեղճն ուշքի եկավ։ Պանդոկապետը նրանց առաջ դուռը բաց արեց, իսկ այստեղից կարելի էր հարևան հասարակական տունն ընկնել գաղտնի անցքի միջոցով։ Այդ տան տանիքում մի ուրիշ հաղորդակցային անցք կար, որը միացնում էր երեք նման հիմնարկությունները։ Շնորհիվ այս խորամանկ յարմարությունների պանդոկի մշտական հիւրերը միշտ կարող էին ոստիկանության ձեռքից փախչել, եթե, իհարկե, ոստիկանության մտքից անցնէր այդպիսի արշավանք սարքելու։

Պանդոկապետն իր աջակցության համար ստացավ նրանց այդ գործի բերած հարիւր և երեսուն դոլլարից քսան դոլլարը։

Ամեն մի արհեստ ունի իր լավ և իր վատ կողմերը։ Բայց ոճրագործ դառնալով՝ մարդը մինչև անգամ ամենածանր ժամանակներում էլ կուշտ է լինում, մինչև անգամ բանտում էլ են կերակրում։ Իսկ հիմա էլ գարնան ընտրությունները պիտի սկսուեն և գաղտնի աշխատողների բարեկեցիկ կեանքը մի առ ժամանակ ապահոված էր։

Յուրգիսը պանդոկները, թղթախաղի որջերը և հասարակական տները շրջելիս ծանոթություն էր հաստատել ամերիկական քաղաքական երկու գլխավոր կուսակցությունների ընտրական ագենտների հետ։ Նա շուտով ըմբռնեց քաղաքական մեքենայի ոչ բարդ գործունէությունը և այն, թե ինքն ինչ չափով կարող է այդ մեքենային ծառայել։ Որովհետև Հալլորանը դեմոկրատների

կուսակցութեանն էր պատկանում՝ Ուրգին էլ մտաւ այդ կուսակցութեան շարքը։ Բայց կարիք չկար մտածելու, որ իրանց դեմոկրատիզմի մէջ նրանք չափազանց մոլեռանդ էին։ Ընդհակառակն, նրանք պատրաստ էին մեծ հաճոյքով խոստովանելու, որ հանրապետականների մէջ էլ լաւերը կան, որոնք երբեմն փողերի հետ էին խաղում։ Այսպէս, եթէ ճիշտ ասենք, անցեալ ընտրութիւններին հանրապետականներն ամեն մի ձայնին չորս դոլլար էին տալիս, այն ինչ դեմոկրատները միայն երեքը։

Մի հրաշալի երեկո Ուրգինը և Գալլորանը մի ջենտլմենի հետ թուղթ էին խաղում, այդ ջենտլմենը նրանց պատմեց թէ իրան յանձնարարուած է իտալական բանուորների կուսակցութիւնը հանրապետականների կողմը թեքելու։ Մի քիչ զրուցելուց յետոյ՝ նրանք վճռեցին կուսակցութիւնը երկու մասի բաժանել, օգուտն էլ նոյնպէս ազնուութեամբ բաժանել։

Այս փորձից յետոյ՝ Ուրգինը վճռեց հիմնաւորապէս քաղաքականութեամբ պարապելու, քան թէ մշտական ռիսկի տակ մնալ իբրև փողոցային յարձակւող, մանաւանդ որ, արդէն ձանձրացել էր այդ աշխատանքից։ Հէնց այս ժամանակներում հասարակութեան մէջ բողոքի ուժեղ ձայներ էին լսւում, որ ոստիկանութիւնը ոճրագործ շրջանի հետ սերտ կապ ունի։ Բանն այնպէս էր դուրս գալիս, որ կարծես թէ բոլոր կո-

գոպուտները և գողութիւնները ոչ այնքան այս բանները սարքողներին էր հասնում, որքան ոստիկանների գրպաններն էին մտնում:

Մի ոչ այնքան երանելի գիշեր Ջեկ Դուենը ոստիկանութեան ձեռքն ընկաւ, ճիշտ այն րոպէին, երբ նա պատրաստի հագուստեղէն վաճառող մի խանութի չայրւող պահարանն էր աշխատում ջարդել: Ջեկը ձեռքից ձեռք ընկնելով՝ վերջը յանձնեցին ոստիկանապետին, բայց սա լաւ էր ճանաչում Ջեկին և նրան հնարաւորութիւն տւեց փախչելու: Թերթերը սարսափելի աղմուկ բարձրացրին: Որպէս թէ դէպքը չուռչի՝ Ջեկն ստիպւած եղաւ Չիկագոն երկար ժամանակ թողնելու: Իւրգին առանց ղեկավարի մնաց, բայց այստեղ բախտը նրան մի նոր ընկեր տւեց:

Ջոն Գարպերը մի ժամանակ Բրաունի կոնսերվների գործարանում դռնապանի պաշտօնում էր ծառայում, այն գործարանում, որտեղ Իւրգին առաջին անգամ Ամերիկայում գործ սկսեց: Վերահսկիչի հետ ընդհարւելուց յետո Գարպերին հասարակ բանւոր դարձրին, իսկ այժմ նա բանւորական միութեան գործունեա անդամն էր: Միայն ուշ Իւրգին իմացաւ, որ Գարպերի կռիւը վերահսկիչի հետ նախապէս պատրաստւած է եղել և որ Գարպերը տէրերից շաբաթը քսան դոլլար էր ստանում միութեան գաղտնի վճիռները նրանց հաղորդելու համար:

Իւրգինի մասին անհրաժեշտ տեղեկութիւն-

ներն սառնալուց հետո՝ Գարպերը դիմեց նրան, թե Անասունների Բակերում լավ ռոճկով նրա համար տեղ կա և հետո բացատրեց, թե ինչ պիտի նրանից պահանջվի։ Գարպերը հռչակավոր Մոյկա Սկելլի ագենտներից էր։ Մոյկա Սկելլին Անասունների Բակերի դեմոկրատների առաջնորդն էր։ Այս մարդն անհավատալի հարուստ էր և մասնակից էր բոլոր օգուտ բերող, բայց հակաօրինական, հիմնարկությունների գործերին, և այդպիսիներն իրանց շրջանում լիքն էին։ Նա կարողանում էր միշտ ջրից չոր դուրս գալ և ոչ ոք էլ չէր ցանկանում նրա հետ վեճի բռնվել։ Նրա սեփական ստորագրությամբ մի նամակը կամ մի խոսքը բավական էր, որ աշխատանք տրվեր մի որևէ մեկին որ գործարանում էլ որ ուզենար։ Նա հենց ինքը, նրա գործարանում շատ բանվորներ կային, որոնք օրը միայն ութ ժամ էին աշխատում և բարձր էլ վարձ ստանում։ Դրա համար էլ նա կողմնակիցներ շատ ուներ և նրանք բոլորն էլ նրա հիմնված քաղաքական միության անդամներն էին։ Տեղական բոլոր ոստիկաններն այս միության անդամներն էին և անդամներին «հեղինակներ» մականուն էին դրել։ Ընտրությունների ժամանակ «հեղինակները» խմբերով փողոցներն էին թափառում։ Նրանց գրպանները փողերով լիքն էին և բոլոր պանդոկներում ձրի խմելու իրավունք ունեին։ Բոլոր պանդոկապետներն էլ այդ միության միու-

թեան անդամներն էին, հակառակ դէպքում կի-րակի օրերը ոստիկանութիւնը նրանց հիմնար-կութիւնները կփակէր և չէր թոյլ տա զանա-զան բախտախաղեր խաղալու։ Հրդեհաշէջների խումբը նոյնպէս Սկելլիի ձեռքում էր գտնւում։ Այդ շրջանում բոլոր պաշտօնները «հնդիկներն» էին գրաւել, իսկ բոլոր խանութպաններն աշխա-տում էին Սկելլիի հետ համերաշխ մնալ մշտա-կան տանջանքից ազատւելու համար։

Այժմ հարկաւոր էր ապագա ընտրութիւն-ների համար մի նուրբ գործ սկսել։ Սկելլին հա-մաձայնութեան էր եկել Զիկագոյի մի հարուստ գարեջրատիրոջ հետ, որը ձգտում էր քաղաքա-յին խորհրդատուի կոչումը ձեռք բերել։ Սա մի ծեր, յիմար հրէա էր, ընդունակ ըտրական կամ-պանիայի համար անհաշիւ փող ցանելու չորս կողմը։ Այս բանը Սկելլին ինքը չէր կարող անել. Նա չէր ուզում շրջանում իր ժողովրդականու-թիւնը ռիսկի ենթարկել՝ «ջհուդի» թեկնածու-թիւնը դնելու համար։ Դրա համար էլ նա դիմեց քաղաքական հակառակորդներին՝ հանրապետա-կաններին և առաջարկեց գարեջուր եփողի թեկ-նածութիւնը դնել, իր կողմից խոստանում է, որ շատ չի դիմադրի սրան։ Այսպիսով հանրա-պետականները կյաղթեն այնտեղ, որտեղ նրանք վաղուց է որ չէին յաղթել, իսկ սա արդէն մի բան արժէր։

Հանրապետականները համաձայնւեցին։ Սա-

կայն Գարպերը բացատրեց, որ հանրապետա-
կաններն իսկապէս ապուշներ են, Անաստուած-
ների Բակերի հետ ոչ մի կապ չեն հաստա-
տել և դրա համար էլ չգիտեն ինչպէս սկսեն
գործել։ Անաստուածների Բակերում դժուարութիւն-
ները ծայրայեղութեան հասան այն ժամանակ,
երբ յանկարծ մի նոր կուսակցութիւն այնտեղ
ծնուեց՝ «սոցիալիստական» և այս մարդիկ ինչ-
պէս սատանաներ սկսեցին դէս ու դէն վազվզել։

Սոցիալիզմի մասին Յուրգիսը մի փոքրիկ
հասկացողութիւն չունէր։ Դրա համար էլ նա բո-
լորովին հաւատաց Գարպերի բացատրութիւննե-
րին, որ սոցիալիստները կարգ ու կանոնի թըշ-
նամիներ են, որ նրանց չի կարելի կաշառել և
կամ մի որևէ գործ սարքել նրանց հետ միասին։
Նրանց երևան գալը խառնեց ամբողջ խաղը։ Դէ-
մոկրատներն առանց ղեկավարի էին մնացել և
չէին ցանկանում հրէային ձայն տալ, այն էլ
հարուստ կապիտալիստի, և ընդունակ էին ինչ
բարի բանի համար, իրանց ձայները սոցիալիս-
տական թեկնածուին տալու։ Հէնց այստեղ Յուր-
գիսի ծառայութիւններն անհրաժեշտ էին դառ-
նում։ Նա Անաստուածների Բակերում երկար էր
ծառայել և միութեան էլ անդամ էր։ Բայց որով-
հետև առաջուա ժամանակներում նա չէր սիրել
քաղաքական հարցերով զբաղուելը, իսկ երբ հիմա
նա իրան հանրապետական յայտարարի՝ սրանով
նա ոչ մի բանի կասկածի տեղիք չի տա։ Միայն

անհրաժեշտ էր, որ Իւրգիսը նորից սկսի Անասունների Բակերում աշխատանքը, ձեռք գցի հին ծանօթութիւնները և իւր ընկերներին բացատրի հանրապետական թեկնածուի օգտակար կողմերը։ Ընտրութիւնների համար Սկեյլին նրանց տրամադրութեան տակ կթողնի գահլիճը, ժողովն այնտեղ կայացնելու համար։ Այնտեղ կհիւրասիրեն ջնուր-գարեջրատէրի գարեջրով, ճառեր կասեն և այլն։ Իւրգիսի համար հեշտ կլինի հաւաքելու հարիւր մարդուց ոչ պակաս մի խումբ, որոնք կգժւեն այդպիսի խրախճանքի համար։ Վճռական բոպէին կուսակցութեան պարագլուխները նրան կօգնեն, այն ժամանակ ընտրութիւնների օրը հարկաւոր մեծամասնութիւնը ապահոված կլինի։

Իւրգիսը լսեց այս բացատրութիւնները և յետոյ վրդովւած պատասխանեց.

— Բայց ինչպէս կարող եմ Անասունների Բակերում գործ գտնել, երբ ես «սև ցուցակն» եմ ընկել։

Գարպերը քրքջաց.

Այս բոլորը ես ինձ վրա եմ վերցնում,— ասաց նա։

— Լաւ,— ասաց Իւրգիսը.— Վստահ եղէք ինձ վրա։

Նա գնաց Անասունների Բակերը և ներկայացաւ Սկեյլիին։ Սա մի փոքրիկ, լղար ծերուկ էր դողդողացող ձեռքերով։ Նա զրուցեց զանազան դատարկ բաների մասին և միաժամանակ

կարծես յաճախորդին շօշափելու համար իր փոքրիկ աչքերն ուշադրութեամբ նրա վրա էր յառում։ Վերջապէս գործարաններից մէկի տեսչի անունով Իւրգիսին նա երաշխաւորութեան տոմս տուեց։

Այսպէս, ուրեմն, Իւրգիսը նորից բանուոր դարձաւ։ Նա անմիջապէս իր նախկին ծանօթներին գտաւ, նորից բանուորական միութեան մէջ գրուեց և սկսեց յայտարարուած թեկնածուի օգտին աշխատել։ Մի ընդարձակ դահլիճ վարձեցին, որտեղ ամեն երեկո գալիս էր Իւրգիսը մի գիժին նոր հիմնուած «հանրապետական կլուբի» անդամների ուղեկցութեամբ։ Կլուբի բացումը մեծ շքեղութեամբ կատարուեց։ Փողոցներում դէմոնստրացիաներ, և հրացանաձգութիւններ էին տեղի ունենում, զինուորական երաժշտութեան և ֆշանգների ուղեկցութեամբ շքերթ։ Մեծ բազմութիւն հաւաքուեց, և սփրթնած, դողդողացող թեկնածուն կարդաց թղթի վրա գրած իր ճառը, որը յատկապէս նրա համար գրել էր Սկելլի քարտուղարը։ Բայց թեկնածուին պաշտպանելու համար սեփական ատօմոբիլով եկաւ մի ճարտասան սենատոր՝ հանրապետական կուսակցութեան տուզերից մէկը։ Նրա ոգևորուած ճառը առաւօտեան թերթերում ամբողջութեամբ տպեցին։ Այնտեղ ի միջի այլոց ասացին, որ հանրապետականների թեկնածուի այդ յանկարծակի ժողովրդականութեան ձեռք բերելը ոչ պակաս ան-

հանգստութիւն պատճառել Մայկ Սկըլլին, դեմոկրատական կոմիտէի նախագահին։ Նա աւելի վատ զգաց, երեւի, իրան, երբ դիտմամբ նրա պատուհանի առաջ լապտերների լուսաւորութեան տակ մի ազդու շքերթ կազմեցին, որը վերջացաւ հրաշալի խմելարանութեամբ։ Ընտրողները ասում էին, որ ընտրական այս կամպանիայի ընթացքում նրանց խմած գարեջրերից ամենալաւը հէնց իրանց այդ օրը խմածն էր։

Հետեւեալ օրերի ընթացքում Իւրգիսն աշխատում էր տանից ձեռքերը ծալելու։ Նա, իհարկէ, ժողովներում ճառեր չէր ասում։ Դրա համար գոյութիւն ունեն փաստաբաններ և յատուկ նշանակուած ուրիշ մարդիկ։ Նրա պարտականութիւնն էր կոչեր գրել, աֆիշներ կպցնել տալիս, կարգադրում էր գարեջուր և ֆշանգներ բաժանելու։ Նրա ձեռքով մի քանի հարիւր դոլլար անցաւ։

Ընտրութեան օրն առաւօտեան ժամը չորսից նա ոտքի վրա էր։ Մի երիտասարդի տրամադրուած կառքով իր կողմնակիցներին հաւաքելու համար նա տնից տուն էր գնում, իբր թէ ուզում է հանդիսաւոր շքերթով նրանց ընտրական արկղների մօտ տանել։ Ինքը վեց անգամ ձայն տուեց և իր ամենամօտ բարեկամներին էլ ստիպեց նոյնն անելու։ Ամերիկա նոր եկած մի ամբողջ խմբի նա տարաւ ընտրութիւններին մասնակցելու համար և օգտագործեց այս նպատա-

կով նաև այս դէպքի համար դիտմամբ ամերի-
կական հպատակութիւն ընդունած լիտովցիներին,
լեհերին և չեխերին։ Հերթով նա նրանց տանում
էր ընտրական արկղների մօտ և յետո հերթով
կամաց կամաց նրանց ընտրական ուրիշ ագենտի
տուեց, սա էլ իր հերթին նրանց տանում էր հա-
րևան բիւրօն այնտեղ էլ ձայն տալու համար։

Առաւօտեան վաղ ծախսերի համար նրան
հարիւր դոլլար տուին։ Սրանից յետո մի այդպի-
սի քանակութեամբ գումար նա էլի երեք ան-
գամ պահանջեց և ամեն անգամ մօտ մի չորրորդ
մասը նրա գրպանումն էր մնում։ Մնացածը, նա
իսկապէս, ընտրողների մէջ էր բաժանում և երե-
կոյեան հանրապետականների թեկնածուն մեծ
հանդիսաւորութեամբ ընտրուեց, որը դժգոհու-
թիւն պատճառեց դեմոկրատներին, բայց համա-
ձայն իրանց առաջնորդի գաղտնի ցանկութեան։
Իւրգին իր ընկերների շրջանում ամբողջ գի-
շերը խմում էր, տօնում էր «պրոլետարիատի
յաղթանակը» անխիղճ կապիտալիստների դէմ։

XV

ԳՈՐԾԱԴՈՒԼ ԵՒ ՇՏՐԵՅԿԲՐԵԽԵՐՆԵՐԸ

Ընտրութիւններից յետոյ Իւրգիսը Անասուն-ների Բակերում մնաց ծառայելու։ Հասարակութեան վրդովմունքը ոստիկանութեան ոճրագործ շրջանի հետ ունեցած կապի առթիվ շարունակւում էր և դրա համար էլ անհրաժեշտ էր զգոյշ մնալ։ Նրա աշխատանքը բաւականին թեթև էր։ Բացի դրանից Մայկ Սկելլին նրան խորհուրդ տւեց մնալ, հասկացնելով, կարող է պատահել, որ նրա ծառայութիւնները նորից պէտք կգան։

Իւրգիսն ապրելու համար ընտրեց կահաւորւած սենեակները։ Նա աշխատեց մի որևէ բան իմանալ մօրաքոյր էլզբետի մասին և շուտով իմացաւ, որ նա երեխաների հետ միասին քաղաք է տեղափոխւել։

Սրանից յետոյ նա էլ նրանց մասին չմտածեց։ Նա մօտեցաւ ամուրիների ընկերութեանը և աշխատեց որքան կարելի կեանքն ուրախ անցկացնել։ Արդէն վաղուց նա հրաժարւել է իր փալաս—փուլասներից և այժմ քաղաքավարի հագուստ ունէր, օսլայած օձիք և կարմիր փողա-

պատ։ Շաբաթը տասն ու մեկ դոլլար էր ստանում և մոտ երկու երրորդ մասը կարող էր գանազան դժվարությունների համար ծախսել և խնայած գումարին ձեռք չտալ։

Շուտով նա հասկացավ Մայկ Սկեյլիի շպրտած ակնարկը։

Կոնսերվների գործարանատերերի և նրանց բանվորների միջև կնքված կոլեկտիվ պայմանագիրը մայիս ամսին պետք էր իր գործունեությունը դադարեցներ։ Արդեն սկսել էին բանակցությունները նոր համաձայնություն կնքելու համար և Անաստասիների Բակերի պատերի տակ սկսեցին գործադուլի մասին մտածել։ Հին պայմանագիրը վերաբերում էր միմիայն բարձր գասի բանվորների աշխատավարձին, այն ինչ «Մագործների Միության» ամբողջ երկու երրորդ մասը սև աշխատանքի տիպի բանվորների դրության մեջ էին։ Չիկագոյում սև աշխատանքով զբաղվող բանվորները ժամը տասն և ութ ու կես ցենտ էին ստանում և միությունն աշխատում էր, որ նման պայմանները անպայման ապագա դաշնագրի մեջ մտնեն։ Բանակցությունների ժամանակ թվերը ձեռքերին ապացուցեցին, որ բանվորի ամենաբարձր ռոճիկը շաբաթը տասըն և չորս դոլլարից չի բարձրանում. ցածրը երկուս և կեսին է հասնում, իսկ կլոր թվով ընկնում է վեց դոլլար և վաթսունը և վեց ցենտ, այսինքն մի գումար, որ չի կարող բա-

ւարարել ընտանիքաւոր բանւորին, իսկ եթէ յիշենք, որ կոնսերվների գինը վերջին հինգ տարիների ընթացքում համարեա հինգ անգամ բարձրացել է, իսկ կենդանի անասունների արժէքը բաւականին իջել է, այն ժամանակ պարզ կլինի, որ գործարանատէրերը հեշտութեամբ կարող են բանւորների պահանջներին բաւարարութիւն տալ։ Սակայն նրանք այս բանը բոլորովին մերժում էին։ Անմիջապէս երբ կոլեկտիւ պայմանագրի գործունէութիւնը դադարեց, գործարանատէրերը մինչև անգամ աշխատավարձն ամեն մի ժամում երկու ցենտով պակասացրին։ Ամերիկայում նկարագրութեան այս շրջանում մօտ միլլիոն ու կէս բանւորներ կային և միայն Ջիկագոյում մինչև հարիւր հազար մարդ կար։ Այսպիսի պայմաններում գործարանատէրերը ոչ մի զիջում չէին կարող անել։ Յունիս ամսում միութիւնների ժողովներում հարցը քւէարկութեան դրւեց—և գործադուլը բռնկւեց Ջիկագոյի բոլոր գործարաններում և բոլոր սպանդանոցներում։ Մի գեղեցիկ օր թերթերը յայտարարեցին, որ մսի սով է սպառնում։ Մօտ վաթսուն հազար բանւորներ թողին գործարանները։ Իւրգիսը իհարկէ նրանց թւում էր։ Օգտւելով պարապ ժամանակից՝ նա գնաց Մայկ Սկելլի մօտ, նրան տեսնելու, որն ապրում էր արւարձանի ամենալաւ փողոցներից մէկում, մի հրաշալի տան մէջ։ Յատկապէս նրա համար փողոցը մայթել

էին և էլեկտրական բացառիկ լոյսով լուսաւորել։

Սկեյլին կարծես թէ վրդովւած էր և մտատանջութեան մէջ էր ընկած։

— Ի՞նչ էք ուզում,— հարցրեց նա Իւրգիսին։

— Ես ուզում եմ իմանալ, չէ՞ք կարող այս գործադուլի ժամանակամիջոցում մի որևէ գործ տալ ինձ։

Սկեյլին յօնքերը կիտեց և շեշտակի նրան նայեց։

Առաւօտեան թերթերում Սկեյլի ստորագրութեամբ շատ կտրուկ և գործարանատէրերի դէմ ուղղւած մի յօդւած էր տպւած։ Հեղինակը յայտնում էր, որ եթէ գործարանատէրերը չեն ցանկանում իրանց բանւորների նկատմամբ հոգս քաշել, այն ժամանակ այս բանը ստիպւած իր վրա կվերցնի քաղաքային ինքնավարութիւնը։ Ուրեմն Իւրգիսն անկեղծօրէն հաւատացած էր, որ Սկեյլին գործադուլին մասնակիցների կողմն է։ Պէտք էր, ուրեմն, երևակայել Իւրգիսի զարմանքը, երբ որ քաղաքագէտը նրան հարցրեց։

— Բայց ինչո՞ւ չէք ուզում շարունակել ձեր սովորական աշխատանքը։

— Շարունակե՞լ... Ինչպէս դաւաճան։

— Իսկ ինչո՞ւ ոչ։

— Բայց... ինչպէ՞ս թէ...— փնթփնթաց Իւրգիսը, մինչև այժմ սրբութեամբ հաւատա-

ցած էր որ նա պարտաւոր է իր միութեան հետ միասին գործելու։

— Գործարանները լաւ աշխատողների կարիք են զգում—իսկ ուէրերն էլ կարող են շնորհակալ լինել նրանցից, որոնք կպահպանեն իրանց հաւատարմութիւնը։ Ձեզ անհրաժեշտ է հանգամանքից օգտուել և աշխատել աւելի լաւ տեղաւորուել։ Ի՞նչ կարող էք անել դուք ձեր գործադուլով։

— Չգիտեմ,—շշնջաց Իւրգիսը։

— Ի հարկէ, մինչդեռ պէտք է իմանալ, որ մի քանի օրից յետո գործադուլը կվերջանա, և բանուորները կյաղթեն։ Դրա համար էլ օգտուեցէք բոպէից։

Իւրգիսը հասկացաւ։ Նա անմիջապէս գործարան մեկնեց։ Գործադուլին մասնակցողները բազմաթիվ սպանուած մշակման զանազան ձևերում գտնուող խոզեր էին դէս ու դէն շպրտել, իսկ այժմ վերահսկիչներն սուրհանդակների և գրասենեակային ծառայողների հետ միասին խոզերով լցուած տակառները քարշ էին տալիս, սառուցարանը լցնելու համար։

— Ես ուզում եմ աշխատել,—ասաց Իւրգիսը։

Վերահսկիչը պայծառացաւ։

— Ապրէք,—ասաց նա այստեղ եկէք։

— Սպասեցէք առարկեց,—Իւրգիսը,—դուք սրա համար մի քիչ աւել պիտի վճարէք ինձ։

— Իհարկէ, իհարկէ, ինչքա՞ն էք ուզում։

Յուրգիսն ամբողջ ճանապարհին այս մասին էր մտածել, բայց վճռական րոպեին համարձակությունը նրան դավաճանեց։ Նա բռունցքները սեղմեց և ասաց.

— Օրական երեք դոլլար։

Վերահսկիչը շտապեց համաձայնելու։ Բայց շուտով Յուրգիսն իմացավ, որ գրագիրները և սուրհանդակները, օրը հինգական դոլլար էին ստանում, և նա պատրաստ էր իր վախկոտության համար իրան ծեծելու։

Այսպիսով Յուրգիսը ամերիկական մոդնի հերոսներից մեկը դարձավ, որի առաքինությունը միայն տանջվողների բարեհոգությամբ կարելի էր նմանացնել։ Սակայն նմանությունը լիակատար չէր. նրան առատ վարձատրում էին, հագնվում էր քաղաքավարի և օրն երեք անգամ էր ուտում, այն էլ այնքան որ տեղից շարժվել չէր կարողանում։ Բացի դրանից, նա իր կաշվի համար կարող էր չվախենալ, բացառությամբ այն բանի, երբ երբեմն կարծես թե նրա երևակայությունն ասում էր նրան, որ թողնի Անասունների Բակերի սահմանները։ Բայց այնտեղ էլ ոստիկանությունը խնամքով պահպանում էր նրան։

Ոչ ոստիկանությունը ոչ էլ գործադուլի մասնակիցները չէին ցանկանում, որ անկարգություններ առաջ գան։ Դժբախտաբար այս բանը համառությամբ մի ինչ որ երրորդ կողմն էր

Գործադուլի մասնակիցները

ուզում, այսինքն պարբերական մամուլը։ Իր նոր աշխատանքի հէնց առաջին օրը Իւրգիսը գործն ընդունած ժամանակից շուտ վերջացրեց և երեք ընկերների հրաւիրեց, որ միասին քաղաք գնան խմելու համար։ Գործարանի դռների առաջ ոստիկանական պահակ և բանւորական միութեան մի քանի ներկայացուցիչներ էին կանգնած, որոնք նշանակում էին բոլոր ներս և դուրս մտնողներին ու գնացողներին։ Հէնց որ Իւրգիսը և նրա ընկերները փողոց դուրս եկան, մի խումբ բանւորներ շրջապատեցին նրանց և սկսեցին յանդիմանել դաւաճանութեան համար։ Որովհետև նրանց էլ պարտքի տակ չէին ուզում մնալ՝ ընկսեցին միմեանց սպառնալիքներ տալ։ Յետո մէկը շտրեյկբրեխերներից մէկի գլխից գլխարկը թռցրեց և դէն շպրտեց։ Այս բանից յետո դուրս եկողներից երկուսը լաւ համարեցին նահանջել։ Իւրգիսը մնացած ընկերներից մէկի հետ փողոցում էլի մի քիչ ծեծկւեց, մեծ մասամբ բաւականութեան համար, փոխադարձաբար բռունցքի մի քանի հարւածներ տալու և յետո նահանջեց թշնամու քանակի շատութեան պատճառով։

Գործարան վերադառնալուց յետո նա տեսաւ իրեն ուղեկիցներից մէկին, որը վրդովւած պատմում էր, թէ ինչպէս ինքը և նրա ընկերները յարձակման ենթարկւեցին։ Մի քանի լաւ հագնւած երիտասարդներ նրանց խօսքերը գրի առան։

Դեռ երկու ժամ չէր անցել, երբ փողոցում արդէն ցրիչները նոր տպած թարմ թռուցիկներ սկսեցին ցրել, որտեղ մեծ տառերով փայլփլում էր հետևեալ վերնագիրը.

«Չարամիտ յարձակում ազատ աշխատանքի վրա»։

«Շարէյկըրրէխերներն ամբոխի կատաղութեան զոհ դարձան»։

Եթէ Իւրգիսը հետևեալ օրը հիւսիսային Ամերիկայում լոյս տեսնող բոլոր թերթերը նայէր՝ այն ժամանակ նա կիմանար, որ գարեջրի համար գրօսանքի գնալը խոշոր նշանակութիւն ունեցող դէպք է դարձել և քննւում է առաջնակարգ լուրջ թերթերում։

Ինչ էլ որ լինէր, պէտք էր երկուսից մէկն ընտրել, կամ Անասունների Բակերից անմիջապէս դուրս եկող տրամվայի վագոնը նստէր և Չիկագօ գնար կամ գործարանում գիշերել՝ սրա համար յատուկ կահաւորուած բնակարանում։ Իւրգիսը երկրորդը գերադասեց, բայց շուտով զղջաց։ Ամբողջ գիշերն այնտեղ էին գալիս նոր ու նոր շարէյկըրրէխերներ և խանգարում էին քնել։ Նրանց մէջ կանոնաւոր մարդիկ համարեա չկային. մեծ մասը նեգրեր էին կամ ամենաստորին տիպի գաղթականներ։ Ամբողջ գիշերը նրանք աղմկում էին, երգում, կռւում և միմեանց ծեծում, և քնեցին միայն այն ժամանակ, երբ արդէն հարկաւոր էր աշխատանքի անցնել։

Մյուս օրը Յուրգիսին գրասենյակ կանչեցին։ Կառավարիչը մի քանի հարցեր տուաւ նրան այն մասին, թե ինչպես են ընթանում սպանդանոցներում աշխատանքը։ Յուրգիսի սիրտն ուրախությունից սկսեց արագ-արագ բաբախել. նրան ուզում էին վերահսկի՞չ նշանակել։ Այդպիսի բարեյաջող դեպք բանւորի կեանքում շատ շատ չի պատահում։ Յուրգիսն շտապեց հանգամանքից օգտվելու։ Աղճով ասած, նա ինքն էլ իր գործը լավ գիտեր և ուրիշներին շատ լավ կարող էր կառավարել։ Բայց զգալով որ ուղիղ իր տեղն է ընկնում, նա ուզեց իմանալ, թե կմնա այդ տեղում։ Չեն դուրս անի իրան, երբ գործադուլը վերջանա։

Կառավարիչը նրան հավատացրեց, որ գործարանի վարչությունը ոչ մի դեպքում իր շտրեյկբրեխերներին չի մոռանի։ Հարկավոր է դաս տալ բանւորական միություններին և յատկապես վերահսկիչներին, որոնք ճիշտն ասած, այս գործը հնարեցին։ Մինչև գործադուլի վերջանալը Յուրգիսն օրական հինգ դոլլար պիտի ստանար, իսկ գործադուլից յետո շաբաթական քսանուհինգ դոլլար։

Յուրգիսը հագուստների նոր փոխնորդ և երկարավիզ հաստ կօշիկներ ստացաւ և գնաց աշխատանքի։

Գործադուլի ժամանակ սպանդանոցները սովորական դրութեան մէջ չէին։ Այնտեղ զգւե-

լի նեգրեր և գաղթականական ամենատեսակի թափթփուկներ էին լցված, որոնք ոչինչ չէին հասկանում, ինչ որ նրանց ասում էին։ Նրանց մեջ կարելի էր մի քանի գրագիրների և գրա-սենեակային ծառայողների պատահել, դրանք խղճալի և ողորմելի էին, որոնք խեղդող շոգից և արևան հարից թուլացել էին։ Բոլորն էլ ուժա-թափ էին եղել և չէին կարողանում մի դիւժին անասունների գործը վերջացնել, մինչդեռ մի օր առաջ այստեղ մի ժամւա ընթացքում չորս-հարիւր պատրաստի տակառներ էին շարում։

Ոչ նեգրերը և ոչ էլ մնացած թափթփուկ-ները տրամադիր չէին լուրջ աշխատելու։ Ամեն մի հինգ րոպէից յետո հանգստանում էին։ Որով-հետև նախկին խիստ կանոնները այժմ չէին գործում, նրանց թոյլ էին տալիս բաց օդ դուրս գնալու և ծխելու։ Նրանք ջանասիրութեամբ օգտւում էին այս կանոնների և վերահսկիչները նրանց գտնելու համար հալից էին ընկնում։ Ինչ վերաբերում է գրասենեակային ծառայողներին՝ նրանք վախի ազդեցութեան տակ անում էին այն բոլորը, ինչ որ կարող էին. Նրանցից երե-սուն հոգի գործադուլի հէնց առաջին օրը դուրս արւեցին, որովհետև հրաժարւեցին իրանց հա-մար անսովոր աշխատանք տանելու։ Այս բանից յետո մնացածների դրութիւնն աւելի սրւեց։ Բայց ոչ մի տեսակի վախով չի կարելի փոխա-րինել արւեստը և փորձը։

Յուրգիսը կարգի պիտի բերեր ամբողջ այս բանդան։ Եվ նա աշխատում էր ամբողջ ուժով, ընկնում էր այս ու այն կողմ և ամեն մեկին բացատրում իր պարտականությունը։ Իր ամբողջ կյանքում նա դեռ հրաման չէր տվել, բայց դրա փոխարեն ինքը շատ էր լսել, այդ պատճառով, նա գիտեր, թե ինչպես պիտի հրաման տալ և շուտով իր դերի մեջ մտավ։ Դըժբաղդաբար, նա պետք է գործ ունենար մարդկային բոլորովին անպետք նյութի հետ։

Առաջին ընդմիջումից հետո սպանդանոցում բոլոր դանակներն անհայտացան, և այժմ ամեն մի նեգր իր երկարավիզ կոշիկների ճտքերում խրած ունի խնամքով սրած դանակ։ Շուտով Յուրգիսը գլխի ընկավ, որ հանգստանալու համար դուրս գնալու թույլատվությունը մի քանի ձեռընհաս մարդկանց մեջ միտք յառաջացրեց՝ միանգամից մի քանի հիմնարկություններում ծառայել և ամեն տեղ էլ վարձ ստանալ։ Մինչև անգամ մի ժիր տղայի այդ բանում բռնեց, բայց մեղավորն աչքով արավ նրան և տասըդոլլարանոց թղթադրամը մոտեցրեց Յուրգիսին, իսկ սա դրեց իր գրպանը։ Շուտով այդ սիստեմը լավ հիմք գտավ և Յուրգիսն սկսեց լավ հունձ հավաքել։

Այդպիսի պայմաններում գործարանատերերն ստիպված էին իրանց երջանիկ համարելու, երբ որ նրանց հաջողվում էր հիվանդացած

կամ հաշմանդամացած անասունի բանը պրծա-
ցնելու: Առողջ անասունը կարող էր սպասել:
Բայց երբ պատահում էր, որ ճանապարհին մի
որևէ խոզ հիվանդանում էր փորահարինքով և
խեղդվում, այն ժամանակ մնացած խոզերը յար-
ձակվում էին նրա վրա և ուտում էին մինչև
ոսկորները: Սրանից յետո անհրաժեշտ էր այդ
վագոնում գտնվող բոլոր խոզերին կոտորել, հա-
կառակ դեպքում վարակիչ հիվանդությունն աւե-
լի հեռուները կտարածվեր: Ճիշտ այդպես էլ
պետք էր վարվել եզների հետ, որոնք ճանա-
պարհին վիրավորվում էին իրանց հարևանների
պոչերից:

Գործարանատերերն իրանց ագենտներին
հարավային բոլոր նահանգներն էին ուղարկում,
նեգրեր հավաքելու համար: Շատ քաղաքներ օգ-
տվեցին այդ հանգամանքից և մաքրեցին իրանց
բանտերը. Քսանչորս ժամվա ընթացքում դա-
տավորներն արդարացնում էին բոլոր մեղադր-
յալներին. սրանք բոլորն էլ խոսք էին տալիս
անմիջապես հեռանալ այդ քաղաքից, իսկ ա-
գենտներն էլ հէնց այդտեղ դուրս էին բերում
նրանց դահլիճից և մինչև կայարան ուղեկցում:
Ուտելեղէններով, արաղով և գարեջրով լիքը
լցված ամբողջ գնացքներ էին գալիս, որպեսզի
այսպիսի միջոցներով կարողանան փախչել ցան-
կացողներին հավաքելու:

Չնայած այս բոլոր ջանքերին՝ գործարա-

նատէրերը չէին կարող համոզուած լինել իրանց յաղթանակի գործում։ Բանուորների իննսուն տոկոսը մասնակցում էր գործադուլին և դրա համար էլ անհրաժեշտ էր համարեա ամբողջ անձնական կազմը նորացնել։ Մսի գինը բարձրանում էր, իսկ հասարակական կարծիքը պահանջում էր, որ ինչ գնով էլ որ լինի, պէտք է գործադուլին վերջ տալ։ Գործարանատէրերն առաջարկեցին գործը միջնորդ դատարանին յանձնել։ Բանուորներն ընդունեցին այս առաջարկը և գործադուլը վերջացաւ։ Ընդունուած էր, որ գործադուլին բոլոր մասնակցողներն առանց բացառութեան նորից իրանց տեղերը կընդունուեն։ Իրգին սաստիկ վրդովուած էր։ Եթէ բոլորն անխտիր իրանց տեղերը նորից բռնեն, այն ժամանակ, նա, իհարկէ, վերահսկիչի պաշտօնը կըկորցնի։ Բայց դրասենեակում նրան հանգստացրին։

Հետևեալ օրը գործարանի դռների առաջ քսան հազար մարդ խռնուեց։ Վարչութեան ներկայացուցիչներն ամբոխի միջից մէկը միւսի ետևից ջոկեցին նրանց, ովքեր որ նրանց յարմար թուացին։ Ջոկած բանուորները բակն էին մտնում։ Սակայն, շուտով բոլորն էլ նկատեցին, որ միութեան ոչ քարտուղարները, ոչ գանձապահները և, յատկապէս, ոչ էլ նրանք, որոնք միտինգներում ճառեր էին ասել՝ ջոկուածների շարքը չընկան։

Բողոքի ձայներ լսեցին։ Հասո մասգործը, միութեան նախագահը ջոկելու ժամանակ հինգ անգամ յետ մնաց։ Այս բանը վրդովեց նրա ընկերներին։ Նրանք մի պատգամաւորութիւն ընտրեցին և ուղարկեցին գրասենեակ բացատրութիւն պահանջելու համար, բայց ոստիկանները ձեռնափայտերով պատգամաւորներին քշեցին և չթողին բակը մտնելու։ Այնուհետ աւելի սաստկացաւ, հարիւրաւոր ձայներ գոռում էին. —

— Կամ մենք բոլո՛րս էլ կմտնենք կամ ո՛չ ոք։

Հասո նախագահը կիտուած քարերի վրա բարձրացաւ և գոռաց.

— Մեզ էլ ոչինչ չի մնում անելու, ընկերնե՛ր։ Հարկաւոր է հեռանալ այստեղից։

Բայց մասգործները հենց այդտեղ նոր գործադուլ առաջ բերին։ Նրանց շուրջն անմիջապէս հսկայական ամբոխ հաւաքուեց, և սկսեց բացականչութիւններով իր համակրանքն արտայայտել։ Մի քանի բանւորներ, որ արդէն գործի էին անցել, դէն շպրտեցին իրանց գործիքները և նրանց հետ միացան։ Օրը վերջացաւ շտրէյկբրէխերների հետ մի շարք ընդհարումներ տեղի ունենալուց յետոյ։

Բայց և այնպէս կոնսերվի գործարանատէրերին յաջողուեց իրանց ձեռնարկութիւններում աշխատանքներն սկսել։ Նրանք կարողացան բանւորների նոր կազմ կազմակերպել։ Ամէն գի-

չեր մէկ-երկու հազար հոգի շարէյկըրէխերներ էին գալիս, որոնց արտադրութեան զանազան ճիւղերի համաձայն աշխատանքն էին բաժանում։ Յաճախ սրանց մէջ լինում էին իրանց գործն իմացող մարդիկ, ինչպէս օրինակ գործարանատէրերին պատկանող խանութների մասգործները և գործակատարները կամ թէ ուրիշ քաղաքների միութեան անդամ մասնագէտ բանւորները, որոնք այնտեղից Չիկագօ էին եկել աշխատելու, յոյս ունենալով, որ այստեղ նրանց ոչ ոք չի ճանաչի։ Բայց մեծամասնութիւնը նեգրեր էին. դրանց հաւաքել էին հարաւային բամբակի պլանտացիաներից և բոլորովին չէին հասկանում իրանց յանձնւած գործի իմաստը։ Ոստիկանութիւնը և քաղաքի ատկանքները միացան, որպէս զի շարեյկըրեխերների հաշւին իրանք օգտւեն։ Ամեն գիշեր գործարաններին մօտ գտնւող հրապարակներում նեգրերի մէջ կռիվ և գալմաղալներ էին առաջանում հէնց այդտեղ փողերը տանուլ տալու համար։ Ամեն կողմ թափթփւած էին երկու սեափ երեք կամ չորս հազար մարդիկ։ Հարեան բոլոր պատուհաններից դուրս էին նայում սև ու խուճուճ գլուխները։ Այս նեգրերը ստրուկների սերունդներն էին և հէնց նոր էին եկել այնպիսի վայրերից, որտեղ դեռ գոյութիւն ունէին ստըրկատիրական բոլոր սովորութիւնները։ Եւ ահա վերջապէս նրանք ազատ դարձան և ինչքան ուզենան կարող են ստոր զգացումների ենթարկւել։

Արագ ինչքան ասես կար ջահել, սպիտակ աղջիկները փարվում էին հաստ նեգրերին, որոնք իրանց երկարավիզ կոշիկների ճտքերում դանակ ունեին խրած։ Ամեն գիշեր գործարանում մի որևէ մեկին սպանում էին։ Վարչությունը թաղման իրավունքի համար չգրված բլանկներ ուներ, այնպես որ դիակները կարելի էր հողին յանձնել, առանց քաղաքային իշխանության անհանգստացնելու։

Տղամարդիկ և կանայք իրար մոտ թափթփված էին քնում. և գիշերները բանվորական կազարմաներում այնպիսի տեսարաններ էին տեղի ունենում, որ Ամերիկան դեռ չէր տեսել։ Որովհետև կանայք հասարակական տների ամենաողորմելի թափթփուկներն էին, շուտով սիֆիլիսը սարսափելի չափերով սկսեց տարածվել և այն էլ գործարանում, որտեղ ուտելեղէններ էին պատրաստում։

Արեգակը իր ճառագայթները գցել էր հազարավոր անասունների հոտի վրա, որը բռնել էր բոլոր տեղերը, ածուխի փոշով շաղախված երկաթուղին, հսկայական շենքերը, որտեղ ոչ մի անգամ չի թափանցել քամու մի չնչին շարժում անգամ, թարմ արևան գոլորշիացող գետերը, արհեստական միջոցներով պատրաստվող նիւթեր պատրաստող գործարանը, որն անհաւատալի գարշահոտութիւն էր տարածում, հարիւրաւոր փթերով հոտած թափթփուկների կույտերը, ճաշարան-

ները, որոնց ամբողջ յատակը թափթփուկներով էր ծածկուած և անհաւատալի չափի հասած կեղտոտ արտաքնոցները։

XVI

ՆՈՐԻՑ ԱՆԳՈՐԾ

Յուսահատութեամբ բռնուած բանուորական միութիւնները դեռ շարունակում էին մի ինչ որ բանի սպասել. մի սպառողները անվերջ գանգատներ էին անում, բայց գործարանատէրերը յամառութեամբ տանում էին իրանց գիծը: Կամաց-կամաց նոր բանուոր էին գալիս և սա հնարաւորութիւն էր տալիս աւելի պահանջկոտ դառնալու նախկինների նկատմամբ. Նրանց արդէն փոխադրել էին հատ հատ պատրաստուած իրերի բանակի աշխատավարձի և անխնա դուրս էին շըպրտում, եթէ չէին կարողանում արագ աշխատել: Իւրգիսը, որն այժմ այս փոփոխութեան գործունեա մասնակիցներից մէկն էր՝ սովորեց հրամաններ տալ և կարգադրութիւններ անել: Նա անընդհատ խմում էր, որպէս զի խլացնի շոգուց և գարշահոտութիւնից առաջացող զզուանքը: Բացի դրանից իբրև շտրէյկբրեխերի նա ինքն իրան ամբողջ հոգով ատում էր: Նա չար և կոպիտ էր դարձել, բանուորների հետ խիստ էր վարւում և այնպէս խիստ հսկողութեան տակ էր պահում, որ նրանք հոգնածութիւնից վայր էին ընկնում:

Նրա միակ զւարճութիւնն էր երեկոները Ձիկագո գնալը. Նա այնտեղ պանդոկից—պանդոկ հասարակական տնից հասարակական տունն էր թափառում և ռուլետկա ու թուղթ էր խաղում: Մի անգամ նրա գործը բոլորովին անյաջող անցաւ. Նա տանուլ տւեց տասնեհինգ դոլլար և որպէս զի մխիթարւի սովորականից աւելի շատ խմեց: Բանւորական կազարման վերադարձաւ առաւօտեան մօտ ժամը երկուսին: Միջանցքներից մէկում նա հանդիպեց մի քւած կին, նա հագած ունէր եապոնական կեղտոտ խալաթ, նա էլ նոյնպէս բոլորովին հարբած էր և որպէս զի չընկնի, Ուրգիսի վզովն ընկաւ: Նրանք շուռ եկան, որպէս զի ամենամօտ մութ սենեակը գնան, բայց դեռ երկու քայլ չէին արել, երբ յանկարծ դուռը բացւեց և մի մարդ ձեռքին լապտերը բռնած ներս մտաւ:

— Ո՞վ կա այստեղ,— բարկացած գոռաց նա:

Ուրգիսն ուզեց մի ինչ որ պատասխան տալ, բայց ներս մտնողը լապտերը բարձրացրեց և Ուրգիսը յանկարծ նրան ճանաչեց: Նրա կրծքում սիրտը դողաց—դա Կոննորն էր:

Կոննորը՝ դռների նախկին վերահսկի՛չը: Մի մարդ, որն այլանդակել է իր ամբո՛ղջ կեանքը: Մի մարդ, որի պատճառով բանտ ընկաւ, զրկւեց կնոջից, ընտանիքից, տնից:

Այն ժամանակւանից, երբ Ուրգիսը նորից Անասունների Բակերն ընկաւ, սկսեց յաճախ

մտաբերել Կոննորին. բայց սա մի հեռաւոր, գունաթափ յիշողութիւն էր։ Բայց հէնց որ Կոննորը ցցուեց նրա աչքերի առաջ՝ խելագար կատաղութիւնը նախկին թափով բռնկեց նրան։ Նա յարձակուեց իր վաղուցուա թշնամու վրա, վայր գլորեց և կոկորդը բռնած սկսեց գլուխը յատակին խփել։

Կինը յուսահատական ճիչ բարձրացրեց, դուրս թափուեցին մարդիկ. լապտերը շուռ եկաւ և հանգաւ։ Մթութեան մէջ լսւում էր միայն Իւրգիսի խռպոտ հևոցը և յատակին խփւող գանգի բախումը։ Այս ձայների շնորհիւ նրան վերջապէս գտան և բռնեցին։ Ինչպէս և առաջին անգամ՝ նա դուրս պրծաւ իրան բռնողների ձեռքերից և սկսեց կծել, մինչև որ ոստիկանի արձակ ձեռնափայտը չիջաւ նրա գլխի վրա և անշնչացած յատակի վրա չգցեց։

Գիշերուա մնացած մասը նա ոստիկանատանն անցկացրեց։ Նրա մօտ փող կար և շտապեց սուրհանդակի միջոցով Գարպերին մի տոմս ուղարկել, բայց Գարպերը շատ ուշ եկաւ։ Իւրգիսն արդէն դատարան էր ընկել և դատավճիռը լսել էր, որ պարտաւորում էր հինգհարիւր դոլլար նախապէս գրաւական տալու, մինչ որ կպարզուի նրա զոհին սպառնացող հաշմանդամութեան չափը։

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց Գարպերը։

— Ես մի բարեկամի եմ մի քիչ տրորել և

Ներս մտաւ մի մարդ լապտերը ձեռքին:

դրա համար էր ինձնից գրաւականն են պահանջում։

— Ես այդ բանը կասկածեմ... Չնայած, որ դուք սխալուած էք, ինարկէ, մի որևէ բան վճարելու... Ո՞ւմ հետ ես չափել։

— Մի վերահսկիչ էր... նա մի ժամանակ այստեղ էլ ծառայել։ Նրան Կօննոր են անւանում։

Փարքերը յետ յետ գնաց։

— Կօննո՞ր։ Փիլ Կօննո՞ր։ Մի՞թէ։

— Հէնց ինքը։

— Շատ պարզ։ Կօննորը Սկոլլիի սիրելիներից մէկն է... Նրա պատճառով դուք կարող էք ժամանակից աշխատանքի արժանանալ։

Վատ պատմութիւն դուրս եկաւ։ Իւրգիսը չէր իմանում ինչ անի։ Ինչպէս երևում է դատաւորի աչքում նրա թշնամին աւելի ուժեղ է եղել։

— Բայց ի՞նչ անենք,— հարցրեց նա բոլորովին շւարած։

Փարքերը մի քանի րոպէով մտածմունքի մէջ ընկաւ։

— Միակ բանը, որ ես կարող եմ առաջարկել, դա այն է, որ կաշխատեմ գրաւականը պակասացնել։ Դուք կարող էք այդ գումարը մուծել և յետո փախչել։

— Իսկ ի՞նչ կարժենա այդ բանը.— հարցրեց Իւրգիսը։

— Իսկ ինչքա՞ն ունէք։

— Ամբողջը երեքհարիւր դոլլար։

— Է, լավ, ես կփորձեմ։ Որպես զի ես ձեզ համար ծառայություն արած լինեմ ես ինքս ինձ ռիսկի եմ ենթարկում, որովհետև եթե Միքլին իմանա՝ նա երբեք ինձ չի ների այս բանը։

Իուրգիսն ստիպված եղավ պինջակի աստառին կարված իր չեկի գրքույկը հանելու և երեք հարյուր դոլլարի չեկ գրեց։ Գարպերն ամբողջ օրը սրան նրան դիմեց և վերջապես Իուրգիսին ազատեցին։ Նա բանտից վերցրեց մի դոլլար և տասնուչորս ցենտը, որ ընթացիկ հաշվում դեռ մնացել էր, նստեց տրամվայի վագոնը և Չիկագո գնաց։

Նա նորից անտուն թափառաշրջիկ դարձավ։ Նա խխունջի էր նման, որ յանկարծ զրկվեց իր կճեպից։ Նա յանկարծ կորցրեց այն բոլորը, ինչ որ իրան պաշտպանում էր և կեանքի կռւում իրան պաշտպանի դերն էր խաղում։ Նա չէր կարող աշխատանքի վարձվել, բայց չէր կարող նաև առանց պատժի գողանալ։ Նա բաժանում էր ամբոխի սովորական վիճակը և, սակայն, չպետք էր խառնւել նրա հետ, որովհետև մի ժամանակ նրանից բարձր էր։ Նախկին ընկերները չէին ուզում նրան ճանաչել։ Նրանք չէին ներում նրան իր դաւաճանութեան համար։ Բացի դրանից նա պետք է զգույշ մնար, այլապես նրան կարող էին ձերբակալել։

Իուրգիսը նորից սկսեց գործարանների դռների առաջ երևալ, բայց Չիկագոյում եղած իր

ամբողջ ժամանակամիջոցում երբեք նրա համար այնպէս անյուսալի դրութեան մէջ չի եղել աշխատանք փնտռելու համար, ինչպէս այժմ։ Տընտեսական ճգնաժամը բազմաթիւ անգործներ էր փողոց շպրտել. դրանց թիւը ամբողջ Ամերիկայում երկու միլիոնի հասաւ։ Անտառուհների Բակերում գործադուլը շուտով վերջացաւ, որից յետո շտրէյկբրեխներների մեծագոյն մասը դուրս շըպրտուեցին։ Տասն և հինգհազարից աւելի նեգրեր, գաղթականներ և ուրիշ տականքներ թափառում էին փողոցներում։ Ամեն տեղ Իւրգին ընդհարւում էր նրանց հետ և միշտ էլ վախենում էր, թէ մի գուցէ իրան կճանաչեն ինչպէս իրանց նախկին բծախնդիր պետի։ Անպայման նա Չիկագոյից կհեռանար, եթէ փող ունենար։ Բայց նա գերադասեց բանտ նստել, քան թէ ձմեռուա կէսին գիւղից գիւղ թափառել։

Տասն օր յետո Իւրգիսի մօտ ոչ մի կոպէկ չմնաց։ Նրան չյաջողուեց աշխատանք գտնելու, մինչև անգամ պատահական աշխատանք էլ չգտաւ։ Էլի, ինչպէս և այն ժամանակ, երբ հիւանդանոցից դուրս եկաւ, նրա առաջ կանգնած էր սովամահութեան կերպարանքը։ Նա դէպի Իւրգին էր մեկնում իր անողոք ձեռքերը։ Իւրգիսը կարծես թէ զգում էր նրա շունչը իր երեսին և երբեմն գիշերները վայրենի ճչոցով զարթնում էր քրտինքի մէջ կորած։ Նա դեռ քայլում էր, քայլում և աշխատանք էր խնդրում, միշտ պատրաստ

բոլորովին ուժասպառ վայր ընկնելու, պատառոտուած էր, մռայլ և թափառող հայեացքով։ Ուր որ նա գնում էր հանդիպում էր իրան ամեն կողմից նման մարդկանց, որոնք հարիւրներով վըժվժում էին քաղաքում։ Բանւորական ձեռքերի շատութիւնն զգացւում էր ամեն տեղ։ Այնպիսի քաղաքներ գոյութիւն ունեն, որտեղ մարդը նստած է ճաղերի ներսը, իսկ այն բոլորը, որոնց նա ձգտում է, դրսում են գտնւում։ Բայց կան և ուրիշ տեսակի քաղաքներ, որտեղ մարդու համար բոլոր անհրաժեշտ բաները ճաղերի ներսումն են գտնւում, իսկ ինքը դրսումն է գտնւում.

Անցան էլի մի քանի սպանիչ երկար օրեր։ Ամբողջ ժամանակ Իւրգիսն սոված էր մնում և նրա ուժերն արդէն թուլացել էին։ Մի անգամ առաւօտեան նա տարաւ ճակատագրի դաժան հարւածը, որը նրան վերջնականապէս յուսահատութեան հասցրեց։ Նա անցնում էր մի փողոցով, որտեղ ապրանքային պահեստատեղերն էին գըտնւում։ Մի վերահսկիչ նրան առաջարկեց այնտեղ ապրանք տեղափոխելու աշխատանքին, բայց հենց նոր էր սկսել իւր աշխատանքը՝ երբ նրան իսկոյն հեռացրին, որովհետև տեսան, որ բեռներ տեղափոխելու համար բաւականին ուժ չունէր։ Իւրգիսը մի քիչ էլ սպասեց և տեսաւ, թէ ինչպէս մի մարդ գրաւեց իրան առաջարկած տեղը։ Նա քիչ էր մնում երեխայի պէս լաց լինէր։ Ինչպէս երևում էր, իրան սովամահութիւն էր վիճակւած։ Նա յուսալու այլևս ուրիշ ոչ մի բան

չունէր։ Վախը բռնեց նրան, բայց շուտով փոխարինուեց անասնական չարութեան։

Այդ ժամանակ փողոցի մի անկիւնում նրան հանդիպեց թափառական մի կանաչի ծախող, որը գլխի վրա դրած կաղամբով լիքը լցուած մի կողով էր տանում։ Մի րոպէ Իւրգիսը կանգնեց, խլեց ամենամեծ կողովը և փախաւ։ Այս բանի վրա սաստիկ աղմուկ բարձրացաւ, ամբոխը քիչ էր մնում նրան հասնէր, բայց նա թռչում էր կարծես թևեր ունէր, և իրան հետապնդողների առաջը կտրեց, իսկ սրանց այս զւարճանքն արդէն ձանձրացրել էր և դադարեցրին իրանց հետապնդումը. Նա նստեց մի պատի տակ և կերաւ հում կաղամբի կէս մասը։

Բանի դեռ քիչ թէ շատ տաք եղանակներ էին լինում՝ Իւրգիսը փողոցումն էր գիշերում։ Բայց ձմեռւա վերջերին սառնամանիքներն սկըսւեցին։ Այդ օրը Իւրգիսը իւր վերջին երկու ցենտը պիտի մսխէր, որպէս զի կարողանար դարեջրատանը պատսպարւել։ Այդ դարեջրատունն ամբողջ Չիկագոյում ամենազզւելին էր, մի նեգր էր պահում։ Նա մտնում էր սեղանները և հաւաքում էր ճաշողների խմածի մնացորդները և լցնում էր առանձին տակառները։ Նա իւր դարեջրատանն այս հեղուկը բաժակը երկու ցենտով էր ծախում և մի բաժակ պահանջելուց յետո կարող էր ամբողջ գիշերը քնել այդ կիսադարեջրատանը կողք-կողքի մարդկային ամենտեսակի թափթփուկների։

XVII

ԼՈՅՍԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ

Մօտեցան պրեզիդենտի ընտրութեան օրերը։ Անկարելի է նկարագրել այն յուսահատութիւնը, որն ամեն անգամ բռնում էր անյաջողակին, երբ նա ընտրութիւնների մասին վէճեր էր լսում և տեսնում էր, թէ ինչպէս տների պատերը ծածկւում էին գունաւոր աֆիշներով և դրօշակներով։

Յատկապէս նա յիշում էր մի գիշեր։ Առաւօտւանից սկսած նա ողորմութիւն էր խնդրում, բայց ոչ ոք ոչինչ չտւեց. միայն երեկոյեան դէմ նա նկատեց, որ մի պառաւ տիկին տրամվայի վագոնից դուրս գալիս վայր գցեց հովանոցը և ձեռքի փոքրիկ պայուսակը, նա արագութեամբ մօտեցաւ և օգնեց տիկնոջն իրերը վերցնելու, իսկ յետոյ պատմեց իր տխուր պատմութիւնը։ Տիկնոջ հարցերին նա դրական պատասխաններ էր տալիս և տիկինն զգացւեց։ Նա նրան մօտակա էժանագին ճաշարանը տարաւ և վճարեց ճաշի փողը։ Նա ստացաւ սուպ, հաց, խաշլամա միս, կարտոֆիլ, և ստամոքսը լիքը լցւած դուրս եկաւ ճաշարանից. հեռւից նա նկատեց լապտեր-

ների լույսը, իսկ յետո երաժշտութեան ձայներ լսեց։ Նա իսկոյն դէպի այն կողմը վազեց և հասկացաւ, որ այնտեղ, իհարկէ քաղաքական միտինգ է տեղի ունենում։

Ընտրական կամպանիան ամբողջ Ամերիկայում այնպէս թոյլ էր գնում, որ մինչև անգամ թերթերը նկատեցին քաղաքացիների այդ զարմանալի անտարբերութիւնն ընտրութիւնների նկատմամբ։ Այդ տեսակէտից Չիկագոն մի առանձին բացառութիւն չի կազմում։ Այստեղ ինչպէս և ամեն տեղ, պատահում էր, երբեմն երեկոները քաղաքական ճառախօսը ունկնդիրներ էր ունենում ոչ աւելի, քան, թեկնածուներ ընտրողները*)։ Քաղաքական կուսակցութիւնների առաջնորդներն արդէն սկսել էին անհանգստանալ, բայց ինքը երկինքը նրանց փրկեց, փոթորիկ և ցուրտ անձրև ուղարկեց, որից յետո ժողովների բոլոր դահլիճները բռնեցին տաքանալ ցանկացող խեղճերով։

Իւրգիսը նստել էր մի ընդարձակ, դրօշակներով գեղեցիկ զարդարուած դահլիճում։ Հանրապետական միտինգ էր և ամբիոնում կանգնած էր այն ճարտասան հռետոր սենատորը, որը մի ժամանակ Իւրգիսի հետ մասնակցել էր Ամասունների Բակերում տեղի ունեցող ընտրութիւն-

*) Մ. Նահանգների պրեզիդենտի ընտրութիւնները տեղի են ունենում նախապէս նախնական ընտրողների ընտրութեամբ, որոնք պարտաւորւում են ձայն տալու այս կամ այն թեկնածուին.

ներքին։ Իւրգիսն ամբողջ ուժերն լարեց և աշխատեց հասկանալ, թէ ինչի մասին է իսկապէս, սենատորը խօսում, հասնելով մինչև մեծ ապագա խոստացող Միացեալ Նահանգներին, Խաղաղ Օվկիանոսի ափերին։ Նա պէտք է հետևէր այս ճառին հակառակ դէպքում քնելու իսկ արած կլինէր, իսկ նա գիտէր, որ հէնց որ քնէր, անպատճառ կսկսէր բարձրաձայն խռմփացնել։ Բայց նա բաւականին կուշտ էր ընթրել և սարսափելի յոգնած էր, իսկ դահլիճն այնպէս տաք էր թւում, և բացկաթառն էլ յարմար։ Նա սկսեց ուղիղ սենատորին նայել, բայց յանկարծ նրա կերպարանքը սկսեց մեծանալ, տարածւել, իր աչքերի առաջ պար գալ, [մի ինչ որ հարևան ուժեղ խփեց նրա կողքին։ Իւրգիսը ցնցւեց և աչքերը բաց արեց, բայց անմիջապէս նորից սկսեց խռմփացնել և սրանով աւելի կատաղեցրեց իր հարևաններին։ Վերջապէս ունկնդիրներից մէկը ոստիկանին կանչեց, նա եկաւ, բռնեց Իւրգիսի օձիքից և ոտքի կանգնեցրեց։ Այսպիսով որոշ չափով դալմադալ առաջացաւ, մինչև անգամ հռետորն էլ մի րոպէ դադարեց խօսելուց, մինչ որ նրան բացատրեցին, թէ բանն ինչումն է, իսկ խեղճ Իւրգիսին անմիջապէս փողոց շպըրտեցին։ Ծոծրակին ոստիկանից հարւած ստանալով նա ուսը դռանը խփեց և շատ վատ ճըռմլեց, յետոյ դժւարութեամբ ոտքի բարձրացաւ և գնաց։ Սակայն ամերիկական մեծ դեմոկրատա-

քայլ իրաւունքներն յարգելու համար, որ այս օրերում պետութեան գլխաւորի ընտրութեան պատճառով էր ճանաչում, նրան բայց և այնպէս այս անգամ չծեծեցին ինչպէս հարկն էր և ոչ էլ ոստիկանատուն տարան։ Եւ նա նորից սկսեց անձրևի տակ բաց գալ։ Որևէ տեղ թաքնուելու տեղ չկար, մտում էր մի որևէ բան անել, մի որևէ դահլիճ գտնել, որտեղ էլի սրա նման միտինգ տեղի պիտի ունենար։ Այս բանը նրան շուտով յաջողուեց։ Սակայն, այստեղ կարմիր լապտերներ և դրօշակներ չկային, չնայած որ փողոցում մեծ բազմութիւն էր խռնուած։

Իւրգիսը դահլիճ մտաւ։ Դահլիճում ոչ մի զարդարանք չկար, բայց, համարեա, բոլոր նստարանները բռնուած էին։ Իւրգիսն աշխատեց դահլիճի խորքում ամբոխից հեռու մի տեղ գրաւել, պատի մօտ։ Անապատակի նրա ուշադրութիւնը գրաւեց դահլիճում բարձրացող ամբիոնը։ Բոլորը վեր կացան իրանց տեղերից, սկսեցին թաշկինակները թափահարել և ողջունել մէկին։ Երևի հռետորն եկաւ, մտածեց Իւրգիսը։ Տէր իմ Աստուած, ինչքան յիմար են դրանք, որ սրա համար աղմուկ են բարձրացնում։ Ինչ կարելի է սպասել հռետորից և մինչև անգամ այն մարդուց որը պրեզիդենտ կընտրուի։ Իւրգիսը լաւ էր հասկանում քաղաքականութեան կուլիսային աշխատանքը։

Այդպէս էր մտածում նա, մինչ որ զգաց

քնելու նոր յարձակումը։ Հռետորը մի ինչ որ բանի մասին էր խօսում։ Նրա ձայնն երբեմն ընդհատւում էր ծափահարութիւններով և հաւանութեան բացականչութիւններով։ Նրա ձայնը կարծես թէ անչափ հեռուից էր գալիս։ Իրգիսի աչքերն փակւեցին, իսկ գլուխը մի կողմը թեքւեց։ Նա մի քանի անգամ ինքն իրան բռնեց այս դիրքում, բարեխղճաբար աշխատում էր չքնել, բայց իզուր։ Վերջի վերջո նրա գլուխը բոլորովին կախւեց և նորից քնեց։

Յանկարծ մէկը թեթև կպաւ նրան։ Նա վախեցած աչքերը բաց արաւ և սպասեց, որ նրան էլի առաջւա պէս դուրս կշպրտէին և ուսի վրա նորից կիջնի ոստիկանի ծանր ձեռքը։ Սակայն այդ չպատահեց։ Դրա փոխարէն լսեց հաճելի և քնքոյշ կանացի ձայն. «Բայց դուք փորձեցէք լսել, ընկեր, գուցէ հռետորի խօսքը ձեզ կհետաքրքրի»։

Իրգիսը յանկարծակի եկաւ։ Այս խօսքերը նրա վրա աւելի ուժեղ տպաւորութիւն գործեցին, քան թէ մի քիչ առաջ կրած վզակոթի հարուածները։ Բայց նա նայում էր առաջ և չէր համարձակւում շուռ գալ. այն ինչ սիրուն ուրախութիւնից թռթռում էր։— «Ընկեր»։ Ո՞վ կարող է իրան «ընկեր» անւանել։

Նա սպասեց այնքան ժամանակ, մինչ որ վերջապէս հաւատաց, որ իրան էլ չեն հետեւում, գողտուկ նայեց իր կողքին նստած կնոջը։

Նա գեղեցիկ և թանկագին շորեր ունէր հագած, իսկական տիկին էր։ Եւ սա է իրան ընկեր ան-ւանել

Բոլորովին յուզուած նա շուռ եկաւ նրա կողմը։ Բայց տիկինը, երևի, արդէն մոռացել էր իրան և ամբոխին էր նայում։ Հռետորը էլի մի ինչ որ բանի մասին էր խօսում։ Ինչպէս երազում, Իւրգիսը լսում էր նրա ձայնը, բայց ամբողջ ուշադրութիւնը գրաւել էր այդ կնոջը դէմքը։ Տիկնոջը մի ինչ որ անսովոր բան էր պատահել։ Նա նստած էր անշարժ, ինչպէս քար։ Նրա ձեռքերն այնպէս էին սեղմուած, որ թաթի ջղերն ուռել էին։ Նրա երեսը վառւում էր։

Ի՞նչ է պատահել նրան։ Ի՞նչ բան է։ Մի՞-թէ այս բոլորը հռետորի խօսքերի ազդեցութիւ-նից է առաջանում, իսկ հռետորը դեռ կանգնած է այնտեղ, ամբիոնի վրա։ Ինչի՞ մասին է նա խօսում։ Եւ Իւրգիսն առաջին անգամ սկսեց լսել։ Նա դեռ ոչինչ չէր հասկանում, բայց նրա հարևանուհու և միւս ունկնդիրների յուզմունքն անհասկանալի կերպով իրան էլ էր հաղորդւում։ Նա զգում էր իր հոգու զարմանալի ոգևորու-թիւնը։ Բարձրահասակ, նիհար հռետորն այն-քան էլ ազդեցիկ չէր իր արտաքինով. նա փոք-րիկ, նոսր մօրուք ունէր, որը երեսի բոլորքն էր գծում։ Բայց խորը նստած սև աչքերը փայլ-փլում էին, ինչպէս ածուխ։ Նա արագ էր խօ-սում, ոգևորուած,- արտայայտիչ շարժումներ էր

տնում երկար և բարակ ձեռքերով, կարծես թէ նրանցով ուզում էր ունկնդիրներին գրկել։ Նրա ձայնը խորն էր, մետաղեա երանգով ու հնչում էր ինչպէս եկեղեցական երգեհոնը։ Անցաւ մի քանի րոպէ, մինչև որ Իւրգիսն իւրացրեց հռետորի արտաքինը և սկսեց հասկանալ նրա ճառի իմաստը և այստեղ յանկարծ նրան թւաց, որ հռետորն անմիջապէս իրան է դիմում, Իւրգիսին, և իր ճառը յատկապէս Իւրգիսի համար է ասում։ Նա զգաց որ բռնւել է, խճճւում է այդ մարդու ճառի մէջ, ինչպէս թռչունն ակնատով բռնելիս։

— Այո, — ասում էր հռետորը, — դուք այսօր լսում էք ինձ, բայց վաղը կշարունակէք ձեր ուսի վրա դրւած տաժանակիր աշխատանքը տանելու, կվերադառնաք աշխատանքի համաշխարհային կապիտալի օգտին։ Անվերջ աշխատել ուրիշի օգտի համար, պատրաստել կեղտոտ, խոնաւ նկուղներում, կորցնել առողջութիւնը վնասակար արտադրութիւնների մէջ, ահա ձեր այժմեան վիճակը։ Աղքատութեան և սովի յաւիտենական սպառնալիքի տակ դուք զո՞հ էք դառնում ամէն մի պատահականութեան։ Օր օրի վրա կեանքն աւելի կատաղի է դառնում, աշխատանքն աւելի դժւարին։ Ձեզ ճնշում է շրջապատող հանգամանքների երկաթեա ձեռքը։ Անցնում են ամիսներ, տարիներ և դուք նորից էք գալիս այստեղ իսկ ես ահա կանգած եմ այստեղ և հար-

ցնում եմ, բռնակալն չե՞ն ձեր ազատութիւնը, վշտերը, չբացեցի՞ն ձեր աչքերը տեսնելու համար անարդարութիւնը և ճնշումը: Ես գիտեմ. որ ամենադժվարին արդէն արված է, արդէն շահագործողները դողում են վախից, էլ չեն հեգնում, խաբեբայութիւններն ու սրիկայութիւնները բացվել են, մնում է միայն ճշմարտութիւնը հաստատել: Եւ իմ ձայնը,- որ հնչում է այստեղ ձեր առաջ, միլիոնավոր մարդկանց ձայնն է, որոնք ուժից վեր ճնշման են ենթարկւում, և մինչև անգամ կյանքի ամենաչնչին բարիքներից են զրկւած: Ես խոսում եմ, այն բոլորի կողմից, ով վիրաւորւել է կյանքից, ով էլ ոչ մի յոյս չունի, ում համար ամբողջ աշխարհը բանտ է: Իմ ձայնը՝ դա փոքրիկ երեխայի ձայնն է, որը հենց այժմ մի որևէ տեղ գործարանում ուժաթափ է լինում, յոգնածութիւնից և տանջանքներից թուլանում: Իմ ձայնը դա մոր ձայնն է, որը մի ինչ որ խոնավ նկուղում կամ չոաքացող տանիքում լամպի լույսի տակ հենց այս րոպէիս կար է անում, կուրանում է աշխատանքից, որպէսզի մի կտոր իր երեխաներին սովամահութիւնից ազատի: Իմ ձայնը՝ դա այն մարդու ձայնն է, որը հենց հիմա մեռնում է կարիքից և զրկանքներից, ծւէններով է ծածկւած, իսկ իր հարազատներին ուղղակի կործանման դրութեան մէջ է թողել: Իմ ձայնը՝ դա ջահել աղջկա ձայնն է, որը հենց այժմ չափչփում է

այս սոսկալի քաղաքի փողոցները, նա ջարդուած է, կոտրուած և ստիպուած է ընտրելու կամ հասարակական տունը կամ լճի ալիքները։ Ես խօսում եմ դրանց բոլորի կողմից և ես ձեզ խնդրում եմ, որ լսէք ինձ, եթէ միայն ուզում էք, որ ազատուած էք բանտից, ստրկութեան շղթաները թօթափէք և լոյսն անցնելու ճանապարհը ճեղքէք։

Հռետորը մի վայրկեան լռեց։ Դահլիճում գերեզմանային լռութիւն էր տիրում և բոլորն էլ կարող էին միմիայն իրանց սեփական շնչառութեան ձայները լսել։ Յետոյ հազարաւոր ամբոխը հիացած սկսեց աղմկել։ Իւրգիսը նստած էր և չէր շարժւում, յամառութեամբ հռետորին էր նայում և գլխից մինչև ոտքերն ամբողջովին դողում էր։

Հռետորը ձեռքը նորից բարձրացրեց և նորից բոլորը լռեցին։ Նա շարունակեց։

— Ես դիմում եմ բոլոր նրանց, ովքեր արդարութիւն են փնտրում, բայց նախ և առաջ ձեզ, ընկեր բանւորներ։ Դուք ձեր սեփական փորձով իմացաք կեանքի այն ամբողջ չարիքը, որի մասին եմ ես խօսում և ձեզ համար սա դատարկաբանութիւն չէ։ Դուք բանւորներ, անխիղճ իշխանութեան առաջին զոհերն էք, նա շրջապատել է ձեզ իր ցանցերով և դրա համար էլ դուք պէտք է ինձ լսէք, դուք քրտնաջան աշխատողներ, որ մշակում էք այս երկիրը,

բայց նրա գործերը վճռելու ժամանակ ձայն չու-նէք։ Բախտն այնպէս է սնօրինել, որ դուք ցանում էք, իսկ ուրիշները հնձում են ձեր աշխատանքի պտուղները, դուք աշխատում էք, իսկ ուրիշները զւարճանում։ Ձեզ մօտ եմ գալիս ես և ազատութեան լոյս բերում, ես գիտեմ ձեր կարիքները, որովհետև ես էլ եմ եղել ձեր դրութեան մէջ և ապրել եմ ձեզ պէս. ոչ ոք այնպէս լաւ չգիտէ այդ կեանքը, ինչպէս ես։ Ես գիտեմ, թէ ինչ է նշանակում պատառոտուած կօշիկներով փողոցները թափառել, քարթու հացի փշրանքներով կերակրուել, նկուղներում կամ վագոնների տակ քնել, ես գիտեմ, թէ ինչ է նշանակում ցրտից ատամները կրճտացնել, իւրաքանչիւր րոպէ աշխատանքի տեսիլի ետևից ընկնել և մէկ էլ տեսնել, թէ ինչպէս իր լաւագոյն երազները հող ու մոխիր դարձան… Ես այն էլ գիտեմ, թէ ինչպիսի գնով է բանւորը կրթութիւն ձեռք բերում։ Ես ինքս ձեռք եմ բերել գրքերով ինձ քնից, կերակրից, վճարել եմ և հոգով և մարմնով, առողջութեամբ և անմիջապէս կեանքով։ Ես հիմա ձեզ մօտ եմ գալիս, ինչպէս լոյսի լրաբեր և չեմ կարող ձեր նկատմամբ կասկածել. ես գիտեմ ձեր մէջ հաւող ուժը։ Մենք արդարութեան և աշխատանքի նոր թագաւորութիւն կհիմնենք։ Ձեր աչքերից կապը ցած կնկնի, ձեր ոտքերը կթօթափեն իրանց ծանրացնող շղթաները, և իբրև ազատ մարդիկ,

դուք առա՞ջ շարժուեցէք լուսագոյն ապագային հանդիպելու համար։ Մարդը պէտք է ազատի ինքն իրան համար ստեղծած ստրկութիւնից։ Դուք արդէն էլ կախման մէջ չէք ընկնի. շողոքորթութիւնը ձեզ չի խաբի, սպառնալիքները չեն վախեցնի, դուք այնուհետև միշտ առա՞ջ կգնաք և ոչ մի քայլ յետ։ Սուրը բարձրացրած դուք կմտնէք ձեր եղբայրների և ընկերների շարքերը և աշխարհի բոլոր կողմերը կտանէք սոցիալիզմի դրօշակը, որն այսօր այստեղ ես ձեզ եմ յանձնում.—դա մի անգին նուէր է, որը ոչ ինձ է պատկանում և ոչ էլ ձեզ, բայց որը մարդկութեան անվթար ժառանգութիւնն է։

— Ընկեր բանուորներ, բաց արէք ձեր աչքերը, նայեցէք ձեր շուրջը։ Գոնէ մի հայացք գցեցէք այս քաղաքի փողոցների վրա որտեղ մենք այսօր միմիանց ենք հանդիպել։ Այս քաղաքում, հէնց այս գիշերը, տասնեակ հազարաւոր կանայք լցուած են զզուելի հասարակական որջերը, սովից չմեռնելու համար ստիպուած իրանց մարմինները ծախում։ Մենք այս գիտենք։ Աւելի վատ. մենք մինչև անգամ ծաղրո՞ւմ ենք այս բանը։ Բայց ախր այս կանայք մեր մայրերի ճիշտ նման են ստեղծուած, որանց թւում կարող են ձեր քոյրերը, ձեր աղջիկները գտնուել. ձեր աղջկան, որի ժպտացող աչքերն այսօր առաւօտ ձեզ ուրախացնում էին, կարող է պատահել, որ մի ժամանակ նա էլ այդպիսի բախ-

ափ արժանանան: Այսօր գիշերը Չիկագոյում տասնեակ հազարաւոր ազատ մարդիկ չիմանալով, թէ գլուխները որ կողմը խոնարհեցնեն, իզուր տեղն աշխատանք փնտռելուց յետոյ պէտք է սկսեն ողորմութիւն խնդրել. նրանք սովից թուլանում են և նախատեսնելով ցուրտ գիշերուա գալուստն սարսափում են: Այսօր երեկոյեան այստեղ Չիկագոյում հարիւր հազարաւոր երեխաներ ուժասպառ են լինում մի կտոր հաց ձեռք բերելու համար: Հարիւր հազարաւոր մայրերը կեղտի և աղքատութեան մէջ են ապրում. հարիւր հազարաւոր աշխատանքի անընդունակ ծերունիներ անհամբերութեամբ սպասում են մահուան, որը միայն կարող է չարչարանքից իրանց ազատել: Միլիոնաւոր մարդկանց գլխին՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, այստեղ աղքատութեան անէծքն է ծանրացած, որովհետև նրանց ամբողջ կեանքը կախուած է օրավարձից, որը հազիւ է բաւականացնում գոյութիւնը պահպանելու համար: Եւ նրանք մինչև իրանց օրերի վերջը պէտք է իմանան միայն միատեսակ ծանր աշխատանք, աղքատութիւն և սով, ամառուա շոգ և ձմեռուա ցուրտ, կեղտոտութիւն և հիւանդութիւններ, տգիտութիւն, հարբեցողութիւն և անառակութիւն: Սակայն, նայենք նկարի միւս երեսը: Ահա մարդիկ, հազարներ են, մինչև անգամ տասը հազարներ. նրանք այս աշխատանքի տէրերն են, նրանք տիրում են նրանց աշխա-

տանքի պտուղները և իրան՝ աշխատանքին էլ ուղղութիւն տալիս։ Որպէսզի իրենց եկամուտ ստանան նրանք չպէտք է աշխատեն, ամեն ինչ նրանց համար ինքն իրան է գալիս և իշխանութեան ապահովումը նրանց միակ հոգսն է։ Նրանք շքեղ պալատներում են ապրում, խեղդւում են առատութիւնից, բաւարարում են իրանց բոլոր քմահաճոյքները։ Որևէ մի զոյգ կօշիկի, ժանեակէ թաշկինակի համար նրանք աւելի շատ են ծախսում, քան թէ հարկաւոր է բանւորական մի ընտանիքի մի ամբողջ շաբաթ պահելու համար, նրանք միլիոնաւոր դոլլարներ են շպրտում ձիեր, աւտոմոբիլներ և զւարճութեան համար նաւակներ ձեռք բերելու համար. Նրանք ուրիշ էլի միլիոններ են ծախսում պալատներ կառուցելու համար կամ թէ փոքրիկ, փայլուն քարերի համար, որոնցով իրենց կանայք զարդարում են իրանց մարմինները։ Նրանց կեանքը մշտական որկրամոլութեան և ամենատեսակի առատութեան մէջ է անցնում, նաև իրանց եղբայրների կեանքի և աշխատանքի վատնութեան մէջ, մըշտական հրճւանքի մէջ, որը յետ վճարւում է ամբողջ մարդկութեան արցունքներով և արիւնով։ Ամբողջը նրանց է պատկանում։ Ինչպէս որ աղբիւրն առուներին է կերակրում, առուները գետերն են ընկնում, իսկ գետերը ծովերն են թափւում, այդպէս էլ անխուսափելիօրէն ամբողջ հասարակական հարստութիւնն անցնում է

նրանց ձեռքը։ Գիւղացին հողն է մշակում, հանքահորը նրա ներսն է փորփրում, ձկնորսն իր ցանցն է շպրտում, քարհանը քարեր է ջարդում, գիւտ անողը գիւտ է անում, գիտնականը հետազօտում է, բանաստեղծն իր երգերն է ստեղծում և վերջ ի վերջո մտաւոր և ֆիզիքական աշխատանքի ամբողջ արտադրութիւնը մի ընդանուր ուժեղ հոսանքի մէջ է հաւաքւում, որպէս զի սա էլ իր հերթին ընկնի մեր հասարակութիւնը հրամայողների իշխանութեան տակ։ Ամբողջ աշխարհի աշխատանքը նրանցից է կախւած և նրանք գայլերի նման վերջի վերջո ամբողջը լափում են։

Մարդկութիւնը նրանց համար է ապրում և նրանց շահի համար էլ մեռնում։ Նրանք ոչ միայն աշխատանքն են տիրում, այլև կաշառք տալով գնել են քաղաքական իշխանութիւնը. Նրանք ամեն տեղ օգտւում են իրանց հզօրութիւնից, որպէս զի կարողանան պահպանել և ամրացնել իրանց դրութիւնը, որպէս զի կարողանան ընդարձակել և խորացնել այն բոլոր աղբիւրները և ջրանցքները, որոնց միջով հոսում է և իրանց մօտ գալիս համաշխարհային ամբողջ հարստութիւնը—իսկ ձեզ, բանւորներիդ ի՞նչ է հասնում։ Դուք, կարծես թէ ծնւել էք միմիայն նրա համար, որպէս զի օրէցօր քարշ տաք ձեր բեռը, նման լծկան անասունների, և մեծ էլ հնարներ էք փնտրում մի կտոր հաց ձեռք բերելու հա-

մար։ Մի՞թե ձեր մեջ մի որևէ մեկը կգտնվի, որն այնքան է ստորացել և կոպտացել, որ կհավատա, թե իրերի այս դրությունը շարունակվելու է անվերջ և որ իբր թե ամբողջ մարդկության աշխատանքի արտադրությունները յավիտենական ծույլերին և ձրիակերներին են պատկանելու, որոնք երկրային բոլոր բարիքները շռայլության և զատարկապորտության մեջ են փչացնում։ Բայց եթե այս դրությունը պետք է մի որևէ ժամանակ վերջանա, այն ժամանակ ո՞ր ուժը կարող է վերջ տալ։ Դուք, գուցե, կարծում եք, որ ձեր տերերը մի օր կհասկանան իրանց սխալ լինել և կսկսեն իրանց հարստությունը ծախել ձեր դրությունը լավացնելու համար, կսկսեն համալսարաններ շինել, որպես զի ձեզ կրթություն տան, քաղաքական կուսակցություններ կկազմակերպեն, որպես զի սրանց միջոցով ձեզ դեպի յաղթանակ տանեն. բայց մի՞թե դուք չեք տեսնում, որ այս խնդիրը ձեր խնդիրն է և որ դուք ինքներդ պիտի անցնեք այս խնդրի վճռմանը։ Բայց հիշեցեք, որ եթե դուք ինքներդ ձեր վրա վերցնեք այս գործը, այն ժամանակ ունևորների իշխանության կողմից դուք ուժեղ հարվածի կհանդիպեք։ Ձեզ կհայհոյեն և կծաղրեն, կսպանեն և կհալածեն, ձեզ համար մորակներ, բանտեր և գնդակներ կպատրաստեն։ Ձեր ուսմունքի դեմ առաջ կբերեն կույրերի և անհեռատես մարդկանց սուտ ուսմունքները կամ թե սրիկաների մաս-

.Նա կանգնած էր տարածած ձեռքերով

ծին խօսքերը և սրանց բոլորին կգնեն ձեզ ճըն-շողները։ Ահա թէ ինչ զէնքով պիտի գործեն ձեր դէմ։ Ճանապարհը դժուարին է և երկար, բայց դուք բանուորներ, գոյութիւն ունեցող կարգի հարազատ զոհերը, դուք ոչ մի բանից չէք վախենա։ Մեր կուսակցութիւնը ձեզ իր մօտ է կանչում։ Մեր ձայնը՝ շղթաները շպրտող աշխատանքի ձայնն է։ Նա արդէն հնչել է։ Եւ այդ ձայնից զարթնած հսկան արդէն բարձրանում է տեղից, ուղղում է հզօր ուսերը, ոտքի է կանգնում և պատրաստւում է աշխարհը նուաճելու...

Յուզմունքից հռետորի ձայնը ընդհատուեց։ Նա կանգնած էր տարածուած ձեռքերով և կարծես թէ վեր էր թռչում։ Բոլոր ունկնդիրները տեղերից վեր թռան։ Ոգևորութեամբ բռնկուած նրանք ինչ որ բան էին գոռում։ Իւրգիսն էլ նրանց հետ միասին գոռում էր, գոռում էր ամբողջ կոկորդով, չհասկանալով սեփական խօսքերի իմաստը և իրեն բռնկած ոգևորութեան պատճառով չկարողանալով ուրիշ կերպ արտայայտուել։ Յանկարծ նրա աչքերի առաջ բացուեց փայլուն հորիզոն, նրա անցեալ տխուր կեանքի տեսիլները չքացան նա իրան մի հասակով բարձր, աւելի ուժեղ զգաց, զգում էր, որ դադարեց սովորական մարդ լինելուց։ Տանջալի ուրախութիւնը նրա ամբողջ մարմինն էր ցնցում։ Նա սեղմում էր բռունցքները և անհաւասար շնչում։

Իր ամբողջ, անցեալ կեանքի ընթացքում կրածներն բոլորովին ուրիշ գոյն առած անցան նրա աչքերի առաջից։ Ինչքա՜ն երկար է համբերել։ Ինչքա՜ն սարսափներ և տանջանքներ է տարել։ Բայց այժմ բոլորը, ինչ որ անցեալի անդունդն է ընկնում, բոլորը կմոռանա և նոր լոյս է փայլում գերեզմանային մթութեան փոխարէն։ Իւրգիսի հոգում բոլոր պատնէշներն ընկան։ Նրանցից բարձր, թւում է, թէ պարզ և մաքուր երկինք է գտնում, նա կանգնած էր այստեղ, վեր բարձրացրած ձեռքերով, նրա աչքերը փայլում էին, յուզմունքից երեսն էր կարմրել և նա գոռում էր, գոռում ինչպէս խելագար, մինչև այն ժամանակ, երբ որ ձայնը բոլորովին խզւեց և ուժասպառ նստարանի վրա ընկաւ։

Այդ գիշեր Իւրգիսը սոցիալիստ դարձաւ։ Նրա այս նոր ճանապարհի պայքարի և որոնումների մասին արժէր մի առանձին գիրք գրել։

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՑԱՆԿ

		Երես
I	Գաղթականները	5
II	Ամերիկական գործարանը	10
III	Նորապսակները	21
IV	Գոյության կռիվ	25
V	Դժբախտ դեպք	34
VI	Թոլերին՝ աշխատանք նկուղում	49
VII	Պոռնկության գործարան	57
VIII	Արդարությունը դեմոկրատիկ Ամերիկայում	72
IX	Կատաստրոֆի վախճանը	80
X	Վերջին փորձեր	89
XI	Թափառաշրջիկը	106
XII	Յուրգիսը Չիկագոյում	114
XIII	Յուրգիսը ծանոթանում է ոճրագործ շրջանի հետ	129
XIV	Դեմոկրատիայի քաղաքական մեքենան	137
XV	Գործադուլ ու շտրեյկբրեխերները	153
XVI	Նորից անգործ	171
XVII	Լույսի ճառագայթները	180

[1կ5Ծ5]

ՏՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

Типография „СЕРП МОЛОТ"
Армянский пер., д. 2. Телефон 2-78-28
Москва, 1928 год.

Главлит № 13127 Тираж 1000 экземп.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
„ՄՈՒՐՃ ԵՒ ՄԱՆԳԱՂ“

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Г. Айкуни . . . Титан (распрод.)
2. Ուօտ Ոյտմէն . Բանաստեղծութ. (սպառած)
3. Գ. Հայկունի . Գիշերային Թիթեռնիկ (սպառ.)
4. Խորհ. Հայաստանի Ցեղ. տարեդարձին (սպառ.)
5. Գ. Հայկունի . Բանաստեղծութ. Ա. Հ. (սպառ.)
6. Ն. Տէր-Մարտիրոսեան Քաղցի Օրերին
7. Վ. Վանդէկ . . Մի Գրական Գոմար
8. Մ. Գորկի . . Մայրը
9. Գ. Պլեխանով Գեղարուեստը եւ հասար. կեանքը
10. «Քուրա» № 1 . (սպառած)
11. Գ. Շամունց . . . Ճամփին
12. Ջէկ Լօնդօն . Երկաթէ Կրունկը (պատկերազարդ)
13. Բացիկներ Շահումեան, Պլէխանով, Գերասիմով եւ այլն
14. Վիկտոր Հիւգօ . . 93 Թիվը (պատկ.)
15. Կնուտ Համսուն . Երկրի Հիւթերը (պատկ.)
16. Ու. Սինկլէր. . . Ջունգլի (պատկ.)
17. Գ. Ուէլս . . . Կոյրերի երկիրը

ՏՊԱԳՐՈՒՈՒՄ Է

18. Ա. Բօգդանով . . Ինժէնէր Մէննի.

ԴԻՄԵԼ.—Москва, Мясницкая, Армянский 2.
Арм. издательство „СЕРП и МОЛОТ“

Я II / 67143